



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1787

1788

1789


1790

1791

1792

84


F-96





Ֆ Բ Դ Բ Ի - Ֆ Ե Բ Ի Կ

Ս Օ Ֆ Ի Ա



ԴՐԱՄԱ ՀԻՆԴ ՄՐԱՐՈՒԾԵՈՎ.

Թ Ի Յ Լ Ի Ա

Տպարան Տաւարտկիլտձէի, Կառավ. Ա. Մահտեսի-Յակոբեանց
Ալրդէնևկայս վաղ. № 1.

ԱԿ

ՖԼԻՔՐԻ - ՖԼԻՇԻ

Ս Օ ֆ ի Ա

ԳՐԱՄԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ,



Թ Ի Ֆ Լ Ի Ա

Տաղարան Կ. Տավարտկիլաձէի, Կապալ. Ա. Մահտեռի-Յակոբէանց

Սիրդէհսկայա փող. № 1.

1 9 0 4

566

И Н Ф О У

УЧЕБНОЕ ПОСОБИЕ

Дозволено цензурою Тифлисъ, 21 февраля 1904 г.

2888-57
8

11.1.1.1.1.1.

публично-политический журнал, издаваемый в Тифлисе, для распространения политических идей, опровергая их противоположные

առողջ մը աշխատ մէ աշխատ սկզբանը մաժար միջուկ
այսպիս նորին ապօնի նորէք միքարեաւ մէ¹
Տորոս մէն ինչպատի ըստ Աստվածուի գոյ թէ՛

յամից մը ըստ ընկալու են և հուսուր գոյի թէ՛
Հնարքան ով վիշտի ուոք զեր ուրած թէ՛ Են
Յոստան և թէ՛ ճիշտ ու նոր ուստ շոշտ բան
որսիունդ աշանոք ու առներեաւ մըն—
աշանան հնդ ուր քառ մի շա և նոր վեհ
ուոք վիշտ ու ճամբար նույն հնդ նոյն
**ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂԵՑՅՐՄ Վ. Ա. Պ. Ա. ՄԵԼԻՔ ԽԱՉԻԿ ԶՈՒՅԱ-
ՃԵՍՆԻ ՅԵՇԱ. ՅՈՒ. ԿԻՆ:**

այս բարձրաց նախարարական ուրած եղէ
և լուսուր ուր ճամբար կար, անձը շահան
բանք ու պատուի շնուրական միջանքը ու
Դագաղիդ ենք, զիրեզմանի փոսին առջեն, որու ուժուն
Թաղող, երզող եւ արտանուող լիսրի միջեւ, Արժուան և
Խոռված հոգուով, յուզուած առով ենք եւ թերեւն
Գրել խորյն սրանմիկ մաներ մը ենց.
Թէի խապառ վեսիս կայծեր դիո չեն մարած,
Արտէս քէւ դեռ չեն ելած ցաւն ու հառաչ,
Զուսին սակայն սիրտը ցեցող այն քափն ու ոյժ,
Որով պէտք էր ենց երգ հիւսէր մի քանիշիս.
Կոչում կ'ընեմ յիշատակիդ, հոգ չէ՛, հոգ չէ՛,
Որ սուրբ է ինձ, որ քարձ է ինձ ամեն քանձ:
Թարմ կեանեին մէջ, ուր սէր էր ենց աշխարհ համայն,
Ուր երազը՝ կոյսն ու ժպիս, իփոմբն ու խրախնանբն էր միայն,
Այդ կեանեին մէջ, այդ տից մէջ, աւա՛դ, աւա՛դ,
կտրեց երեսակ արեւոդ թէլի անզուք, անվախ,
Դու խնդրեցիր. «օսար երկիր, օսարի սուն
Են չե՛մ կեներ անիխական մահկանացուն,»
Ի զուր, երկինք խցեց ականչն, ու լո՛ւն մնաց.
Եւ ապա շղաձգաբար ոսքի կանգնած՝

Վերջին պահուն կանչեցիր. «ո՞ւ են մայր և Տոյր»:
Եւ տաղագին գետին ինկար խսկոյն անյոյս:
Ո՞հ, կը փղձկիմ, այդ լիւատակ ի՞նչ ազդու է,
Ռւսկից իմաստ կը բռնկին հետքին ետք.

Ո՞չ, վերջ կուտամ, եւ չեմ պատեր ենց այն վիճակ,
Թէ ի՞նչպէս գումը գտաւ մեր մէջ իր արձագանք:

Բայց ինչո՞ւ այս ողբն ու կսկիծ, ի՞նչ է աշխարհ.
— Մին վայելքներու եւ ցաւերու բնավայր,

Ռւմէ գոհ չէ՝ ոչ մի մարդ, դու ինձ հաւատա՛,
Նոյն խսկ անոնք, որոնք բազմած են ոսկի զահ.

Բոլորի յոյսը վերեւն է, այն անյայս Երկինք,
Ուր անվերջ դարեւ կ'ուզեն լլլալ Երջանիկ.

Եթէ այդպէս՝ անմեղութեան զաւակաց հետ
Ցնծա՛, ցնծա՛, գովէ՛ Աստուած դու առյաւէս,
Եւ Երկնային հրեաւանին մէջ մոռցի՛ր, հոգեակ.

Մոռցի՛ր խսպառ քո Երկրային այս լիւատակ:¹ թիւրուն²
Ց' տեսարիւն, կարօսակեզ դու իմ եղբայր.
Ց' տեսութիւն, մինչեւ Երկինք զզուենք իրաւ: բախուն

1 թիւրուն թիւրունուն մարտու թիւր

2 տեսուն նեց ուր թիւրունուն ուսուն ուրուն

առուն ու նոր նոր նեց ուր ուր ուսուն

նոր ու նորուն նոր ուրուն զաւո մարտու նորուն

առունուն մարտու ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր

ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր

ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր

ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր



պէսպէս և զունագեղ տեսիլներ, գեղարուեստական այլ և այլ հրապուրանքներ, բարոյականի վերլուծում և, ինչպէս մայրի ծառի ըռւն, սատերի միջից ուղիղ վեր բարձրացող անշեղ ընդհանուր իմաստ, հիմնական միաքը. ուրեմն քիմածին և հարևանցի արտադրութիւնների փոխարէն՝ կեանքի և հօգու խորաքանդակ արձանագրութիւններ, մտացածին անհրապոյը և տաղուուկ սուեղծումների փոխարէն՝ իրականութեան յափշտակիչ և ճարտար ստեղծադրծութիւններ, և այս ամենն՝ օրգինալ և բերմական ամենախիստ պահանջների չափերի վրայ ձեած:

Ինձ շատ ցանկալի էր սակայն որ այս գրուածքը կհանքի ծաւլից աւելի՝ կեանքի թեեռների վրայ լինէր գրուած, և գեղարուեստագէտը կեանքի պատկերից աւելի՝ վեղապուեստ 5) սեսնէր սրամէջ, արտաքին լուսանկարչականից աւելի՝ հոգերանալինը. կեանքի նոյնիսկ աջող պատկերացում, ուսումնասիրել, օրինակ մի հարտանիք, մի վեղծում... և նկարագրել մի վէպում կամ պիէսում, և կամ մի ընտանիքի պատմութիւն, վերցնել, օրինակ մի դէմք և, շատ քիչ փոփոխմամբ ու ընդհանրացմամբ, զրի առնել, դա շատ պարզ և հասարակ դործ է մի հեղինակի կողմից, մանաւանդ՝ եթէ տեղացի է այդ հեղինակը. լաւ գրալը գեղարուեստականի մէջ պէտք է ցոյց տայ իր չնորհը, եթէ սա բնականի սահմանից դուրս չփայ և պատշաճօրէն կը ձուլուի կեանքի հետ, և եթէ, աւելի լաւ լինելու համար, կը համապատասխանէ ինչպէս տեղական՝ նոյնպէս համամարդկային կեանքին:

Հասկանալի է որ այսպիսով ես ուզում եմ իմ հիմնակութեան մի եպական տեղ տալը բայց գեղարուեստագէտ կամ բեցէնդէն եթէ կամնուում է այդ մասին իր կարծիքն յայտնել, պէտք է, առանց ազդուելու իմ խօսքերից, լուրջ քննադատութեան ենթարկէ այս գրուածը, դիսէ նրան թէ թատրոնի մէջ և թէ թատրոնից գուրս,

5) Յատերը կեանքի պատկերն են կոչում գեղարուեստ, շատերն էլ նրա յաւելուածական մասը. ուրիշներն էլ ուրիշ կերպ են հասկանում գեղարուեստը այս մասին ուրիշ:

6) Եմ հայեացքը ներկայացման մասին գուցեափոքը ինչ տարրեր է ուրիշներից: Ժաղովքի մէկ մասն, աւելի անուն և թերուա գտակարգերն, սիրում են մերկ գործողութիւններ և ազմկալի խողեր, նրանք չեն գրաւում իմաստով և կեանքով, եռ նրանց չէ կարող զիջում անել. այսուղեղ գործողութիւն և կեանք, ինչպէս համաշափ տատիճանով միմեանց կեանք և ուժ տառող միտ և ոսկոր, իրար են լիտոնուած, և սրով ոչոք չէ կարող ոչինչ ժատել սրանում, թէ այս ինչ բան չէ եղած: Թատրոն գարդուն և իմաստալի կեանքի շարժուն պատկերացում պէտք լինի:

դիտէ նրան այն ամեն կողմերից, որոնց մասին ես խօսացի և այն կողմերից, որոնց մասին ես չխօսացի. դիտէ նրան իր սլաքափի, անձանց յարաբերութիւնների, համաշափութեան և կեանքից վերառած կասրների ընտրութեան ճաշակի կողմից. դիտէ նրան թէ իր աչքի բնկնող կողմերից և թէ իր մանր կողմերից, դիտէ մասն ամբողջութեան մէջ և ամբողջն մասերի մէջ, կապակցութիւն մասերի և ընդհանուր իմաստի մէջ, զրուածն՝ իր մերկութեան մէջ և իր զարգերի մէջ, վնարէ և վերհանէ վերջապէս ոճի բոլոր յատկութիւնները. Գերմանացի մի բանասեղծ մի ֆրանսիացի գրադին վերլուծելիս՝ ահն թէ ինչ մանրապնին երգով և նայում, ահն թէ ինչ յատկութիւններ է աեսնում նրա մէջ:

Profondeur, génie, imagination, goût, raison, sensibilité, philosophie, élévation, originalité, naturel, esprit, bel esprit, bon esprit, facilité, flexibilité, justesse, finesse, abondance, variété, fécondité, chaleur, magie, charme, grâce, force, coup d'oeil d'aigle (*Արատեսութիւն*), vaste entendement (*լայն միաք, Համկացողութիւն*), riche instruction, excellent ton, urbanité, vivacité, délicatesse, correction, pureté, clarté, élégance, harmonie, éclat, rapidité, gaité, pathétique, sublimité, universalité, perfection enfin...

Ի՞նարկէ, նայելով նիւթին և հերսոնների կրթութեան աստիճանին, այսափ բան չէ կարելի մինարել այս մէկ գրքում, ես սրանով կամեցայ նկատողութեան սրատեսութիւն մատնացոյց անել. ևթէ այսովիս սուր նայուածքով կը կատարեն քննադատներ իրենց պաշտօն, այն ժամանակ կտրծիքներ կարող են բաւական գոհացուցիչ լինել, «քաւական» եմ ասում, որովհետեւ զրոյի և քննադատի մէջ կարող են և առաջ գալ անհամաձայնութիւններ շատ գժուար կէտերում. օրինակ, զրուածքից եզրակացրած մտքի խնդրում, զեղարուեստի հասկացողութեան զտնազանութեան խնդրում, զրուածքի խնդրական արժէքի խնդրում: Առաջին երկուուր շատ առաձգական են, մին զրուածքի առարկացի մասին աղաս է մտածում, միւսը՝ նեղ, մին, նայելով ներկայումս տիրող ըմբռնումներին, գեղարուեստից շօշափելի օգուաններ է ապառում, որպէս զի մարդիկ չինասեն միմեանց, միւսն, համարելով առաջինին ստորին կարդի մարդկանց պէս մտածող, որ զրուածքի գեղեցկութիւնից համ չզդարում խրանքում.

ներ է փնտարում միայն, 7) գեղարուեստի գերը, գարձեալ իրրի գուտ, գեղեցկութեան և յափշտակութեան միջոցսի, մտքի և հոգու բարձրացման մէջն է տեսնում, երրորդն, ըստ Փիլիպովայութեան, գեղարուեստից ճշմարիտ, բարին և գեղեցիկն է խնդրում, չորրորդն թերեւ այն՝ որ նա աշխոյժ, եռանուդ և հետաքրքրութիւն պարունակէ, կոտ կարողանայ մերկացնել մարդկային հոգին և բացատրել այն ամեն՝ որի մասին նա խօսում է, մի ուրիշ ցանկանում է որ նա, նախորդից փոքր ինչ տարրեր, լաւ զգացման, մտածման և բացարութեան արդիւնք լինի՛, և մի ուրիշ այն՝ որ նա հաճոցք պառճառէ սրախն, կամ հաճոցք և օգուտ միանգամայն, մի այլ զարգացած արուեստամէր կամենում է որ նա, բովանդակալից կամ անբովանդակ, բարձր ստեղծագործութիւն, այսինքն՝ գուտ հանճար լինի, մի ուրիշ բարձր կրթութեան տէր լուրջ և խելօքը՝ (այժմեան մատերիալիստը) ուզում է որ նա միայն և միայն մարդկային կարիքներին ծառայէ, ուրիշներ էլ ուրիշ կերպ և հասկանում նրա գերը:

Ես, գրուածքի առարկայի մասին ունենալով իմ սեփական գատողութիւններ և գեղեցկագիտութեան նշանակութեան մասին իմ սեփական համոզումներ, այն է՝ մօտեցնել այս վերջինին, որչափ կարելի է, գեղարուեստի միւս տեսակներին 8], վէպն ու գրաման՝ նկարչութեան և արձանագործութեան, ուր առաջինների նկարը վերջիններից, համեմատաբար, տկար լինի թէն, և խմաստը՝ գորեղ, և քնարական բանաստեղծութիւն՝ երաժշտութեան, ուր, որքան էլ միմեանցից անբաժան, առաջինի խմաստը ուժեղ լինի թէն երկրորդից և նուագը՝ տկար, և որոնց մէջ, մանաւանդ վէպի և դրամայի մէջ, երբ հարկաւոր է լինում, տենդենցիան աներեսյթաբար մտնէ, այլապէս դուրս դրնտուի արուեստից,—ես հրաժարւում եմ առաջին եր-

7) Այսաեղ «գեղարուեստ» ը «գեղեցիկ գրականութեան» իմաստովն գործ է ածւում:

8) Ես կարծում եմ որ այսպէս էլ կըլինի նշա առաջադիմութիւն ժամանակի ընթացքում, ես կարծում եմ որ, ինչպէս արդէն բարսն էլ միկոնյն «գեղարուեստ» անունն են կրում, շատ հին է այս միտք, և ոչ բարձնած է այսպէս նրա նշանակութիւնը, ամենից շատ նա է աջողած, թերեւ Ալքոպիր, այդ կրքերի, ողբերգական վշտերի, բարկութիւնների, ցաւերի, վրէժինդրական զգացուների հուժկու արտայայտիչը, թերեւ այդ Ալքոպիր, այդ հանճարների տիտանը, որ գերբնականը բնականին մօտեցնելու հիգեր է թափում, որ արտաքին բերնի փոխարէն՝ հոգին է խօսապահեցնում, թերեւ այդ գերագայն հանճարը ծանօթ է եղած նկարչութեան և քանդակագործութեան մամուտային հսկաների. Միքէլ-Անդիլլոյի և Ռաֆայէլի հրաշակերտների հետ, և զգացած է սերտ կապակցութիւն իր և նրանց գործերի մէջ.

կու կէտերից, գեղարուեստի ըմբռնման և նրա առարկայի մասին միքան ասելուց, և միայն երրորդի, այսինքն՝ մի գրուածքի ո՞ր աստիճան լաւ լինելն իմանալու մասին եմ գալիս իմ կարծիքն յայտնելու և քննադատին խորհուրդ տալու որ նա համեմատութեան միջոցով այդ գործ կատարէ. համեմատութիւնը նա պէտք է կատարէ եւրոպական մէկ կամ աւելի նոյն սեռի երկերի հետ, և թուաբանական ձշութեամբ հաջուէ, թէ նրանց իւրաքանչիւրն գեղեցկութեան ինչ տարրեր է բովանդակում իր մէջ, տարբեր, որոնց քանակութիւն կարող է երբեմն շատ մեծ լինել. յետոյ ո էաք է նկատէ որ մէկի գեղեցկութեան այս ինչ տարրն՝ կարող է միւսի գեղեցկութեան այն ինչ տարրի արժէք շունենալ. օրինակ, մին կարող է ունենալ «զըւարձութիւն, քաղցրութիւն, միամտութիւն», միւսն, տեղի համեմատ, «թռիչք, կորով, յափշտակութիւն...». դրանք, իհարկէ, միւնոյն արժէքով չեն դնագատուում: Քննադատն այս եղանակով ոչ միայն երկու զրբի՝ այլև տաս, քսան հեղինակութիւնների կարող է նիշ դնել, այսինքն՝ ցոյց տալ թէ նրանցից ո՞րն է երրորդը և ո՞րն տասներեք քերորդը, ո՞րն է տասներորդը և ո՞րն՝ քսաներորդը:

Ոչ մի բան, իմ կարծիքով, այնքան դժուար չէ քննել, որքան գեղարուեստական գործեր (9), և գեղարուեստի գանագան ձևերից ոչ մին այնքան վերացական չէ, որքան *belles-lettres*. երկու արձանագործներ, երկու նկարիչներ աւելի հեշտ կերպով կարող են համաձայնուել և գնահատել արձաններ և նկարներ քան բելլետրիստներ կամ բելլետրիստ կրիտիկոսներ գեղեցիկ զրականութեան արտադրութիւններ: Բելլետրիստներ նրանց պէս աչքի նայուածքով չեն քննում արձաններ և նկարներ, ուր իդէա կամ հոգեբանութիւն եթէ լինի է, զրանց է լինում և այն էլ շատ քիչ չափով, նրանք գեղարուեստական մի զիրք պէտք է քննեն, որ ծայրէ ի ծայր իմաստ է. մասաւոր և հոգեկան աշխարհներ, մարդկային մասածումներ և զգացումներ, մի և նոյն սեռի զանազան տիպեր, մի և նոյն տիպի զանազան տեսակներ, մի և նոյն տեսակի զանազան բնաւորութիւններ, մի և նոյն բնաւորութեան զանազան գծեր... և այս բոլորն (10), ինչպէս

9) Օրինակ, քննադատը գիտական գրուածների մէջ ակնյայտնի ձշմարտութիւններ է քննում, մինչդեռ գեղարուեստի մէջ՝ երևակայական ձշմարտութիւններ:

10) *Belles-lettres*-ի կարգից դուրս պէտք է հանել հեքեաթներ կամ հէքիսաթանման գրուածներ, դիւթագէպեր... որոնք սուտ են և կեղծ, և որոնց մէջ չկայ ոչինչ, բացի մի խորհրդից կամ խրատից, որով այնքան հեշտ է նրանց քննադատելն, որքան զրելն: Իմ այս հասկացողութեամբ, *Belles-lettres*-ի կարգ չպէտք է դասել նաև ըօմանտիկ և նոյն իոկ պատմական երկունքներ, քանի

ասացինք, նրանք չեն տեսնում, չեն չօջափում, այլ մաքով, հսկով պէտք է տեսնեն և լշունը, իսկ եթէ թատրոնական է այդ գործը, այն ժամանակ լրաւուծ տիրանջով, աչքով, սրտով և մաքով պէտք է քննեն : Քննադատը, եթէ լիզուին էլ կամենում է ուշադրութիւն դարձնել, ինչ որ այնքան կարենը է մեղ համար, քանի որ նա քաղաքակրթուուծ ազգերի լեզուների վերջնական հասաւուագոյն ձևն ու զեղեցիկութիւն ստանալուց դեռ չատ հեռու է, նա իր վճիռը տալուց առաջ, պէտք է բժրունէ լեզուի փիլիսոփայակրթիւնը, պէտք է խառնկ կերպով պատկերացնէ իր մաքի առաջ, թէ 1) ինչ է զրաբու, 2) ինչ են զաւառաբարձրաներ և 3) ինչ են այժմեան գրականները : Այդ երեքն էլ իրենց կութեամբ մի և նոյն բաներ են 11). Թէ զլուրառ և թէ այժմեան երկդղի գրականները, իրաւ-

որ սրանք ևս չեն նկարագրում այն կեանք, չեն կազմում այն շաբաթում, որ կայ կամ եղած է, ներսոներին չեն յուզում, չեն ներշնչում այն չափով, որ սահմանում է ըլտիզմ, մարդիկ և նրանց գործերը չեն հնթարկում ժամանակի և միջավայրի ազգեցութեան այնպէս զիտնականորէն, ինչպէս յայց է տալիս նատարալիդմ, ներկայացնում են կամայական չարադրութիւններ և ոչ մարդկային էլութեան ճշմարիտ նկարներ կամ նկարագրութիւններ, ինչ որ պահանջում են եվալս-arts: Belles-lettres-ի կարգը չափար է զնել և, նոյն իսկ հանձարեղ, այն զաւեշտական կամ երդիծաբանական ստեղծագործութիւններ, որոնց ներուսը, շատոնք ամբողջ ներսոներ, այնքան հրաշալի կերպով ծիծագում և ծիծակեցնում են մեզ, որի կամ որոնց նմանը մի անգում էլ մենք չենք տիսել կեանքի մէջ : Այսպէս, ինկական զեղարաւեռափ տաճար հազու կարսղանում են սոք կոխել, երբեմն չեն էլ աջազում մտնել, մինչեւ անդամ զեկա դենտական (décadence) երկեր և սիմբոլական երեակայութիւններ :

11) Այժմ գտնէ ներելի չէ այլիս սշոքի ունենալ այն անհեթեթ միար թէ բարբառներ կամ զաւառաբարձրաներ զրաբուից աղաւազուծ, առաջ եկածին այս շատ պարզ ինդրի համար բաւական հմ համարում դնել այսեղ այս մի բանի տողերը :

La langue générale, qui n'est qu'un des dialectes arrivé par une circonstance quelconque et avec toute sorte de mélanges à la préséance, est à ce titre prosterieur aux dialectes. Aussi quand cette langue générale se forme, les dialectes déchoient et ils deviennent des patois, c'est—à—dire des parlars locaux dans lesquels littéraires importantes ne sont plus traitées. "

Առարտկոյս, մեր զաւառաբարձրաները սերունդ են մի շատ հին ժողովրդական, աշխարհիկ լիզուի, բայց ոչ զրաբուի, մի աշխարհիկ լիզուի, որ շատ քէ նկատելի վնիսիսաթիւններ ունեցած է իր եղարարակից հնդ—երոպական ներից :

քանձիւրն մի բարբառից կամ գաւառաբառեց, idiomē-ից կամ dialecte-ից կազմուած, աղստեսաորէն կոկուած և հարստացըրած լեզուներ են, ուր մասն են նոն ուրի բարբառներից և օտար լեզուներից չատ նիւթեր և ձևեր. բարբառները, պիներով ամենքին դիւրանականալի, չինելով բաւական հարուստ, լինելով ճամպաղ, ուամկական, մինչեւ իսկ երեխայրական, միտանակուելի են մի ընդհանուր խոտացրած, կերտաւած, հարուստ, թէեւոչ առաջինների չափ կենդանի, կէսարուեստական լեզուով: Գրողն (2).

12) Եկուական ինդիբը երկար գրագեցրած է և եւըսպացընկըին. Քրանսիայում աշ մի գիտութեան վրայ այնքան չէ գրուած, որքան լեզուի վրայ. ամբողջ երկու գար գրացնցրած է Քրանսիացիներին: Եկուագէտները անցած գարում մերկացրին լեզուների զաղանիքը, բայց այդ խոկ նպաստաւոր հանդամանքը, որ տանում էր այդ գիտիսափանների միաքը գէպի լեզուների սրբանը և բերում էր գէպի նրա ճիւղաւորաւոների չափահան հասակը, չլաւեց հարցը, այն հարցը թէ ինչպէս պէտք է կազմէլ մի գրական լեզու, այս մասին եթէ հարց առաջարկուեր, զուցէ միատեսակ շպատասխանէին Adolphe-Pictet, Ernest-Renan, Max-Müller, Johann-Martin-Sehleyer...: Նրանք ուսուցանում են լեզուի ծնունդն ու աճումն ոչ առանց մեծ զարմանիքի, երբ նրա մայրն և զայեակը բնութիւն և նախնական մարդն է եղած: Նրանցից մին տում է. Quand les grands philosophes sont impuissants à analyser le langage, comment les enfants sans expérience auraient-ils été capables de le créer? Եւ մի երկրորդ առում է: Le mécanisme de l'intelligence est encore plus difficile à analyser que celui du langage, et pourtant l'homme étranger à la psychologie sait faire jouer aussi bien que le meilleur philosophe tous les ressorts de son esprit. Եւ մի այլ մեծ նկատում է: Il est évident aussi que les chiens, quoiqu'ils ne parlent pas, peuvent comprendre beaucoup de ce qu'on leur dit, et qu'ils connaissent leur propre nom et exécutent les ordres de leur maître; d'autre part, certains oiseaux, tel que les perroquets, peuvent prononcer tous les sons articulés, par conséquent, bieu que dans discussions philosophiques sur le dignité de l'âme humaine, nous puissions nous retrancher derrière le langage articulé comme dans une position inexpugnable, il est tout naturel...

լինչպէս պէտք է զրեն կամ մշակեն այժմեան գրականները, որպէսզի նրանք չլինին այսանդակ, խառնիճաղանձ, հետեաբալ անքնական և դժուարամարսելի, այլ, որչափ կարելի է, կենդանի, կենսունակ, բնական, ճկուն, այսինքն՝ ամեն գաղափարը յայտնելու ընդունակ, ուրեմն ամենքին գիւղահասկանալի, ուրեմն կեանքի բոլոր կարիքներին և պահանջներին ծառայելու յարմար և ուրեմն ընդհանուր առաջադիմութեան արագ սատարող և նպաստող լինին:

Պէտքէ, իհարկէ, զործածեն այն բառերը, որոնք կենդանի և դիւրմրունելի են, և նրանք՝ որոնք գաղափարներ գօհացուցիչ կերպով յայտնելու առանձնայատոկութիւն ունեն, պէտք է շարեն բառեր միմեանց ետևից այն կարգով կամ այն կարգերով, ինչ կարդով որ ժողովուրդն է շարում 13), պէտք է, հարկաւոր եղած ժամանակ, փոխառութիւններ ևս անեն, այսինքն՝ ուրիշ բարբառներից բառեր վեցնեն և զործածեն, փոխառութեան մնեծ սեղանատուն գաւառաբառաններ լինելու են, յետոյ՝ մոս սամք հին հայերէն և մատամբ՝ օտար լեզուներ: Փոխառութեան մէջ պէտք է զանազանութիւն դընեն բառի, եերականական ձեւի, նախադասուրեան, ոնի, ասացուածի եւ յատկաբանուրեան մէջ: Բարբառներից այդ բոլորն էլ կարելի է առնել գեղեցիկ ընտրութեամբ 14], բայց գրաբաւից՝ ոչ,

Երբ այս փիլիսոփանները այսպէս լեզուի ծագումն և զարդացաւմը, մարդկային, ինչ-ինչ կենդանիներից մի փոքր բարձր, իմացականութեան ասախճանաբար ընդգարձակուսդ շավիք մէջ, թնութեան են վեցագրում, որին մարդկային բարձրը միտք, մշակուած միտք, զեւ մի վերլուծող էլ չէ հղած, ուստի զարմանալի չէ որ ընութեան և մարդկային մտքի զործակցութեամբ կազմուող մի գրական լիզու մեղանում ևս, ֆրանսացոց պէս, երկար վիճաբանութեան տոիթ տուածէ, և Այտքնեան, Քարագաշեան, Ք. Պատկանեան, Նազարեան, Ալիշան, Արօվեան... քիչ կամ շատ զանազանութեամբ, միմեանց հակառակ ճառած և զրած են այնպէս, ինչպէս չպէտք էր ճառէին և գրէին, և զարմանալի չէ որ, այդ քարոզներից տեսիլ, զրողների ընազդն ու հաւաքական հանճարն է, որ ընութեան մզումով, մէկ կողմից, զտիչ մեքենայի պէս, հետպնետէ մաքրել է լեզուն, միւս կողմից առաջնորդել է նրան գէպի ընական ուղին, և այսպիսով Թիֆլիս, Գոլիս, Վհինետիկ և Վիէննա միմեանց է մօտեցրել: Այդ տիներն ուղին է ահա, որ ես նշմուրելով՝ փորձում եմ մատնացոյց անել: Եթէ գիւղութիւն ունեցայ գրել և հրատարակել «Հայ գրականութեան Արքելեան նիւոյ» անունով աշխատութիւնս, ես ընդարձակ էջեր կընուիրեմ սրան:

13) Մի լեզու լաւ հասկանալու և հասկացնելու առաջին պայմանն այս է, չէ՞ որ երբ մի օտար լեզուով ենք խօսում, աշխատում ենք որ բառեր նոյն լեզուի օրէնքով շարենք:

14) Գուառապերբառաններից կարելի է օգտուել վատ կերպով և լաւ կերպով, լաւ կերպով՝ երբ զրողները տեղեակ են լինում գրացի աղգերը լնդուներին և ճանաչում են

միայն բառեր, և այդ բառերն էլ՝ (գոյականներ և բայեր) չհոլովուած. շտոնաբնուած վիճակի մէջ 15), իսկ օտար լեզուներից՝ միմայն բառեր, և երբեմն էլ, երբ չառ գեղեցիկ և սովորական ևն լինում, ձևուեր և միջազգային բարձրուածներ 16):

Յետոյ ինչ պէտք է անեն, որպէսզի մի այդպիսի կենդանի և ընական լեզու սիրելի լինի ժողովրդին, ժողովուրդը հասպուրուի, սքանչանայ, դիւթուի նրանով, փնտրէ և հապուի նրան:

Գրադէտը, առաւելապէս գեղարուեատական զրուածների մէջ, պէտք է տայ նրան գեղեցիկագիտական դարձուածներ, ճարտասանական ձեռք և բանաստեղծական երևէջներ, պարզի հետ պէտք է երբեմն խառնէ և միջակը, միջակի հետ և վսեմն...: Ժողովուրդին միշտ պարզ կերակուր և ցամաք հաց տալ չէ կարելի, կը զգուի նա,

բառերի ծագումն, և ծանօթ են լինում նաև փոքր ի շատէ ուրիշ բարբառների հետ, այնպէս որ մի նոր բառ գործածած ժամանակ՝ կարող կը լինեն գիտնալ թէ նրանից լաւ կամ նրա շաղաւաղուածն շկայ մի ուրիշ բարբառում, և եթէ օտար բառ է, ինչ նշանակութեամբ է զործածում նոյն աղքի մէջ, գոնէ ներկայումս: Լաւ կերպով օգտուած լինելու համար, եթէ ոչ լեզարանչիւր գաւառաբարբառն՝ դոնէ խըգանչիւր բարբառն պէտք է հաւասարապէս մասնակցի, նիւթ, միս, սակոր և արիւն տայ այդ նոր լեզուին, որպէս զի ամեն գաւառացին իր կենդանի լինան տեսնէ այդ նոր լեզուի մէջ, որպէս զի գրականի կշիռին մէջ դաւառականները հաւառարակութիւն պահեն, և գրականի ու գաւառականների մէջ առաջ գան համարիւն ազգակցութիւն: Անշուշա շատ գդուար գործ է այդ յանձնաբարութիւն, ֆրանս, անգլ. և գերմաներէն իսկ այդպէս ներդաշնակ կերպով չեն մշակուած, սակայն դա ժամանտիկ սխալն է եղած, և չէ կարող մեզ իբրև օրինակ ծառայել: Ներկայումս, այդ անիբարդուելիք բարիշը ման տեղ, ինչ որ կարելի է անել, այդ այն է որ հայշաս մի կենտրոնում, ուր ամեն դաւարից մարդիկ կան, կարելի է հաւաքական ուժով ձեռնարկել ընդհանուր բարբառների համարակութիւն:

15) Եւ տրդէն գրաբառից ինչ որ առնուած է, բաւական է, միայն շատ հարկաւոր գէաքում, օրինակ, երբ հարկաւոր է լինում մի օտար բառ թարգմանել, մի ածանցական կամ բարդ բառ կազմել, պէտք է վերցնել այնպիսի բառեր, որոնց նշանակութիւն խոտակ և բացըռը է, և այնպիսի բառեր, որոնք ո. գրքի և եկեղեցւ միջոցով ընտանի են լինում ժողովրդին:

16) Փօխառութիւն երպարականներից, մանտաւանդ հայերէնին օտար և հեռաւոր ընտանիքներից, որքան քիշ՝ այնքան լաւ, գաւառական թէ՝ գրաբառ, հայերէն բառերը, սոյն իսկ գրերից ի վեր առելեւան լեզուներից հայերէնի մէջ մասած բառերը, իբրև միենայն ժագագուրդիք բերնում կազմուածներ, զրութեան շէնքին մէջ կպատմ են այնպէս ամրակու, միապաղաղ, ինչպէս միենոյն բովից զովու եկած կզմինտրներ, իսկ օտար բառեր շեն միանում այնպէս եռացած, շարուում են նրանց հետ, ինչպէս քար կզմինտրի հետ: Եյգէս է և ուրիշ լեզուների համար. օրինակ, սուսերէնի համար աւելի մարսելի են իր բարբառային, հին ուլաւօնական, ազգակցից բոհեմական, լեհական, բուլգարական բառեր, քան լատինական բառեր:

պէտք է նրա հացի հետ չաքար խառնել երբեմն, նրա կերպուրների վրայ իւղ գնել երբեմն, նրան և երբեմն խմելու գինի տապ...: Տարրառներում ևս, մինչ անգամ առփորական գրայցներում, խառն և համընթաց են դրանք. մարդիկ միշտ մը լենոյն արամադրութիւն չունին, միշտ մինոյն ձեռվ չեն խօսում, բայոր մարդիկ մինոյն սիրու, մինոյն միաք և մինոյն լեզուն չունին, ասոն և ցամաք խօսողի մօն կեցած է միշտ բանասեղծ, բուրջ արամաբանի մօտ՝ և հաւետոր:

Այս խորհրդածութիւնից յետոյ, գեղարուեստակետքննադատը, աչքերը պէտք է սիեռէ հեղինակի վրայ թէ նա ինչ ընդունակութեան և ինչ ուսումնական կարողութեան առեր է, ինչ դեր է խաղում նա և ինչ գեր կարող եր խաղալ նա լիզուի և գրականութեան մէջ, աչքի առաջ ունենալով, և նրա կետնքի պայմանները:

Եթէ նա հասարակ մտքի տէր է, և, իր անձուի նշանակութեամբ, մայրենի և եւրոպական ոչ-առաջնակարգ մի լիզուի է ծանօթ միայն, նա հասարակ բանուորներիցն է, նրանից մեծ բան չալէաք է պապաէ, բաւական է որ նա լիզուին վնաս տուած չինի ևթէ նա ասպանդ (է 17), և իր ընդարձակ նշանակութեամբ, մայրենի և պետական լիզուին միացնում է և լուպական մի առաջնակարգ լիզուի բաւականացափ հմտութիւն, նա առաջնակարգ դեր խաղացողներիցն է, նա տասնեակ հասարակ բանուորներ արժէ, նրանից շատ բան պէտք է պահանջէ, նա այն է, որ կարող է լիզուի մարմին, առողջապահութեան չափաւորութեան մէջ, պարուսացնել, գեղեցկացնել, շունչ փշել և կենդանութիւն տալ նրան, իսկ ևթէ նա սովորական առանցքներից շատ բարձր է, և, աւելի կամ պակաս չափով, դիսուակ՝ արևելեան և արևմտեան կարենոր լիզուներին, և գուլիցցազն է նա, տասնեակ տաղանդներ արժէ նա, նրանից պէտք է ինդրէ լիզուի բարգաւաճումը, նա տաղանդների շնածը քանդում է յաճախ և փրկում նրա տեղ, նա նրանց հարթածը փայլեցնում է, յղկածը՝ զարգանկարում է, հիւլին ալկօոլ-ի է փոխում, շունչը հողու... նա, ևթէ նոյն լիզուի հակառակ էլ շարժի երբեմն, էլի գրողներին էլ ըմթերգողներին էլ կրիկ կը տայ այդ. նա նոյն փհճապետ կը հանդիսանայ լիզուի համար, ինչ որ էր նա

17) Սակածադործութեան համար գերակշիռ տարրը տաղանդն է հանդիպանամ, լիզուի մշակման համար լիզուական հմտութիւն և ճաշակ, թէև երկուսն էլ անբաժան են միմեանցից, և մին պատնց միւսի, մանաւանդ լիզուի մշակումը, կըկաղէ:

18) Ամեն լիզուն ունի իր առաւելութիւններ, իր բազմագիմի օգուտուներ և գեղեցկութիւններ, որոնցից կարող են առաջօրէն օգտունել գրադի միտքն է դիմիչը:

գեղարվեստի համար. Les règles sont les lois de l'empire des arts, le génie est le souverain, et il a le droit d'en changer les lois.

Քննադատութեան յառաջադիմութեան համար էր անշուշտ որ այս յառաջարանը այսքան երկարացրի, և, ոչ զբաժի կամ դրբերիս անձեռնմխի լիութեան համար, քննադատութեան առջև դժուարութիւններ յարուցանելու: Քննադատութիւնը մեր մէկ ապարաժնի մէջ դոյութիւն չունի արգելն, և երբ, իբր բացառութիւն, տեղի էունենում, կատարում է հին և միջին դարերի քննադատութեան եղանակով, որովհետեւ, բացի քննարականից, զոյութիւն չունի այնտեղ և գեղարվեստական գրականութիւն, յարունի պատճառներով, միւս աղդաբաժնի մէջ քննադատութիւն գոյսութիւն ունի. և ուր երեսում է բարական մéthode, կամ, ինչ որ նոյնն է նշանակում՝ judgement, classification, explication, բայց իր խորակութիւնների մէջ զուգընթաց է գնացած—վէպ, ոտանաւոր և դրամա միասին առածնախնական, անարուեստ, անտաղմադ, անտարը, ցանցառիմաստ կամ չնշինիմաստ գեղարվեստական գրականութեան: 19) Պէտք է զուրս

(19) Գրողների այն մասը, որ միջնադարդ կամ բարձր կրթութիւն է ստացած, բայց աշակերտութեան և ուսանողութեան ժամանակ սովորածներից, կայդացոտ է, կամ անզեկալիթիւններ ստացած է ուսու գրողների և ուսւերենի, մտասմբ էլ գերմաններնի, միջոցավ, եւրոպական մի-երկու ազգերի մի-երկու հոչականութերի մասին, այսպիսինների հրկներում, որոնց թիւն արդէն, թէ հների և թէ նորների մէջ, սահմանափակ է, և համեմատելով հետագաների հետ, զոնէ քանակով, շատ գործեր էլ չեն արտադրած, անհնաւոմ են գեղարվեստական միտկողմանի անզեկութիւններ և անգործածելի ուղղութիւններ, իսկ զողոնների այն մասը, մեծագոյն և շատ գրքեր գրող մասը, որ, ուսման մի թեթիւ պաշարի հետ, ծանօթ է եղած հայերէնի և առուներէնի հետ, քիչ բացառութեամբ, անտեղեակ է եղած օտարազգի գրողների գործերին և ուղղութիւններին, այսպիսիններ գրած են, առանց դիտնայու, թէ ինչպէս պէտք է գրեն, գրած են բնագրօրէն, տաղանդ կարծելով իրենց, ունենալով մօգէլ իրենց հայազգի նախորդների ոչ-գեղարվուեատական երկերն, և զրա համար էլ սրանց հեղինակութիւններ խառն են ամեն տեսակ ուղղութիւններով, այսպէս առած, անուղղութիւններով, ապակայն սա ևս պէտք է առել որ թէ առաջինների և թէ վերջինների գրչի տուրական օգտակար է եղած, ժողովուրգը և այն ամեն, ինչ որ այսպէս կամ այնպէս ժողովուրգին մօտիկ է, այն թէրութեամբ որ յանախ միննայն բանն են ասած, և ոչ թէ կետնքի նորնոր ծարքեր երեան հանած, երկրագործներ են գբանք որ մշակած և ցանած են հող ոչ-լաւ սիսաեմավ և պարարտացուցիչ միջոցներով: Իսկ սրար և մտքի ուժի կողմէց, ես չեմ կարողանում նրանց և ոչ մէկին «տաղանդ» կամ «բանաստեղծ» կոչելու, զոնէ այն նշանակութիւններ ինչ որ եւրոպացիքն են հասկանում, ում հե-

դայ քննադատութիւնը այդ աւանդակամն շրջանակեց, և աշխատի ընդարձակել իր լեզուական և գեղարուհստական հմառութիւնների պէս, փոքր ինչ ինքնուրոյն յինել, չվեկնել մեքենապէս այն, ինչ որ անպիր բրած՝ ասած է մի ուրիշ գործի համար:

Դարսի պիեսներիս կատարելիք դերին՝ պէտքէ ասել որ այդ գործը անիրադորժելի մի գաղափար պիտի մնայ առայժմ, թէ կուզդրանց ամեն մին այն աստիճան աջող լինի, որ կարողանայ Եւրոպայում մի դրամատուրգի տալ այնքան հոչակ, որքան նիւթական ապահովութիւն. ագդի մէկ հաստուածը չունի թատրոն ներկայումս, միւսն ունի թէն, բայց ոչ, կարծում եմ, պատրատի հող իմ գործերի համար. այստեղ, բացի այն բանից, որ, իբրև բուտինականներ, ի հարկէ ոչ ամենք, առաջիմութիւնից վախենում են, բացի այն պատճառից որ թատերգութիւն ընդունում են որպէս գոււրաճախօսութիւն և որպէս, ասենք, զաղափարի ցամաք աղօթամատեան, քրէական դաստիճիո, և ոչ աւելի՝ որպէս կեանքի խոր ուսումնասիրութիւն և որպէս մարդկային սրտի բնականօրէն խնդրած կեանքի բաղմաձևեան դեղեցկու-

զինակութեան մէջ մի չնչին շափով կարող ենք անսել մի զաղափարային կամ երեւակայական գեղեցիկ իմաստ, մի եեանալի ունդագրածութիւն, նատուրալիզմից կամ բէալեզմից բօմանական ոգեւորքիւն, լայն, վառ կամ կենդանի երեւակայութիւն, բնօւրեան և եզրու կամ ենգու զինօվուրեան արքօն նկարագրութիւն, մի խոր իդէա, մի կիսամանչ զիւս, մի բարձր միտ, մի ուկանի կամ կեանքի մանրանկան և բազմակազմանի պատկերացում, մի իդէալի ոգեւորքի տեսարան, մի ծօմարիս տրագիկական դրութիւն, մտեր մազնիսացնող դէպէերի և երեւայքների աջող և եեառերեւեան դասաւորւմ, մի խօսքում՝ մի էջ, մի բառում՝ մի մարդկային եօւրիւն, մի պերծ կամ բարուսնալից ո՛ձ, մի ներենչում, մի զզացման ժայրքում.....: Գրանց և ոչ մէկի գրուածքի մէջ այսպիսի բաներ չկան: Մի հասկացող գերմանացի, գերմաներէն թարգմանուած հայ բանաստեղծներից երկուսի մասին հարկաւոր տեղեկութիւններ տալուց յետոյ, ամենալաւին, իր հայքենակիցների առաջ պաշտպանելու համար, հազիւ կարողանում է այս երկու խօսքն ասել:

Es soll ausserordentlich schwer sein, armenische Poesien in eine moderne spraché zu übertragen weil diese Dichtung noch mit Verhälteniszig sehr ein fachen Mitteln des Ausdrucks arbeitet, ähnlich unseren Minneliedern, in die man sich auch erst Vertieft hat, bevor man zu der eigentlichen Schönheit ihres Inhalts Verdringt.

թիւնների և գաղափարների, զարդացնող գաղափարների, հանդիսարան..., բացի այն հանգամանքից որ, իբր թէ, իբրև կուսակիցներ, խմբակիցներ կամ շահակիցներ, սկզբունքով չեն կարող ընդունել բոլորին տարբեր գաղափարների հետեւողի գոյութիւն և դէպի մի այդպիսին, ինչ տեսակ գրական գործող էլ լինի, ամենաքիչը լուռթիւն են պահում, որպէսզի նա իրենց գիւղերի մէջ յայտնի չդառնայ, բացի այն անսկատեհութիւնից որ շատերը, ինչպէս առհասարակ գրականութիւն, նոյնպէս թատրոն համարում են իրենց և իրենց բարեկամների համար փառքի միջոց և որով մարդափարութիւններ են ցոյց տալիս դէպի իրար, բեմի վայ դնելով և, արուեստորէն կենդանացընելու համար, գովելով երկու կոպեկանոց սիէսներ, առանց ինարկէցաւելու թէ նրանց՝ պառաւններին էլ յայտնի, հարիւր անդամ կրկնուած, խրատներին պահանջ չկայ և թէ հասարակութիւնը գորեցնում և թատրոնական գործն էլ բէակցիա են անում, բացի այն ի-

1888. 57

Որչափ էլ զիջողութիւններ անենք, ամենաշատը մէկին կամ երկուսին համար կարող ենք կիսատարանալիներ կամ կիսաբանասեղծներ անուանել, բայց եթէ տաղանդի և շնորհքի մասին յանցաւոր չեն այս գրողները, ստացականի մասին մեղագրելի են, նրանք պարտաւոր էին քաղաքակիրթ աղքեցի տաղանդների և շկօնների հետ փոքր ինչ աւելի ընդարձակ ժանոթանաւ, զեքսպիրի հետ, օրինակ, կարող էին ժանոթանալ և կլասիք շկօլի պիտ' Tennysonի պարնասեան շկօլի պետենք Mr. և Mrs Browning-ների, այժմեան ամենածովովցական բանաստեղծներից՝ Swinburne-ի և այնի հետ: Կարող էին կարդալ և այդ բանաստեղծների ցեղակիցների սեփական գտաստաններ, կարդալ և մտնել քննադասութեան նոր աշխարհների մէջ, կարդալ և օգտաւել լրենց զրականդաւանկիցների կարծիքներից գեղեցիկ զնահատամեններից: Այս մին երկու նախադասութիւնով ինչ հիմնալի կիրազը ընտրուամ է մի տիեզերական բանաստեղծի, «Paradise Lost»-ի հեղինակին... Who will never be forgotten for his poetry, and aught never to be remembered for his politics... Դրանով նրանք ոչինչ չեն վնասի իրենց ինքնուրույնութիւնից, ընդհակառակը, եթէ տաղանդ լինէին, կը փայլեցնէին լրենց տաղանդ, միթէ ամենալաւ նկարիչներ, անդրիակործներ նրանք չեն որսնք շատ գեղարուեստական դործեր են տեսած, նրանք չեն աւելի, սրոնք ապրում են գեղարուեստի Ովկիանոսում: Այսպիսի հետամտութիւններ ունեցած են և եւրոպացիներ, տասնուվեցերորդ դարում ֆրանսացոց աշքը հոտափալի վրայ է յառած, տասնեւեօթիրորդում՝ Սպանիայի վրայ, տասնեւեթիրորդում՝ Ընդլիայի վրայ, որից ուսած են պատքնադասութիւն, ատանկիններորդի տոաջին կիսում՝ Անգլիայի և Գերմանիայի վրայ, նոյնպէս տասն և ութիրորդի առաջին կիսում՝ Գերմանիայում ամեն ինչ քրանսական է եղած, իսկ առաջիններորդի երկրորդ կիսում՝ Անգլիա և Գերմանիա, ուրիշ ազգերի հետ, հետեւում են չիւղոյի տիեզերական շկօլին:

ըսղութիւնից որ ակզբունքով դէմ են այն գործին որ մի մարդ ապատ և մեկուսի գործ է, հպարտ և չփիջող լինի, մանաւանդ՝ ուրիշների աշխատութիւններ ոչնչացնէ և իր աշխատութիւնները այնքան անհամեստ կերպով մինչև երկինք բարձրացնէ ու աջողութիւն գտնէ, բացի այս բոլորից և ուրիշ նուրբ և հեռատես հաշիւններից, հէնց ամենամեծ արգելք կըլինի ներկայացման այն արտասովոր տոկոսիքը, մեծ մաքըլ, բարձր գինը, որ ես պիտի գնեմ իմ պիեսների վրայ, ծածկելու համար այն վնասը, որ ստեղծեցին այստեղ իմ կեսնքի պայմանները: Այսպէս թէ այնպէս, այստեղ թէ մի այլ տեղ, այժմ թէ ապագայում, «Սօֆիան» և «Փառանձեմ» ձեռք ձեռքի տուած՝ կոչուած են մեծ խաղեր խաղալու, իրենց յետագայ քոյրերի և եղբայրների հետ, այս չէ իմ այժմեան մտածումը, որ մի հասարակ բան է այլ ես ինձ համար, իմ միակ մտածումն է, զոնէ սրանից յետոյ, ապատել եմ գրուածներ միացեալ ուժերով զործող copiste-ների ճանկերից տպագրութիւնից առաջ, որոնք իրենց իրաւունք են համարում ուրիշի արիւնուով կազդուել իրենց մարմին, որոնք առանց ինձ, իրեւ առանց կենսական սնունդի, անկարող են 20) ապրել, երկի...:

Դրամայի գին թանկ եմ նշանակում, որովհետեւ տպագրում եմ սանչ թէ հասարակութեան համար, այլ մի որոշ չափի դեղաբուեստառէր ինտելիգէնտների համար:

Թէ ներկայացման իրաւունքը և թէ ուրիշ ամեն իրաւունքները հեղինակին են վերապահուում:



20. Այս բողոքը ես զգացըել էի «Բանաստեղծական Մօդէներ»ի մէջ, բայց հէնց այդ գրքոյիկը կարող չեղաւ իրան ազատել. նու դեռ չէ տպուած, բայց ում յայտնի չէ...:

մասթ մարտ 02 մաստակ պահապ
վանդակում 03 մաստակ վանդակում 04 մաստակ վանդակում
վանդակում 05 մաստակ վանդակում 06 մաստակ վանդակում

Ս Օ Փ Ի Ե

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՆՈՒԽՆԵՐ, այրի տիկին.—55 տարեկան լուրջ երևոյթով և լաւ
հագուստով* մի կին:

ԱՐԾԱԿ, նրա որդին.—35 տարեկան հայկական խոշոր ** տի-
պի մի մարդ, ինքնազո՞ն երևոյթով և նոր ու թանկագին՝
բայց անճաշակ հագուստով:

ԱԼԵՔՍ ԱՇԽԲՈՅ, նրա քոյլը և Ստեփանի հարսնացուն.—25
տարեկան, չափաւոր հասակով, փայլուն և ջղային կադ-
մուածքով, արագախօս և նոր ու ճաշակաւոր հագուստով
և ներկայ քաղաքակըթութեան բարոյականի վաս կողմն
ըմբռնող օրիորդ:

*) Մեր ժամանակի քաղաքակիրթ մարգկութեան զգեստները
հաղարաւոր նկարների մէջ մտած են արդին, հետեարար աւելորդ էր
նկարագրել թէ ներկայի և թէ ապագայի համար:

**) Արտասահմանի հայոց համար, աւելորդ չէ տալ և հետեւալ
ծանօթութիւններ, իրեն միջավայրի արդիւնքներ:

ա) Արտասահմանում են՝ բ-ի, դ-ց, դ-ձ, ջ-ձ և զպն՝ շատ
ուժով:

բ) Բառերը, ընդհանրապէս առաջին վանկում, շեշտուում են
միշտ ուժով, ոռուսերէնի և վրացերէնի ազգեցութեամբ:

գ) Հարցալանը բառերի վրայ երկարուում է Ատրապատականի
թուրքերէնի պէս.

Տաճկահայերի հետ ընդհանրապէս համեմատած՝ իգական սե-
ռի ձայներ աւելի հաստ են լինում, երկու սեռի բառերի արտաքե-
րումները՝ ոչ այնքան արագ, չարժումները՝ դանդաղ, հասակները՝
աւելի լիքն, դոյները՝ աւելի թուխ, ժպիանները, ծիծաղներն և լա-
ցերը՝ աւելի թոյլ, երևոյթները՝ աւելի լուրջ, գոհ և հպարտ, տղա-
մարդկանց վերաբերմունք դէպի իգական սեռը՝ աւելի յարդական,
սակայն ոչ այնքան սրտալի եռանդով:

Եթևս, նրանց ծառան. 20 տարեկան:

ԱԼԻՔԾՈ ԱՆԴՐԻ, հարուստ նաւթավաճառի որդի. — 26 տարեկան, հայկական նուրբ և քիչմիջի տիպի մի գիմնազաւարտ, վայելուչ հագուստներով:

ՍԻՄՈՆ Խոփիայի տարիստուն, Ալէքսանդրայի հօրաքըրոջ որդին և Ալէքսանդրի հօր գործերի կաւավարիչ. — 40 տարեկան, կոյտ կազմուածքով, բարեկիրթ ձևերով և հասարակ շղթերով մի մարդ:

ԴՐԿՑՈՐ Ստեփան Կըզըլխանեան, Ալէքսանդրայի և Խոփիայի փեսացուն. — 35 տարեկան, շէկ և սիրուն մուրուսով, պասարիչ երեսյթով, ազդու և գրաւիչ լեզուով, սարգ և պաճոյն հագուստով մի մարդ:

ՄՐՅՈՒՀԻ, Ստեփանի քոյրը. — 37 տարեկան, սակաւարիւն, մանր և աշխոյժ կերպարանքով, շատրած դէմքով, ուռուցիկ գգեստով, ամուսնութիւնից յոյտ կտրած մի օրիորդ:

ԵՐԱԿՈՒՀԻ, Ստեփանի փոքր քոյրը. — 18 տարեկան, քրոջ տիպի՝ միամիտ երեսյթով, էժանազին՝ բայց մաքուր հագուստով մի աղջիկ:

Մ ՕՌԻՇ Դաւիդովա, Ալէքսանդրային գերդաստանակից, Ստեփանի միւս հարսնացուն. — 28 տարեկան, մի փոքր կարճ՝ բայց փափուկ կազմուածքով, յանկուցիչ դէմքով, գեղեցիկ ծիծաղով, անսպասուած տարագով և ներկայ քաղաքալիքթութեան բարոյականի բաւ կողմը ըմբանող ինտելիգէնտ և նիւթավէս բաւական ապահով մի օրիորդ:

ԵՆՑԱԼԻԿ, Խոփիայի բարեկամուհին. — 40 տարեկան, հասակապմուածքով, մշագծիծաղ դէմքով, առնական ձայնով, տձև հագուստներով ամուսնաթող ճր կին:

ԲԱՐՄԵԴ, Քաղղանիչ Գիլեանց, Խոփիային մոլորեցնադ մի վողատէր. — 60 տարեկան, հրէայ-լեհաւրան տիպի՝ վաւաշու երեսյթով և լաւագոյն հագուստով մի մարդ:

ԱՌԱՋԵԼ, Սրբունու սիրական. — իբր 30 տարեկան, գիղեցիկ հաստկով, անհոգ երեսյթով, կիսամաշ չորերով դատարկաշընի մի երիտասարդ:

Գործողութիւնը թիֆլոսումն է կատարում:

ԱԹԵԶԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Տիկին նունէի տանը՝ դրկտոր Ստեփանի ընակարանում մի սենակ, երկու պատռնակով, որոնք նայում են ծախս կողմից պատշզամբի վրայ, եւ երեք դրոնկ, որոնցից վերին բացում է դէպի ընդունարան, աջակողմին՝ դէպի դահլիճ եւ մէջտեղին՝ դէպի պատշզամբ։ Մենեակը կահարում են մի զահարուակ, որ որուած կայ մի գրամաֆօն, եւ մի մի հատ մահնակալ, գրքակալ, զգրոց, հաւեկերձաղարան, սեղան եւ մի դիմին բազկաթոռ. մենեակը զարդարում են մի հայելի եւ մի քանի հայ եւ որու բժիշկների եւ ծանօթների լուսանկարներ։ Առաօտ է եւ ժամի տան։

1

ՍՏԵՓԱՆ ԵՒ ՍՕՖԻԱ

Ստեփան, (Սօֆիայի ծեռքից բոնած) Վերջացաւ, չէ, վերջապէս այսքան ուշացըրած մեր այս մեծ խնդիրը, (Սօֆիան ծիծաղում է) թէ մի այլ գործ էլ պակասում է դեռ մեզ, թէ մի այլ բան էլ հարկաւոր է գեռ քեզ։

Սօֆիա. (ուրախութեան մէջ լողալով) Յիշում ես ահա, էլ ինչ ես հարցնում. և ինչպէս կարելի է մոռանալ այդ գործ, մոռանալ այդ բան՝ միմնոյն է թէ մի պայման կապել, մի ուխտ հաստատել, առանց վկայի, առանց ստորագրութեան։

Ստեփան. Իսկ երբ պայմանադիրներ, ուխտադիրներ, անգին Սօֆիա, ինձ և քեզ նման միմեանց սիրողներ, միմեանց անձնուէրներ, միմեանց հետ դժոխք և դրախտ զնացողներ են լինում, էլ կարելի կը մնայ այդպիսի հաստատութիւնների։

Սօֆիա. Ինչպէս թէ չի մնայ, հարկաւոր չէ այդ սիրոյ հասաք տալ մի գեղեցիկ գրաւական, որպէսզի յիշեցնէ նրանց իրենց առաջին

սէր, որպէսզի նրան նայելիս՝ վառ պահեն իրենց սկրոյ գգացումներ, որպէսզի այդ սուբը սէր աւելի արծարծեն կեանքի ընթացքում, որպէսզի ...օ, Ստեփան, (գլուխը շարժելով) ուրախութիւնից խելքս կը կորցնեմ հիմա:

Ստեփան. (սրտի խորքերից) Խոկ ես, Սօֆիա, քեզանից առաջ եմ կորցրել իմ լըութիւն. աճ, եթէ ես գիտենայի այսքան քաղցրութիւն կար ամուսնութեան մէջ, եթէ ես գիտենայի մի Սօֆիայի կը հանդիպէի, վաղուց ձգած կը լինէի իմ զրադումները և նրան եկած, դուած:

Սօֆիա. Այդ խօսքեր, ոճ, այդ խօսքեր, քեզ սրտից անհունապէս սիրելի են գարձնում... այդ խօսքեր ինձ բնմարդին....:

Ստեփան. (զնում է լէպի սեղան եւ մի մատանի է հանում՝ զզրոցից եւ ըերում՝ տալիս նրան) Ահա քեզ իմ սրտի գրաւական, քո իրաւունքն է, (Սօֆիան ստանում է անհուն ուրախութիւնը) արդէն պէտք է տայի, ես քեզ էլ փորձում... պահի՛ք, պահի՛ք անկորուստ... բայց փոխարէն. գիտեն, գիտեն ինչ պէտք է տաս դու ինձ... (ուզում է զրկել Սօֆիային, Սօֆիան փախչումէ նրա առջելց ուրախ ճիշով):

Սօֆիա. (Ելլի իոյս տալով Ստեփանից որ կամաց, կամաց մօտենում է) Դէ, թնգ այժմ այդ կատակներ, թնգ մի փոքր էլ գեռախորժակով խօսենք, գուարճանանք: Ասացիր ինձ էիր փորձում, բայց ինչո՞ւ համար, սիրելի Ստեփան:

Ստեփան. Որպէս զի բաց անէի քո հոգեկան աշխարհ, տեսնէի, ինչեր կային քո զգացումների շտեմարանում, ինչ կայծեր կային սրտիդ ծալքերում. և գնա եմ, շնորհակալ եմ, ես գտայ այնտեղ աղաս և անկեղծ անսահման բերկրանք, անսահման ոգևորութիւն:

Սօֆիա. Եւ ինչո՞ւ չպէտք է ես ոգևորուեմ, ինչո՞ւ կեղծ համեստութեամբ չպէտք է յայտնեմ իմ զգացումներ, երբ օրիորդական անգոյն և անորոշ կեանքից յետոյ՝ վիճակուեց ինձքեզ նման մի պատուական բժշկի հետ ապրելու բախտն ունենալ:

Ստեփան. (Հագարտութեամբ) Ա՛, մեծ պատիւներ ես ինձ անում, մեծ կօմպլիմէնտներ ես ինձ շռայլում. սակայն, հետաքրքրական է, իմ ո՞ր արժանաւորութիւնից գրաւուել ես դու, իմ բժշկական արհեստից, թէ իմ անձնական յատականիցներից:

Սօֆիա. Թէ սրանից և թէ նրանից, բայց առաւելապէս այն առողջ հայեացքից, որով բմբռնում ես դու կնոջ նշանակութիւն, կրոմնակից ես գիմինիզմին և հաւատում նրա յաղթանակին, ինչպէս

անցած երեկոյի ուժ՝ ծափահարեցիր ընկերոջն, որ խօսում էր այդ նիւթի մասին:

Ստեփան. Իսկ իմ կողմից հարկաւոր է ասել որ, ինձ համար մեծ բաղդաւորութիւն է որ իմ կեանքի թվաբարման աջողապէս ինձ հանգէս բերեց քեզ նման մի գանձ, ուրեմն մեր այս անկեղծ արտայայտութիւններից հետևում է որ ամենաերջանիկ զրյակերից լենելու ենք մենք... չնորհաւորում եմ հետեւապէս այս նշանադրութիւն և ցանկանում շուատ պատկադրութիւն, որպէսզի վայելենք մեր երջանիկ կետնք...

Սօֆիա. (որքչավի ծիծաղով) Եւ ծիենք, ծաղկենք ու մէկ բարձի ծերանանք:

Ստեփան. (մոլեզնարար դէպի նա զնալով) Հօ հիմի էլ չես մերժի, երբ այդպիսի մարդարիտներ ես թափում ըերնիցոր:

Սօֆիա. (իրտեղով, կամ կեղծելով, իրեւ անփորձ) Ձեռու, ձեռու... (ձախ ձեռն տանում է դէպի Ստեփանի շրթները և աջ ձեռն՝ դէպի նրա կործք, որպէսզի շնունդ իրան:)

Ստեփան. (րունելով նրա թերից) Երկուուն էլ փորձենք, տեսնենք, որն է համով: Համրապում է նրա ձեռն և երեսը:)

Սօֆիա. (աշ թեւը դիտելով) Ա՛յ, Կօֆտաս պատռեցիր: (մի փոքր հեռանալով:) Խնդրում եմ, մի բովէ լուռ կաց, որ շասնգարես ինձ, ես պէտք այս թարմ տպաւորութեան տակ, մի քանի վառ տողերով հաղորդեմ մերայնոց այս կենսական հարցը, և արդէն մի պապիսի ուրախալի բան մի բովէ էլ սրտումս չեմ կարող պահել: (զնում է սեղանի առաջ և թուղթ ու զրիչ վնտրում:)

Ստեփան. Բայց ինչ պէտք է զրես, հնգիսի մի մարդ պէտք է ներկայացնես ինձ ձեր ընտանիքին:

Սօֆիա. (կատակելով) Մի կոսիա գաւառացի, մի աննպասակ, շահամոլ, սառնասիրու և անլարեխիզմ բժիշկ:

Ստեփան. Ենու, այն ժամանակ ես էլ ճիշտ այդպէս կըներկայացնեմքեզ եղբօրս Պետերուրում:

Սօֆիա. (եռանդով զառնալով դէպի նա) Ուզիդ, եթէ յարգում ես ինձ, ինչ կերպով կընկարագրես դու ինձ նրան, կըսան ինքնամիլութեանս բաւականութիւն, կըխօսես իմ մասին այնպէս յափըշտակիչ լեզուով:

Ստեփան. Ի հարկէ, կընկարագրեմ քեզ իբրև մի խոհուն, խելօք և իմաստուն օրիորդ, մի օրիորդ, որ երկու աարի էլ համալսարան է յանախած.

Սօֆիա. (անքառական մնալով) «Երկու տարի էլ համալսարան
է յաճախած»ն ինչ է:

Սեփան. Նոր, «Համալսարան աւարտած է», կասեմ:

Սօֆիա. Ուրիշ...

Սեփան. Ուրիշ, «շատ սիրուն, շատ հիանալի, շատ շնորհալի
աղջիկ է», կասեմ:

Սօֆիա. Բացի դրանից, բացի դրանից...:

Սեփան. (ըրքրիշ բարձրացնելով) Բացի դրանցից, էլ ուրիշ
ինչ կայ որ ասեմ:

Սօֆիա. (ծիծաղելով եւ մի փոքր դժուարութեամբ արտաք-
րելով) Ձես աւելացնի, թէ մի օրիորդ է, որ հասարակական...

Սեփան. Այս գա, (*) պէտքէ աւելացնեմ նաև թէ օրիորդը
բացի այն արժանաւորութիւններից, հասարակական իդաերով վաս-
ուած մի անձնաւորութիւն է, այնպէս որ կամենում է կրթու-
թիւն, իր զարգացումը հասարակութեան յառաջդիմութեան նուիրել:

Սօֆիա. (զո՞ւ մնալով եւ ուրախութիւնից դէպի վեր մի ոստին
կատարելով) իսկ քո մասին ոչինչ մի յանձնարարեք, (քքքջում է)
մենք, օրիորդներս, բաւական է, որ հաւանենք մի երիտասարդի, էլ
այնունեան Աստուած գիտէ մինչեւ որ տեղ կը բարձրացնենք: Այն-
պիսի գովեստներ չուացիմ քո հասցէին որ մերոնք էլ զարմանան:

Սեփան. Միայն թէ, այնուամենայնիւ, որպէսպի ոչինչ չսպրդի
մորիցդ, որպէսպի տեղօք ամեն բան պատմես, որպէսպի կարգով ա-
մեն ինչ հաղորդես, բժշկակական պարապմունքներիս մասին դրելիս՝
հարկաւոր է պատշաճօրէն նկարես թէ թեմական ուսումնարանն ա-
ւարտած է, յետոյ դիմնադիայի քննութեան է տուած, ապա Մու-
կուայի բժշկական կուրսերն՝ վերջացրած, յետոյ նոյն քաղաքի հիւան-
դանոցում ծառայած, ապա Թիֆլիս է վերադարձած, և այժմ, որպէս
աշքի հիւանդութիւնների բժիշկ, ամսական 200 ըուբլի փող է վեր-
ցնում. իսկ մեր գերդաստանի պատմութեան դառնալիս՝ պէտք է
նկատես թէ եղբայրն Պետակբուրբում հանքային ինժեներութիւն է
ուսանում, թէ իրենց տունը Պարարադում շատ յայտնի է, ուր այժմս
էլ ունեն տներ, բազեր, դախողներ... թէ իր հօրեղբայրն այնուեղ

*) Թող ներուի ինձ որ այս երկի մէջ մի քանի տեղ օտար բա-
ռեր իսկութեամբ եմ դրած. դա ևս գեղարուեստի մէկ պահանջն
համարեցի. Արեւելեան լեզուի կազմն այնպէս է որ, կարծես որքան
շատ գործածես օտար բառ, գրուածն այնքան վառ և կենդանի կը
լինի:

գլաւնի օգեական է.....: (*Միջին դռնից մտնում են Առաքել և Սրբութին. Սօֆիան խկոյն քաշում է սեղանի մօտից, եւ Ստեփանի հետ միասին, Առաքելին զըսի է տալիս. Առաքել զըսանից մի շիշ է հանում, դնում սեղանի վրայ եւ նստում, իսկ Սօֆիան զնում է դէսի նոյն դուռը:)*

Սօվիա. (*Ստեփանին, սենեակի մէջտեղում*) Սրանց ներկայութեամբ անյարմար է զիել.... ես կը վերադառնամ շուտով: (*Սրբութին, դուն մօտ, նրան ձեռ տալով*) Ա՛խ, որքան ցանկալի էր եթէ հինգ բոպէ առաջ այստեղ լինէիք:

Մրբուհի. (*Ժաքըրած ատելութեամիք*) Խնչո՞ւ, ի՞նչ բանի համար:

Սօվիա. (*Ստեփանին*) Դոկտո՞ր, դու պատասխանիք այս հարցման:

2

ՄՐԲՈՒՀԻ, ԱԹԱՔԵԼ, ՍՏԵՓԱՆ

Ստեփան. Ահա նորից ուրախալի լուր, «Փրհնեալ լինի այս օր», ասացէք:

Մրբուհի. (*Կարելու համար, ձեռքումն ունի մի կօժտա*) Այս, օրհնեալ լինի այսօր և այս ժամը, նորից աւետիք, բայց ինչպէս է քեզ յայտնի, Ստեփան, քանի որ եւ քեզ դեռ ոչենչ չեմ ասած:

Ստեփան. Խնչովէս է ինձ յայտնի, աւետիք արդէն ես ունիմ քեզ տալու. ուրեմն մի ուրիշ աւետիք էլ դո՞ւ ունես ինձ տալու:

Մրբուհի. Աւետիք արդէն դու ունես ինձ տալո՞ւ, ուրեմն ուրախութեան վրայ ուրախութիւն...

Առաքել. Հնառա, երկու աւետիք մի անդամից:

Ստեփան. (*մարմեացած ուրախութիւն դառնալով*) Հնառա. բայց շատ էլ չէի կամենայ լսել մի ուրիշ աւետիք, ուրախութեան վրայ՝ ուրախութիւն երեկոն աւելի անհանդատացուցիչ է լինում սրտի համար, քան ախրութեան վրայ ախրութիւն. յամենայն դէպս խնդրութեան գերագոյն աստիճան կընծայէ սրտին գերագոյն բարիք. սակայն ո՞ր տեղից կարող է դալ այդ աւետիքը. ես ոչ մի գիւտ եմ արած, որ պսակուած լինէր մի ակադէմիայից, և ոչ՝ մի պաշտօն խնդրած, որ չնորհուած լինէր մի իշխանութիւնից. (*Կատակելով*) արդեօք էլի մի գուժ չինի, Մրբուհի, քո աւետիքներից ես շատ եմ վախենում. մի օր աւետեցիր թէ քեռխո Օդէսայից վերադարձել է, բանից դուրս եկաւ որ իր դիակն էին բերել. մի օր էլ թէ՝ լաւացել

է պառաւի աչքը, որին ևս դարմանել էի, բանից դուրս եկաւ որ կուրացել էր խեղճի աչքը:

Մրգուհի. Նրանք ուրիշ, սա ուրիշ, առ հենց իմ ձեռքովս կատարուեց. և այնպիսի մի աւետիք է ոա, որ քեզ մշտական երանելի կեանք կը խստանայ. տիկին Դունէն խստացաւ իր աղջիկ քեզ տալ, ահա աւետիք, արժէ, թէ՞ ոչ:

Սուսին. Իրաւ որ շատ մեծ աւետիք է, այսպիսի աղնիւ օրիորդ ևս սուսաց մէջ էլ չեմ տեսել:

Սեփան. (յուսախար) Ինչպէս, նա եկաւ քեզ առաջարկեց, թէ՞..:

Մրգուհի. Ահա թէ ինչպէս եղաւ: Ես և տիկինը խօսում էինք բարօնում մի ուրիշ հարցի մասին. երբ Սօֆիան այսուեղ եկաւ, տիկինը նկատեց թէ նա շատ է յաճախում այսուեղ. ևս պատասխանեցի թէ նա կամենում է եղրօս խելք որսալ և թէ մենք ետեկց ծիծաղում ենք իր յիմարութիւնների վրայ...

Սեփան. Դրանք աւելորդ զրոյցներ են, կարճ պատմի՛ր, կարճ:

Առաքեն. Կարդով պէտք է պատմէ, չէ, որ գայ հասնի բուն խնդրին:

Մրգուհի. Շատ կարճ խօսելու մէջ ինչ համ կայ: Յետոյ ասացի թէ Ստեփան և Ալեքսանդրան վաղուց է որ իրաք հաւանել և միմեանց խօսք տուել են, մնացել է միայն ձեր հաճութիւն խնդրել, և հենց զրա համար ել դոկտորը կը գայ ձեզ մօտ.: Տիկինն էլ պատասխանեց. «Երբ նրանք միմեանց հաւանել և սիրել են, էլ ես կարող եմ մերժել, թէկուզ մի զրաք գայ Ալեքսանդրայի ձեռ խնդրելու...»:

Առաքեն. (խաղալով զրամափօնի պլաստինկաների հետ) Քրած, շատ խելօք և ազատ է մտածում աղջիկպարոնը:

Մրգուհի. Ահա այսպէս. Ստեփան ջան, մնում է համարձակ գնալ և նշանադրէք կատարել:

Սեփան. Սակայն ինչո՞ւ դու իմ անունով վսահացրել տիկինջ, ես իմ նշանառուք Սօֆիայի հետ կատարեցի հենց այն ըստէին, երբ դու և տիկինը խօսում էիք այդ մասին:

Մրգուհի. (ապշած) Միթէ կարելի է, Ստեփան....

Սեփան. Կարելի, անկարելի, իրադատթիւնն եմ խօսում սակայն:

Մրգուհի. (վշտացած) Եւ միանդամ էլ դոնէ ինձ հետ հարկաւոր չհամարեցիր խորհրդակցել:

Առաքեն. (սազելով զրամափօն, փողը դնելով պատուանդանի վրայ) Մեծ սխալ, մեծ սխալ էք արել, դնկասոր:

Ստեփան. Ինչու նորից խորհրդակցէի, Վրբուհի, ինչու եմ սխալ-ուել, Առաքել, ինչումն է աւելի Ալէքսանդրայի արժանիք Սօֆիայի վրայ. Ալէքսանդրան Սօֆիայից աւելի մեծ օժիտ է բերում, չէ, նրանից աւելի կայտառ և պայծառ է, չէ, նրանից աւելի բարեկիրթ դասակարգի, արագէս ասած, արիստոմելլատային, սովորութիւններ ունի, չէ, իսկ Սօֆիան, չէ որ Սօֆիան ևս իր կարգին բերում է բաւական օժիտ, չէ որ նրանից աւելի ճկուն և սիրուն է, նրանից աւելի անոյշ բնաւորութիւնն, բարի միտք և ջինջ հոգի ունի, չէ որ իր զազափար-ները նրանից աւելի են համապատասխանում իմ գաղափարներին, և որով նրանից աւելի լաւ մայր և լաւ ամուսին կրվնի ընտանիքի, նու (ծեռները միմնակց խփելով) որի արժանիքները աւելի արժէքաւոր են, Ալէքսանդրայինը, ձեր հայեացքով...:

Մրգուհի. (Արան մի վտանգից ազատելու ձեռով) Բայց խնդիրը այդ համեմատութեան մէջ չէ, Սանկան խնդիրը, գուցէ մտքովդ ել չես անցկացրած, նրանումն է որ այդ քո նշանած Սօֆիան, ահ, պարտաւոր-ուած եմ ասելու, այդ գոված Սօֆիան, անբարոյական է, անբարո-յական:

Ստեփան. (մի սարսուռ զգալով իր ողջ էութեան մէջ) Ինչ ա-սացիր, անբարոյական, ես չեմ հաւատում իմ լսելիքին:

Մրգուհի. Այս, ալն, անբարոյական, և հէնց իր սիրահարն իր ազգականն է, Սիմէօն Իվանիչ:

Ստեփան. (ապշած) Անբարոյական, և իր սիրահարն էլ՝ իր ազ-գականն, Սիմէօն Էլիանիչ, հարբած չես արդեօք, սա լուրջ մարդու խօսք չէ:

Մրգուհի. (ըմծիծաղով) Հարբած եմ, այս, հարբած եմ:

Ստեփան. Եթէ հարբած չես, ալսպիսի անկարելի բան ինչպէս կալող ես խօսել, բայց նախ հասկանանք. ումնից ես իմացել, կամ որ տեղից է տարածուել և ինչ հիմունքների վրայ:

Մրգուհի. (շտապով մէկ կողմ ձգելով կօֆտան) Այս, ես ինքս իմ հնարել, քեզ թշնամութիւն անելու համար, ոչ մի հիմունք չկոյ և ոչոքից ել չեմ իմացել, զրաբարտութիւն է կատարեալ, որու այդպէս կարծիր, միայն համբերին մի բոսէ: [Մի ակնթարթում վազում, զո-նում է դէպի բալքոն)

Ստեփան. (Նրա ետևից) Վրբուհի...: (Մրգուհին չի լսում: Ստե-փանն առանձին ասում է:) Սա ինչ վատ լուր էր յանկարծ ակնանջո հասաւ. սա ինչ թոյն էր յանկարծ թափուեց մեր վարդապոյն ապա-դայի վրայ:

(Մրգուհին վերառնում է իսկոյն Լեւանի հետ]

3 Առաջնական հոգութեան մասին:

ՍՏԵՓԱՆ, ՄՐԲՈՒՅԻ, ԱՌԱՔԵԼ, ԼԵՒԱՆ

Մրբույի. (Առաքելին՝ կաւաց) Մեզանից մի փոքր հեռու կաց, որսկապի խօսեցնենք Լեանին: (Առաքել հինանում սեղանի մօտից Ստեփանը բարկացայտ նայում է Մրբույն և Լեւանի վրայ:) Ահա ինչու քեզ կանչեցինք, Լեան, օր. Սօֆիայի և Իվանիչի մասին դու թէ մի-ինչ որ լուրեր ես տարածել, պատմի՞ր այժմ և մեզ, մեզ հարկաւոր է գիտնալ դրա ճշգութիւն:

Լեւան. (ըստերեւոյթին վախնալով) Ես նրանց մասին ոչինչ չես խօսել:

Մրբույի. Ոչինչ չես խօսել, այս հարեան պառաւին ոչ ինչ չես խօսել:

Լեւան. Գուցէ խօսել եմ, բայց չեմ մտարելում թէ ինչ եմ խօսել:

Մրբույի. (ղէմքը խոժոռած) Զես մտարերում, ես մտարելում եմ, ահա ասեմ որ դու էլ մտարերես: Դու ասել ես, թէ տեսել ես մի օր, գիշերուայ ժամի չորսին, Իվանիչը Սօֆիայի սենեակից դուրս է եկել և փողոցի դռնով անցել, գնացել, և, թէ, մի առաւօտ էլ, երբ Սօֆիային սամավար ես դրել, նրա ննջարանում մի մարդ ես նշամարել, և հետամուտ լինելով՝ տեսել ես որ նոյն մարդը Իվանիչն է եղել, յետոյ օրիորդն եկել է, դուռը՝ ծածկել և քեզ հեռացրել... պյուղէս չէ եղած:

Լեւան. (խիստ վախնալով) Զգիտեմ, ես ոչինչ չեմ կարող խօսել նրանց մասին. եմ դրութիւնը շատ վատ կրինի, թէ իմանան. Պը թշացէք իմ թշուառ վիճակի վրայ, իմ անունով մի իմանանք այդ բան, ուրիշներին հարցըք խնդիրը: (Բալքօնի կողմից ներս է զալիս երանուին):

Մրբույի. (հրծուելով) Ահա արդէն պարզ յայտնում ես քո վկայութիւն, էլ ինչու ուղղակի չես պատմում քո բերնովդ... վախենում ես, ինչու ես վախենում, մենք նրանց չենք ասի:

Ստեփան. (սրտմուած) Լոյն, բաւական է, Մրբույի... (ծառային) դէ, քաշուիր այստեղից, շնւտ, կորչիթ իմ աչքից, եթէ ուրիշ անդամ էլ այսպիսի լիմար զրոյցներ խօսես, կը սատակեցնեմ քեզ, շնն որդի: (Դնում է:)

ՍՅԵՓԱՆ, ՄՐԲՈՒՀԻ, ԱՌԱՔԵԼ, ԵՐԱՆՈՒՀԻ

Ստեփան. (Սըրունուն) Քո օրումդ այսպիսի թեթևամտութիւն,
 (աւելի կըրով) այսպիսից մարութիւն գեր չէիր գործած. ինչո՞ւ կան-
 չչիր այստեղ այս ծառային, ինքըստինքեան ինչ արժէք պէտք է
 ունենային այս յիմարի խօսքեր Սօֆիայի նման կըթուած և իր
 պատուին զիտակից մի օրիորդի դէմ. ինչ, սրանով իմ սիրու պէտք
 է սառչեցնէիր, սրանով ինձ պիտի հաւատացնէիր թէ... չգիտեմ,
 զայրոյթիցս չգիտեմ ինչ ասեմ... ինչ բան ստիպեց քեզ այս անպէտ
 գործը կատարելու... (զայրոյթից ման է զալիս):

Երանունի. (Հարցնելով պրանեւ նրանզարմացմամբ) Քա՞ այս
 ինչ կոիւ է, ես, Սօֆիայից լսելով, վաղեցի, որպէսզի Ստեփանի
 նշանըքէի առջի լոյսն անեմ, և ձեղ ուրախութեան մէջ տեսնեմ,
 դրանց փոխարէն մի ինչ որ անհասկանալի աղմուկի եմ հանդիսա-
 տես լինում:

Ստեփան. (Առից զրզուելով) Ինչ բանն ստիպեց քեզ այս
 անխորհուրդ գործողութիւն կատարելու... Ես յուգում եմ ոչ թէ
 նրա (ծառայի) բարբաջանքներից, այլ նրա այստեղ կանչուելուց...
 պարզապէս մի անպատճութիւն էր սա Սօֆիայի պատուի դէմ, մեր
 լլջութեան դէմ, մեր գաւառական, աւանց այն էլ զանազան ածա-
 կաններով որակուած, արժանապատճութեան դէմ: Էլ ինչ համարում
 պէտք է ունենայ Սօֆիան մեր վրայ, եթէ լսէ...:

Առաքել. (Հաստատելուց յիշոյ զրամափօնի վրայ Օտելօ օվե-
 րայի ձայնը): Մի յանդիմանէք օրիորդին անիրաւ տեղ, գնկասր, Սօ-
 ֆիայի գաղտնիքներից մինն էլ ես պիտի մերկացնեմ հիմա, փոյթ չէ,
 եթէ ինձ դէմ ևս ձեր զայրոյթն յայտնէք: Ցիշումէք, գնկառ, երկու թէ
 երեք շարաթ առաջ մի երեկոյ դուք ուշ վերադարձաք բնակարանը,
 և ես մի ինչ որ գեղագրի համար սպասում էի ձեղ այստեղ:

Ստեփան. (Աիրտը տրուիելով) Ցիշում եմ, յիշում. ասացիք, մի
 նոր մերկացում էլ դուք պէտք է անէք:

Առաքել. (Զրամափօնութողնելով իւ աշըր բոլորովին Ստեփանի
 վրայ դարձնելով] Այս, ահա այդ գիշերը, երբ այստեղից դուրս էի
 ես զալիս և անցկենում Սօֆիայի գուան առաջից, անձրիի և մթու-
 թեան մէջ ես տեսայ մի կառք, որ կանգ էր առնում, 'որից դուրս
 եկան մի կինարմատ և մի տղամարդ, հարբած, ջարդուած, այնպէս

որ սաքի վրայ կենալու ուժ չունեին. հետաքրքրութեամբ ևս միքայլ մօտեցայ, որպէսզի տեսնեմ թէ ովքեր են դրանք. ուշ, գարմանքիս չափ չկար, երբ աչքս դիպաւ Խվանիչի և Սօֆիայի դէմքին...:

Ստեփան. [Առունեձին] Սա միւսից վատթար, աւելի վատթարները, երեխ, գեռ նոր պիտի լսենք: (Առաքելին) ձեր և Սրբուհու խելք շատ էլ զանազանութիւն չունին միմեանցից, չգիտեմ, որքան ճիշտ են ձեր խօսքեր, եթէ իրաւ էլ լինին, այնուհանդերձ զարմանալու ոչինչ չկայ այդ գործում. Սօֆիան աղատ մարդկանց մէջ մեծացած է, ներկայ սօցիալական սրայմանները երկու սեռի առանձին տեսակցութիւններ, միասին դործակցութիւններ ներելի և կարելի են դարձել. հա կարող է մի օր մի աղամարդու հետ գինի էլ խմել, կառք էլ նստել, մանաւանդ, երբ այդ աղամարդը նրա աղգականն է լինում:

Երանուհի. (մէջ մտնելով) Այդ ինչ էք պատմում գուշ, պարոն. երեխ, ուրիշներին նրանց էք նմանացրել, այդպիսի դէպք երբէք չէ կարող լինել. հաբբել և գիշերով մի տղամարդու հետ տուն վերադառնալ, դա աւելի քան անհաւատալի է...

Մրգունի. (ըրոջ) Գու ինչ ես խառնում, երբ խնդրից ոչինչ չեմ խմանում:

Առաքել. (դէպի Ստեփան և Երանուհին) Ես ձեզ չեմ ստիպում որպէսզի հաւատաք, ես կամեցայ միայն զանցառու լինել դէպի ձեզ իմ տեսածի մասին, որից ահա զգում եմ սրտի հանգառութիւն:

(Եւ անմիջապէս լարում է զրամափօն, որ սկսում է երգել. իսկ մտառանջ տոկոտորը բաց է անում բերանը, որպէս զի սրտի բռվանդակ մադը թափէ մեղաղողների վրայ, երբ հետեւալ հոսքն է լսում:)

Մրգունի. (ցոյց տալով միջին լուր, որ բացում է) Պոչտալիօն, Ստեփան, ահա այս երբորդ անգամն է որ գալիս է:

(Ստեփան զնում, մի նաևակ է ստանում, և համարեա շէմքի վրայ բաց է անում և կարդում առանց ձայնի: Հենց այդ ժամանակ Ալեքսանդրան լրան մօտ եկած՝ մտիկ է տալիս զրամափօնի ձայնին. Մրգունին, վազիլով դէպի նա եւ թախանձելով, ներս է բերում, ապա մտնում է Սօֆիան ժպուն եւ ծեռքին մի թուղթ:)

**ՍՐՅՈՒՀԻ, ԱՌԱՔԵԼ, ՍՏԵՓԱՆ, ՍՈՖԻՄ, ԱԼՔԲԾԱՆԴՐԱ ԵՐԱ-
ՆՈՒՀԻ**

(Ալեքսանդրան բարեւում է նախ Ստեփանին, Ստեփան, ու-
շալը ովհինք նամակի վույ դարձած, անուշաղիք կերպով է
փոխանակում, յետոյ բարեւում է Երանունուն և Առաքելին, եւ
ապա, եռավկայի քղանցքը վեղցնելով, նստում է Սրբունու և Ա-
ռաքելի մէջտեղ, նոխարով դէմքը զովացնելով. յետոյ Սօֆիան
ցատկում է սրա եւ նրա ստաջ, եւ ամենքին մի մի ժպիտ ըն-
ծայելով՝ զալիս է Ստեփանի մօտ:)

Ստեփան. (առանձին, աչքերը նամակի վրայ յառած) Զմարդա-
րէացայ, ահա ամենավատթալն էլ սրա մէջն եմ կարդում:

Սօֆիա. (նազեկի ժպիտով) Յանչիան, գիրը վերջացրի և բերի
տհան, այնպէս եմ զարդարել, որ կարդացողը կաքանչանայ... ուհի, մի
տես, մի տես ինչ հիանալի եմ շարադրել: Մի-երկու կէտ էլ ինձա-
նից եմ աւելացրել նամակի վրայ. մօրս և եղրօրս հրաւիրել եմ այս-
տեղ մեր հարսանիքին ներկայ լինելու. լաւ չեմ արել որ այժմուա-
նից եմ հրաւիրել. ինչ կայ, թող գան, մի քանի օր մեզ մօա կենան,
ուրախանան, ման գան, մինչև որ մեր հարսանիք կատարուի:

Երանեանի. (զալով Սօֆիայի մօտ) Ինչ էք խօսում, Սօֆիա,
այդ ինչ թուղթ է ձեռքումդ:

Սօֆիա. Միթէ կարող չեղար գուշակել թէ ինչ բանի մասին
ենք խօսում, և ինչ թուղթ է այս, մեր նշանադրութիւնն եմ զրել
Քարու ծնողներիս և նրանց շուտով այստեղ եմ կանչել:

(Երանեանին թուղթը առնում է Սօֆիայի ծեռքից եւ ցածր
ծայնով կարդալով՝ կամաց կամաց հեռանում է Սօֆիայի հետ
եւ կանգ է առնում սենեակի մի կէտում, ներկայ եղողներից հե-
ռու: Ստեփան լարուած ուշադրութիւններն են փոխանակում:)

Ալեքսանդրա. (Սրբունուն) Գրամաֆօն, գրամաֆօն... գրամա-
ֆօն այնքան եմ սիրում, այնքան է ինձ զուարձակի թուում, որ չեմ
կարող բացատրել:

Սրբունի. Գրամաֆօն ես էլ եմ սիրում, բայց գրամաֆօնից տ-
ւելի ձեզ եմ սիրում, միթէ դուք գրամաֆօնի չափ մեզ չեք սիրում,
միթէ առանց գրամաֆօնի չէլք կամենայ մեզ այցելել, միթէ չգի-

տէք թէ ձեր այցելութիւն մեզ համար ողքան, մեծ պատիւ ենք համարում. զուցէ դուք մեզ սովորական կենողների տեղ էք դնում, բայց մենք այդպէս չենք մտածում, մենք ձեզ մեզանից ենք համարում, և արդէն քիչ ժամանակից մեզ մօտ կըլինէք դուք:

Ալեքսանդրա. (մի համովծիծաղալ) Խճարկէ եթէ ևս ձեզ չսիրէի, միայն գրամաֆօնի համար չէի գայ այսուեղ, ինչ կըվերարերի իմ այցելութեան, դա էլ այսպէս քայլ առ քայլ սկէտք է լինի:

Առաքել. Օպերան վերջանում է առաջ, օրիորդ, կամեննեւմ էք մի անգամ էլ կրկնենք, թէ փոխենք մի ուրիշ ձայնով:

Ալեքսանդրա. Ե՞ս, փոխեցէք, մի ուռւսական օպերա կայ անցած օք դոկտորը ածում էր և ես դրսից մտիկ էի անում, նա շատ հիանալի էր, նա անցկացրէք սրա տեղ:

Սրբունի. Նա ինձ էլ է զմայլեցնում: (Առաքել սազում է իսկոյն:)

Սօֆիա. (Ժոշելով Ստեփանի մօտ, երբ Սըրուհին եւ Ալեքսանդրան ըստերեւոյթին զրամափոնով են զմայլած և Երանուշին իր նամակի ընթերցանութեամբ:) Մաեփան, ումբից է այդ նամակը, ինչու է այդքան վաստ աղում քեզ վրայ. (Ստեփան չի պատասխանում:) Երեխի մի ցաւալի լուր է հաղորդում քեզ մի տեղից. հ՞ը, ինչ է գրքուած դրանում. ախ, ինչու բերանդ չես բաց անում. չէ որ մենք մէկսէկու ինցոնք ուրախակից նոյնպէս ցաւակից սկէտք է լինինք:

Ստեփան. (առանձին) Սրբիկայի մէկն է այս տողերը գրողը, որին մարդ երեխայ պէտք է լինի որ հաւատայ: (Սօֆիային) Ոչ ինձ համար և ոչ քեզ համար ոչինչ չկայ սրանում ցաւալի կամ հետաքրքրական. բարեկամներիցս մին իր դրութեան մասին ինձ տեղեկութիւններ է հաղորդում:

Սօֆիա. (ձեռն դէպի նամակը տանիլով) Եւ սակայն թնդ, որ ես էլ կարդամ, մի այդպիսի թեթիւ խնդիր չեր կարող այդքան աղդել քեզ վրայ:

Ստեփան. Եերազամիտ եղիք, Սօֆիա, եթէ չկարողանամ քո կամքը կատարել:

Սօֆիա. Եւ սակայն անկարող եմ ես այդ մերժումն ընդունել, ինձանից մի թաքցնիր, քո մինակի հակազդեցութիւնն ահա ներգործում է և ինձ վրայ, ուներս ահա թուլանում են, սիրսու ահա դուռը է լինուա... .

Ստեփան. Խնդրում եմ... ի սէք Աստուծոյ...:

Սօֆիա. Եւ առաջ անկարելի է անմաս, անհաղորդ մնալ դէպի այդ ինձ և քեզ ցնցող զօրաւոր պատճառք... գոնէ բովանդակութիւնն առա, այդ ինդիքը անսպայման կապ ունի քո՝ զուցէ և իմ կեանքի հետ:

Ստեփան. (յուզումը թաքցնելով) Բարեկամս նշանուելէ մի օքիորդի վրայ, որին այժմ մեղադրում են անբարոյականութեան մէջ...

Սօֆիա. (գլխից մինչեւ ոտք մի սարսուռ է անցնում) Ո՞ւմ հետ են մեղադրել:

Ստեփան. (առանձին) Նետս ահա դիպաւ իր նպատակին: [Սօֆիային] Մի այնպիսու հետ, որ սարսկցնում է ուղղակի մարդու, իր ազգականներից մինի հետ:

Սօֆիա. (կամենալով ժպտալ) Եւ քո բարեկամն էլ մտավախութեամբ և թիւր գատողութեամբ դրան հաւատալով իրա համար մի հարց է ստեղծել:

Ստեփան. (առանձին) Պաշտպանում է ահա իրան: (նրան) Իմ բարեկամը մի դատաւորի չափ զգոյշ է իր խօսքերի մէջ, նա, լոկ մտավախութեամբ, այս լուրն ինձ չէր իմացնի, եթէ ճշմարիտ վիճնէր:

Սօֆիա. (շառագունելով) Ի՞նչ հասակի և ի՞նչ կրթութեան տէր է արդեօք օքիորդը:

Ստեփան. (առանձին) Ճշմարտութիւնը երեան հանելու ամենալաւ միջոց ես գործ գրեցի: (նրան) Այդ մասին նա ինձ ոչինչ չէ դրած:

Սօֆիա. (ըրտինքը սրբելով) Եւ ի՞նչ հանգամանքների մէջ է կատարուել այդ գործը և ի՞նչպէս՝ իմացուել:

Ստեփան. (առանձին) Փայլում է ահա մեղքը իր դէմքի վրաւ: (օքիորդին) Այդ մասին էլ ոյնինչ չէ ասած:

Սօֆիա. (իւլում է նամակը, իր գագաթնակէտին հասած հոգեկան նեղութեան մէջ:) Եւ սակայն ոլեաք է ես կարդամ, պէտքէ ես կարդամ... (կարդում է կամաց, եւ հանդիսատեսը լսում է սա տողերը:) «... Դրա, այդ Սօֆիայի անցեալի մասին, ինչպէս երեսում է, գուք հարց ու փորձ չէք արած, բա ոչ միայն իվանիչի հետ վաստ յարաբերութեան մէջ է, այս մի ամելի էլ ինձ հետ է ապրած...: Անչուշտ, այս տեղեկութիւններից յետոյ, զուք ազատ էք նրա հետ ամուսնանալ կամ ոչ, միայն ես, ձեր ծանօթներից մին, ցաւելով ձեզ վրայ և չկարողանալով բերանացի հարորդել ձեզ, պարտք համարեցի այս գիրը գրել ձեզ:»

(Սօֆիան այլագունում, շփոթում, մերժ Ստեփանին՝ եւ մերժ նամակին է նայում?)

Սօֆիա. Ա՛խ, սա ի՞նչ կրակ ու բոց թուղթ էր գու ինձ տուեցեր, ինչ անսպասելի փորձանք էր, ի՞նչ երկնային շանթ էր...: Ո՞ւմ աչքին եմ ես արդեօք կպչել... ճանաչմաւմ ես, ում ձեռն է սա, որ ժիւլիկն է այս բան արել, որ անխիղճն է այս քսութիւն յանձն առել...»

Ստեփան. (սառ կերպով) Ես ոչինչ չգիտեմ... միթէ գոողը
Այս կարող եր զեր կեղծած լինել:

Սօֆիա. (ամօթք, բրտինք եւ շառազնոթինք հետզհետէ
աւելանալով) Բայց գուցէ մեծ մարդու արարք չէ այս գործը.
մեծ մարդ չի պիտանում այս նուաստութիւն գործելու. մի երեխայի
տղայամտութիւն պէտք է լինի... Այդպէս ձեմ կարծում և դու:

Ստեփան. (ուստ դէպի վեր բարձրացնելով եւ ճակատը կի-
տելով) Ես ոչինչ և՛մ հասկանում ուակայն մի երեխայ, ինչ շարժա-
ռիթներից մղուած, ինչ վրէժխնդրութիւնից առաջնորդուած, պէտ-
քէ գրէր, մի երեխայ ինչպէս կարող էր մի անհիմն զրապարտութիւն
մտածել և իրազործել, ինչպէս կարող էր արարտի զիր գրել...

Սօֆիա. Բայց թող մեծ մարդ լինի, ինչու ենք դրա համար
մեր, բերան յոզնեցնուամ, միթէ մենք կարող ենք արգելելութիւներին
շարանենդութիւն գործելուց, միթէ մի մարդու չարանենդութիւն
կարող պէտք է լինի մեղ վշացնել:

Ստեփան. (Հիզնօքէն) Եթէ շարանենդութիւնը միայն այդ լինէր...

Սօֆիա. (սարասափանար) Եթէ միայն այդ լինէր, —ուրեմն
դեռ ուրիշ շարագործուելուներ ինձ դէմ ուղղած կան..:

(Դրամաֆոն վերջացրած՝ գրամաֆոնի կումբը եւ Երանու-
ժին մօտենուած են դոկտորին)

Մերմին. (ցաւակցարար) Թիզու ես այդշակի աժդունուել դու,
այդ ինչ նամակ էր, Ստեփան:

Առամի. Եատ խոր տպաւորութիւն է զարծել ձեզ վրայ, մի
ցաւալի նորութիւնն...

Ալիքսաներա. (ծիծաղիոտ) Ա.յ, Աօֆիային նայեցէք, գովարը
շատ գուտրիտ է նրա հեա համեմատելով: [Ծիծաղում էթուլանալու
ջանք.] Սյու ինչ բան է:

Ստեփան. (ակնոցը գնելով) Միթէ...:

Ալիքսաներա. (Ստեփանին, նայելին ցոյց տալով) Ձեր հա-
յու լաստում, դուք ինքներդ տեսէք պատեղ ձեր պատկերը:

Ստեփան. (բաց անելով ժամացոյցը եւ կամենալով կարեւո-
րութիւնից զգել Նրանց նկատողութիւնները) Տասն անց է, ա
ուրեմն ճիւանդները դահլիճում հաւաքուած՝ սպասում են ինձ այժմ...:

Ալիքսաներա. (նրան) Կամենում էք փախչել, արդպէս էր դուք
ընդունում ձեր հիւրերին:

Ստեփան. Երաւ որ անքաղաքափարութիւն է իմ արարք, այդ
գէպքում սան էս անենք, օքնութիւն թող քորեխս միծարեն ձեզ, մինչեւ
ոք ես մի ակնարի ձգեմ այնտեղ և դամ: (զլուխ տալով՝ զնում է
վերի լունից)

Արքունիք. (Սօֆիային) Մենք էլ կարող ենք կարդալ այդ նամակը, և դրօրու վիճակը անհանգստութիւն է ինձ պատճառում:

Սօֆիա. Ստեփանի կարդացած նամակը, բայց ինձ մօտ չէ այդ նամակը:

Սգեմաներաւ. (իշպի Սրբութին) Այ, այ, ձեռքումն էս: (Ալեքսանդրան յանկած յարձակում է Սօֆիայի վրայ և աշխատում է նրա ձեռքից դուրս բերել նամակը... բաշրջում են միւսնաց ևւ, Սօֆիան բարկանալով ու Ալեքսանդրան ծիծաղելով, ահազին ժխորն եւ յարցանում, վերջապէս Ալեքսանդրան չէ կարդանում թուղթն առնել:)

Սօֆիա. (Ալեքսանդրային) Գուհեկութիւն, կրպութիւն է կատարեալ այդ վարժունքի, ուրիշն նամակը խնդրեին անդամ՝ քաղաքարնաթեան դէմ է, ուր մնաց դօրով առնելը, բայց քաղաքավարութիւնը քեզանից հավար տարի հեռու է, քաղաքավարութիւն և ուրիշն իրաւունք բմբւնող մարդը՝ ուրիշի բաց նամակն անդամ չէ կարդ առանց վիկնալու կարդալ առանձին:

Ավելաներաւ, Բայց նամակը գնն չէ, դոկտորին է, ինչ իրաւունքով դու կարող ես դոկտորի նամակը կարդալ և նրա քոյրը չէ կարող կարդալ:

Սօֆիա. Պէտք է գուշակէիր «ինչ իրաւունքով», եթէ չպիտենայիր էլ:

Երանենի, (լշպի Ալեքսանդրան) Այն «իրաւունքով» որ դոկտորը նրան առեց իր նամակը կարդարու և ոչ թէ՝ մեզ:

Սօֆիա. (շուրջալով երեսն նրանցից, նրանունուն՝ կիսալուր ծայնով, իր յոյնն, իր իլէալն վնատրողի կերպարանքով) Իսկ Ստեփանն ուր է, որտեղ գնաց, առանց մեզ ոչինչ ասելու:

Երանենի. Քա չիմացաք, չտեսաք... չէ, գնաց ընդունաբանը իր հիւանդներին ընդունելու: (Սօֆիան, վշտացած եւ ամաշած, զնում է ընդունարանը. Երանունին էլ նրա ետեից:)

Ավելաներաւ. Քա ինչ հանելուկ էլ աս, ինչ «իրաւունքի» մասին էր իրաւունք մեր ինպելիքէնո՞ օրիորդը, և յետոյ, եթէ մի տխուր անակնկալ էր զբուռ պ. Ստեփանին, ինքն ինչո՞ւ էր վշտաբեկ լինում:

Սրբունի. Ես էլ քեզ պէտ ոչինչ չհասկացայ ոչ նրա այդ ցնդարանութիւնից և ոչ այդ անակնկալից, և մեր բարեխիթան էլ առանց և մեզ յայտներու այդ ցաւը, թողեց ու գնաց: (Սրբունին զնում է շտապով դէպի զզրոցը և պիտակ, թուզ եւ այլն, ևսեւ ընկուզի մուրաբա, պատրաստում է բեռելու:)

Առաքել. Ստեփանի միտն անշուշտ այն էր որ նա չկամեցաւ այդ անակնապովն տրտմեցնել և իր քոյրերին, սակայն, իմ կարծիքով, սխալ գատաղութիւն է.:

Ալեքսանդրա. (*Սըրբունուն*) Ա'ն, ումն համար էք այդ նեղութիւն կրում, (ձեռը եռպկայի զրապանը տանելով) այց, (ցոյց տալով մի քանի նմոյշներ) պէտք է գնամ գալապինսկի կտորներ առնելու.:

Մերաւնի. (Երկու ձեռքում միմի աման) Էլլ կըզնաք. նստեցք, սրանք վայելեցք, յետոյ: Խ'նչ ճաշակաւոր կտորներ են. բայց արդէն լաւ կատարմենք ունիք, էլ ինչո՞ւ.:

Ալեքսանդրա. Բայց այնքանվերջին տարապը չունիմ. ասում են Պարիժից լաւ մօդնի հագուստներ են քերած, ես ուզում եմ.:

Մերաւնի. Բայց էլլ ժամանակ շատ ունիք, նստեցք, անուշ արէք, դրանք հօ ուսեիլու համար են.:

Ալեքսանդրա. (Ճեռ տանելով դէսի մրգեր) Ի՞չ ուրեմն ես այսպէս ստորի վրայ մի-երկու հատ կառնեմ, մնացածը գուք վայելեցք և մի փոքր էլ (կատակ անելով) Սօֆիային պահեցէք: (Երկրն էլ մի անզամից ծեռներն ամանն են մոցնում հանում. Սըրբունին լաւ թուզ եւ մուրաքա է հրացնում՝ օրիորդին, իոկ Առաքելը պիտուկ է կոտրում նրա համար:) :

Մերաւնի. Սօֆիային, որ չամաչեց ձեզ գէմ այդ անամօթութիւն ցուցնելուց, զահըռումար, գրող ու մահ էլ արժան չենք համարում պահելու: (*Մ'ծ ըրբիջով ծիծաղում եւ ուսում են.*)

Ալեքսանդրա. (Կամննալով մեկնել) Նորհակալ եմ, այս սէլը, որ ցոյց ստեցիք դէսի ինձ, յափառեան անմռուանալի պիտի մնա ինձ համար. (Գլուխը կրկին եւ կրկին խոնարհեցնելով) Հորհակալ եմ, Հորհակալ, Հորհակալ... (զնում է)

Առաքել. (Երբ Սըրբունին ուզում է նրան մի քանի ասել-Հիմա իմ կարծիքն ես ուզում իմանալ, թէ այս հարցը, որ մի ժամում այսքան ձևեր ստացաւ, ինչպէս պէտք է վերջանայ, — վերջին երկոյթները ցոյց են տալիս որ նա կըզերջանայ Ստեփանի և Ալեքսանդրայի ամուսնութեամբ:

Մերաւնի. Այդ յոյսով ես չեմ կերակրուում, Ստեփանի և Սօֆիայի խնդիրը աւելի ամուր հողի վրայ է, քան մենք կարծում ենք[արի՛, մը խորհուորդ անենք, թերեւս այդ կերպով այդ շնչը կործանենք, արի՛, մի միջոց վնտրենք, թերեւս դրանով այդ պղտոր աղջինից, այդ տակի ճիւաղից, Ստեփանին ազատենք.]

Առաքել. Ես այժմ վազում եմ... մենք կը մտածենք և որու-

դէմ նորանոր արգելքներ կըյարուցանինք և նորանոր ինտրիկներ կստեղծենք... (Հճզնօրէն) սակայն չեմ կարսղ այժմս իսկ չայտնել իմ հիացմունք դէպի քեզ, եղբայրսիրութեան ամենաբարձր օրինակն ես ընծայում. Էլի՛, նոյն չափով եմ հիացմունքը պիտի յայտնէի, եթէ Արշակի սիրուն ամենաբարձր օրինակը ընծայած լինէիր, որի մեք գրաբանը այնքան պիտանի կըդինէր ինձ և քեզ համար:

Սրբուիր. Յիմարը... Ուրեմն դու այդպիսի դէմքըում պատրաստ ես իմ սէքը ծախել լիք գրաբանների: (Առաջել ծիծաղով ողղուած է դէպի միջին դրուը)

Սրբուիր. (Միմի հատ թուզ ուտելով) Այդ երեանցի սատանան ինչպէս գտաւ իմ սրտի ցաւուտ տեղը...: Ինչ մեղքը, եթէ ես եղբօրիցս աւելի իմ վրայ մտածեմ, եղբայրս միշտ էլ կարող է իր սրտի սիրածը ճարել, իսկ ես, քառասուն տարեկան եմ, որ չնորհով մարդ մի օր ուշադրութիւն ինձ վրայ դարձեց. ամուսին չկայ, չկայ, մի համակրող էլ չունենամ... թոյլ տամ որ Ստեփան իր սիրած Սօֆիան առնէ, ու չկատարեմ Արշակի ցանկութիւնը, որ իր քոյլն է առաջարկում, և վիրաւորելով՝ բաց թողնեմ նրան ճեռքից, կորցնեմյարաբերութեան յաբմար պայմաններ,—այս բարութիւնները կըպարգևեն սրտիս այնքան բաւականութիւն, որքան սիրականիս սէքը... դէսլի Սօվիան՝ խղճանարութիւնն աւելի՞ պէտք է տանձէ ինձ, քան սիրահարիցս կամաւոր հրաժարում... Երկինք պիտի դատապարտէ ինձ, և ինչու, ինչու տուած է ինձ տգեղ մարմին և բուռն կիրք, փոխանակ տալու գեղեցիկ մարմին և հով սիրու: Ինձ համար լաւն այս, է, ինչ որ թերագրում է որտիս խոշոր մասը... Երկինքն չէ չի հակառակ կիրամ:

Պահանջում մը պետք է ուտ ու նույն ու առաջ գնարքածու է: (Ամարագոյր)

Եօ, գնամք չ գոյիր նարով գնայով մաքու քմամ այսուրա դաշտայաշեր և քառուսուայով քամալ

ուսուածք զի սովորութեան անուրա գոյի մահամական քամական չ է

զամաք զի սովորութեան անուրա գոյի (մահամական) քամական չ է

գոյի չափ քամու չափ գոյի գոյի գոյի գոյի զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

գոյի չափ քամու չափ գոյի գոյի գոյի զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

զամաք զի սովորութեան անուրա գոյի (մահամական) քամական չ է

գոյի չափ քամու չափ գոյի գոյի գոյի զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

գոյի չափ քամու չափ գոյի գոյի զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

զամաք զի սովորութեան անուրա գոյի (մահամական) քամական չ է

գոյի չափ քամու չափ գոյի գոյի զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

զամաք զի սովորութեան անուրա գոյի (մահամական) քամական չ է

գոյի չափ քամու չափ գոյի գոյի զամաք զի սովորութեան անուրա գոյի մահամական չ է

շամբիզունի զամայում և դժմաց տուալդ դժմայում դժմայում ներ
յամայում բայց մասնաւ բազաք նաև մասքաւ (Նիցումբէ) ... դժմայում
մշտամիջու վեկազամմաւ մամկաւողալպարը բայց դաշտը գլուխահէ նոյ
չնեմ քիմազ համբ զամայուն? նաև խոփաւ միու ուղի Առաջանց ու
այս գոյ ուժին ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱԲՈՒԱՇ առաջամմաւ մասքի պարզը

ուղարկած բաց և նոյ զամայուն վեկազաւ մասքի զամայուր
բամասքամ նույայի զամայուր ուր մասքի ու զամայուն մասքամ
Տիկին նունի ընակարանում մի մարուր սենեկ. չորս պատու-
հան՝ դէպի աջ, երեք դուռ. մին՝ մէջտեղ, դէպի նախասենեսկ,
երկրորդը՝ ծախ կողմ, դէպի ննջարան, երրորդը՝ վերի կողմ,
դէպի սեղանասուն: Յատակի վրայ՝ քօյեալ եւ նոր ծնի թաւ-
շեայ աթոռոներ եւ կրկնաթոռոներ, կողմեակի մասերում, դէմ ու
դէմ, երկու պահարաններ, աջ ու ծախ՝ սեղաններ, չորս անկիւ-
նուու, հայելիններ եւ չորս կողմում, պատերի վրայ՝ խղաններէ եւ
ուկեցրանակ նկարներ: Երեկոյ է եւ առաստաղից, կախուած

լամբան միծ լրյա է արձակում:

— պատուան նույայուր ուղարկած մասք նումբրունց յաց խոյմուարքի և նոյ մասք
մամբայուրց զամայուն կուն 1 սկա— զամայունաւ զամայուն
զամայուն ուղարկած մասք մամբայունաւ մասքի ուղարկած
ուղարկած ԱՐՃԱԿ, ԱՐՔՈՒԵՔԻ, ՍՑԵՓԱՆ, ԱԼԵՎԱՍՆԴԻԱՆ մատիւն

և նոյ նույայունաւ ուղարկած զամայուն զամայուն ուղարկած
(Աղշակ եւ Արբուճին խօսակցուուն միջին դրան մօտ, իսկ Սահիան եւ Ալեքսանդրան թօնալի առաջ, միմեանց կողքին
նատած են, Ալեքսանդրան, նայելով նօսուն, ող դրտած է թօնալի վրայ, երկու աշտանակների մէջտեղում, ածուլ է Սերենաձ
Ռինա Պիեռտ մօյ լետիտ սի մօլիբուու.

Մրբուիի, Աւրելեն, յարգելի պարոն, գուք մեզ և մեր այս խնա-
մական խումբը թողած՝ պէտք է զնաք, չէ:

Արշակ. Պարտաւորուած եմ դժբաղդաբար այդպէս անել,
ազնիւ օրիորդ:

Սրբուիի. (Ժպտազին) Երեկի, օպերա կամ կոնցերտ էք գնալու
մի տիկնոջ հետ:

Արշակ. Ո՞չ, եթէ գնայի, ես ձեզ հետ կը գնայի, որեէտ տիկնոջ
հետ չէի գնայ. արդեօք դուք կը ցանկայիք գնալ, ես կարտո էի ձեզ
մի տոմսակ վերցնել:

Սրբուիի. (Ժիծաղելով). Կը ցանկայի, բայց առանց ձեզ ես էլ
չէի ցանկանայ այս խնջողք ձգել և զնալ:

Արշակ. (Ուրախանալով). Այդ մեժ համակրանքի համար, որ

շատ թանկ արժէ ինձ համար, աէտք է զոհեմ իմ գործի մէկ մասը, ժամի 8-ին Արքունական թատրոնում կապասեմ ահա ձեզ, համեմեցէք, պատուական օրիորդ...:

Մրգուհի. (հազիւ զավելով ուրախութեան աղաղակ). Օ՛, այս գիշերը աննման հանդէսների ժամեր կը լինին մեզ համար, ձեզ հետ միասին օպերա լսել ու ձեզ հետ միասին գալ, այս խնջորք վայերել...:

(Եյ անգամ Ստեփանը է ածում „Ըլեզ“ (Պետական ռոմանց):

Արշակ. (պնդացնելով ծեռքի վարդի փունջի կապը). Դա չատքիչ կը լինէր, եթէ միայն այդ լինէր. դա սկիզբն է մեր մասերմական ուրախութիւնների:

Մրգուհի. Անկասկած, այս աստիճանի փոխադարձ համալիրանք կը փոխուի սիրոյ, և սէրը... (Ամաշում է):

Արշակ. (ծիծաղում է) Սիրահարութեան... (Ամաշում է) Ուրեմն ընդունեցէք այս անուշահոռ վարդի փունջը, որ միայն ձեզ է հարկաւոր, որպէս նշան մեր առաջին բարեկամութեան (փունջը նրան է մեկնում):

Մրգուհի. (ստանալով) Եւ դուք փոխադարձաբար (Քրպանից մի շիշ է հանում, բերանը բանում, նրա վրայ սրնկում եւ ապա դէսի նա ուղղում) ընդունեցէք այս անուշաբոյր դուխին որպէս նշան այդ բարեկամութեան տեսականութեան:

Արշակ. (խանդոյ երևոյթով) Դուքի... ահա հոսանում (Տոտոսում է) և նորից ձեզ եմ վերադարձնում. դուխին, վարդն ու Սրբուհին միմեանց այնպէս են սազւում, ինչպէս մանիշակ, շոշանն ու միխակ. (մէկ ծեռնով դուխին է մասուցանում, եւ միս ծեռնով բարձրացնելով դէսի զլոխ, շնորհակալութիւնն է յայտնում:) Խնդրեմ..

Մրգուհի. (Դէսի նոր զնալով) Դուք ինձ վիրաւորում եք... այդ չի կարելի, մի ուրիշ չի լինէր, կարելի էք:

Արշակ. (շիշը դնելով գրպան եւ դառնալով դէսի Ստեփան) Ես իդու. զասպադին... այդ փող ու բաժինքի խնդիրները դուք կարգադրեցէք մօրս հետ առանց իմ մասնակցութեան, դա ինձ համար կարեւոր չէ, իսկ գործի այն մասը, որ կենդանութիւն պէտք է տայ սրահ և հոգու, մի. կատարէք առանց իմ մասնակցութեան, սպասեցէք ինձ:

Ստեփան. (վերկենալով տեղից) Եատ բարի, գասպադին Արշակ, բայց ցանկալի էք որ երկուսին ևս մասնակցէիք, և այդ ձանձ-

բայլի նիւթականի հաշիւնը, որ ինձ համար տասներորդական հարց է։ միայն մեր վկով չգտէիք։

Ալեքսանդրա. (վերկենալով և թռչելով եղջօր առաջ) Հաս ուղիղ է ասում Ստեփան, ինչ կը լինէր, Մ'ըակ, եթէ այս ոչ կ երեկոյ մեղ համար իսկի էլ դուրս չգնայիր։

Արշակ. (զուարճախօսութեան ձեւով) Բայց ես հինգ արս, ձեր երկուսիդ, գործին համար եմ գնաւում. . գնում եմ ձեր ամուսնութեան համար փող բերելու, դէ, եթէ դուք կրինիք այնքան բարի, որ չէք պահանջի ինձանից փող, ես մեծ չնորհակայութեամբ կը կատարեմ ձեր հրամանը։

(Ժիծաղները: Միջին դռնից զնում է Արշակ, Սրբուհին եւս անզգալի կերպով հետեւում է նրան):

2

ՍՏԵՓԱՆ եի ԱԼԵՔՍԱՆԴՐԱ

Ալեքսանդրա. Այժմ ահա առանձին ենք, Ստեփան, սկսենք մեր խօսակցութիւնը որ կիսաս թողեցինք։ Արդեօք առաջին անգամ ինձ տեսնելիս՝ ինչպէս թուեցայ ես քեզ, լաւ տպաւորութիւն թույլեցի՞ քեզ վրայ։

Ստեփան. Ո՛չ, նախ դու ասա, ես ապա կը պատասխանեմ։

Ալեքսանդրա. Քեզ տեսնելիս՝ դու թուեցար ինձ ինչպէս մի շիկ մարդ, մի կնեազ, մի կատարեալ ջենումէն. . . Դէ, դու ասա հիմա։

Ստեփան. (Դիտմամբ չափազանցելով) Եւ ես քեզ հանդիպելիս՝ ինձ թուեցար ինչպէս մի հազուադիւտ, թիֆլիսի ամենափառաւոր օքիորդ, և ինձ վրայ թողեցիր գեղասփայլութեան և չնորհալիութեան խոր տպաւորութիւն։

Ալեքսանդրա. (Խաղալով նրա ժամացոյցի շղթայի նետ) Ամենքն էլ ինձ համար այդպէս են ասում։ Ա՛խ, ինչ պէտք է ասէիր, եթէ տեսնէիր և իմ զանազան լուսանկարներս։

Ստեփան. Ո՛վ գիտէ, կասէի գուցէ մի հատիկ է Կովկասում։

Ալեքսանդրա. (արծակելով նրա թուլացած զալստուկը) Եթէ այդքան բարձր էիր ինձ գնահատում, էլ ինչո՞ւ էիր ընկել Սօֆիայի ետուից։

Ստեփան. (լուրջ կերպարանորվ) Այդ բանում, պէտք է ասած, սկզբունքի հարց կար, ես նրա հետ քեզանից առաջ էի ծանօթացել և ամուսնութիւն առաջարկել, դրա համար ուզեցի յարդել այդ-

սկզբունք, թէ չէ ես նրան սկզբում էլ քեզ վրայ չէի գերադասել. եթէ դէպի նա ունէի համակրանք, դէպի քեզ՝ ոչը, եթէ նրան յարգում էի, քեզ՝ պատռում, եթէ նրան հաւանում էի, քեզ վրայ՝ հիանում... Բայց երբ նրա անցեալը դաւաճանեց մեր ուխտը, երբ նրա զգուելի ամենաբարոյականութիւնները երեան եկան... վերջապէս չըրբենք անցածը:

Ալեքսանդրա. (Կապելով նրա զալստուկը) Լաւ, ես փակում եմ իմ աչքը այդ անցած գործերի վրայ, միայն պահանջում եմ որ սրանից յետոյ սիրոյ ամենափոքը նշոյլ անգամ չցոյց տասն ոչ նրան և ոչ ուրիշ որևէ կնոջ... (կարծես բարկանալով) Ես նախանձո՞ւ եմ, նախանձո՞ւ... ամուսնութիւնից առաջ ինչպէս ես դու ապրել, — ես այդ չեմ վնտրում, դու ապրած ես այնպէս, ինչպէս ամեն մի ամուսի մարդ... բայց ամուսնութիւնից յետոյ ինձ համար անտանելի է... իմ սիրաը տարբեր է այն կանանց սրտից, որոնք հաշտ աչքով են նայում իրենց ամուսինների ցոփ կեանքի վրայ այս ազատ ժամանակում:

Ստեփան. Ես ոչինչ նկատողութիւն չունիմ քո խօսքերի գէմ, ոչ իմ ամուրական բնական կեանքի մասին և ոչ իմ ապագայ ամուսնական կեանքի մասին, որ այնքան արդարացի կերպով լահանջներ առաջարկեցիր, սակայն յոյս ունեմ որ, եթէ (մի զայտնիք պոկելու համար) քո անցած կեանքն ես չէ եղած բոլորովին անբիժ...:

Ալեքսանդրա. (Վիրաւորուելով) Եթէ իմ կեանքը չէ անցած անբիժ... (ծիծաղում է) Խոստովանիր որ այդ խօսքը անդգուշութեամբ արտասանեցիր. Ինչպէս կարելի է ինձ նման մի օրիորդի... Բայց մեղադրելի չէ, աչքդ վախեցել է Սօֆիայից...: Բայց իմ անունը «Սօֆիա» չէ, իմ անձը, որ ազատ է մնացած այդպիսիների արատաւոր կեանքից, թէն պէտք չկար ասելու, քեզ կընծայուի մինչև մահ և իմ սրտի քուրան, որ դեռ չէ վառուած ուրիշ տղամարդու համար, քո սիրով պիտի հրդեհուի մինչև գերեզման:

Ստեփան. Եւրեմ այս անկեղծ արտայայտութիւնները բաւական են որ մինչև մեր կեանքի վերջ միմեանց հաւատանք:

Ալեքսանդրա. (սիրով բաղցածի երեւոյթով) Ո՛չ, բաւական չեն, տղամարդիկ միշտ խարում են իրենց կանանց, որքան էլ ապահովացնեն նրանց, մի գեղեցիկ կնոջ հանդիպելիս՝ մոռանեամ են իրենց կնոջ և նրան յարում, կամ միաժամանակ երկուսին էլ սիրում, այդ երկու դէպքն ես անհանդուրժելի են ինձ...:

Ստեփան. (վստահացնող ծիծաղով) Եւ առիթ էլ, պահանջ էր չենք ունենայ, կամ ինձ համար ասեմ, չեմ ունենայ... ես միտ չու-

նեմ ասխացու կեանը վարելու, որտեղ դնամ, քեզ ինձ հետ կըտա-
նեմ...:

Ալեքսանդրա. Ո՞չ դա էլ բաւական է, ես հօ մինչև երեկոյ
քեզ հետ ման շեմ գայ...: Երդուիր Կուսանաց վաճրով, Մուղնու եկե-
ղեցով, Բէթլէհէմի Աստուածածնով...:

Ստեփան. Կուսանաց վածքով...: Ո՞չ, երդուեմ դրանցից աւե-
լի գորաւոր բանով:

Ալեքսանդրա. (մտածելով) Ի՞նչ բանով...:

Ստեփան. (պիրկը բանալով) Քեզ այսպէս ուժովին համբուրե-
լով: [Համբուրում են, յետոյ բաժանում:]

Ալեքսանդրա. (երբ հարքածի պէս իրար են նայում:) Թող
այդ սուրբերը մկայ լինին մեր այս ժամուայ...: (սեղանատան կող-
մից մոնում է նույն սերելով իր հետ սօհնարի, կարագ, պա-
նիր, մորաբա եւ այլն. իսկ Լիսան ըերու է միքանի զաւաթ
թէյ և լիմոն: Այս բաները դնում են վերի աջ անկինի սեղանի
վրայ: Լիսան իսկոյն վերադառնում է:)

3

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ, ՍՏԵՓԱՆ, ՆՈՒՆԵ, ՅԵՏՈՅ ՄՐԵՈՒՀԻ

Նունե. (կատարիալ ցնծութեամբ) Թէ, զաւակներս, մի՛ ընդ-
հատեք ձեր դուարձութիւն, ինձ շատ ցանկալի է լսել եմ Ալեքսանդ-
րայիս երջանկութեան պուածին խօսքեր... Թող ամեն գործեր մի առ-
ժամակ տեղի տան երկու կոյսերի միացման այս սուրբ խորհուրդին...:

Ստեփան. (բարձր աղաղակով) Կեցցէ մայրիկ, կեցցէ իմ դոքանչ,
որ այսքան սրտագին ողջունում է մեր այս խորհուրդը, որ այսքան
եռանդագւն գալիս, մտնում է մեր ամուսնութեան նախատօնակը:

Ալեքսանդրա. (նոյնախիս աղաղակով) Կեցցէ մայրիկ, կեցցէ
իմ ծնողը, որ այսքան մեծ սէր է ցոյց տալիս դէպի իր աղջիկ և դէ-
պի իր փեսան:

Նունե. Կեցցեն և իմ հոգու երկու հատորները, որոնց արևովն
ուրախանում եմ ես ահա, և ինչ կայ ինձ արդարե իմ կեանքում ա-
ւելի ուրախալի քան իմ աղջկայ բաղդաւորութիւն, և ինչ կայ նրա
համար այս աշխարհում աւելի ցանկալի քան այն որ այսօր դանում
է իր երազած փեսային... կեցցեն, և մինչև վերջին կաթիլ վայելեն
միմեանց սէր:

Մրեուհի. (մտնելով և լսելով նրանց բարեմաղթութիւններ)

Կեցցեն, այս, կեցցեն և իրենց կեանքում ոչինչ այցաւ) և մինքանք շտեսնեն:

Նուն, Կեցցես և գու, Արբուժի, կեցցես և արժանանասաւ զու ևս քո թագն ու պսակին: (ծիծաղները:)

Սրբուհի, Տիկին, ես մի քաֆակ մէջ պէտքէ խմեմ և քիչ ժամանակով գուրս գնամ... (մի զաւաթէ վերցնում եւ զաւաթրէ ծեռքից վար է ընկնում:) Զեռքերս էլ աւրախութիւնից մուտքերան այսօր իրենց գործերը... (ընդհանուր ծիծաղները: Ալքականդրան մի որիշ զաւաթէ և տալիս նրան:) Տիկին, ուզում էք նեղացք, ուզում էք՝ ո՛չ, այս ծիծաղների վրայ ևս մի քէֆ էլ սփոտի անեմ, հաւատացած եղէք, անկարող ևմ տրամադրութեանս պիմադրեր. (զաւաթ ծեռքում խաղում է սենեակի մէջ, Ալքականդրան քայլ առ քայլ հետեւում է նրան և նրա խամութեան վրայ պատիկ ծիծաղում: Տիկին և Ստեփանն էլ ծիծաղում են, յետոյ մի-մի զաւաթ վերցնում եւ իրենց գործի վրայ խօսում. խաղու շարունակում է մինչեւ տեսիլի վերջ:)

Ստեփան. (թէ) Խմելով) Կըկամենայիք, մայրիկ, որ նըսնք այն տեղ թուչկոտէին և իրենց սրտին բաւականութիւն տային, մենք էլ այսաեղ մեր պայմանագիրը կադմէինք:

Նուն, Այս, Ստեփան ջան, զիխաւորն այս է, եթէ ուս չինի, նա էլ չէ կարսղ լինել:

Ստեփան. Իէ, ուրեմն չորհ արեք նորից պատմել թէ ինչ պէտք է տաք Ալքականդրային, որպէսպի նրա համեմատո...:

Նուն, (խմելով) Մենք, նկատելով որ պսակուելուց յետոյ ձեր ծախսերը կը շատագնան,

Ստեփան. (ընկնարտելով) Օրինակ, պէտք է այն ժամանակ աւելի սենեակներ վարձեմ, աւելի կա՞ կարասիք պատրաստեմ, կնոջս հագուեցնեմ, զաւակներ ունենալիս պէտք է հետզհետէ աւելի մեծ թուով սենեակներ բռնեմ, կարասիքներ զնեմ, նրանց սնուցանեմ, ուսման տամ, բարձր կրթութեան ուղարկեմ, ամուսնացնեմ, օժիտ պատրաստեմ...:

Նուն. Բուցի այդ ծախսելից, դուք կունենաք և ուրիշ մեծ ծախսեր. մեր ֆամիլ այս քաղաքում, Բէհրուդուների, Արշակունիների, Զիթախովների պէս, վաղ ժամանակուայ շէն տուն է... մենք ունինք հարուստ և արքասովկատ բարեկամներ... աղջիկս անա այսպիսի տան և այսպիսի շրջանի մէջ է ապրած, դուք ստիպուած պէտք է թողնէք ձեր համեստ նիստ ու կաց, և առջկանս, ժամանակի պահ հանջների համեմատ, այնպէս պահէք, որ...

Ստեփան. (սօվարի ուտելով) Հասկանալի է, ձեր շրջանը կը փոխէ իմ ծախսի հասկացողութիւնը, ևս պարտաւորուած կը լինեմ Ալեքսանդրայի պահաջներին, թէ կուզ շատ չւայլ էլ լինեն, բաւականութիւն ապէ:

Նաևն, Ահա այս մեծ կարիքները նկատի ունենալով՝ մենք Ալեքսանդրային մեծ օժիտ ենք յատկացնում, միայն թէ դուք ևս փող աշխատերում մեծ ջանքեր ցոյց տաք...

Ստեփան. (թէյ խմելով) Անկասկած, թէ չէ, այսքան արտասովոր ժախսեր, մի այսպիսի կրւտուրական ժամանակում, երբ ամեն մի քայլափոխում փող է հարկաւոր լինում, ես ո՞ր տեղից պէտք է հոգամ... մինչև այժմ, հետեւելով ուսանողական հիւանդու գաղափարներին, հիւանդներին ձրի է դարմանում շատ անգամ, սակայն սրանից յետոյ...:

4

ԱԹՎՁԻՆՆԵՐԸ ԵՒ ՍՈՓԻԱ, ՅԵՇՈՅԵՒ ՄԻՄԵՅՆ, ԱԼԵՔՍՈՅՆԴՐ

Սօֆիա. (զալով եւ Ստեփանի առաջ կենալով) Ախ, դու այստեղ էիր և ես մի ժամեց աւելի է որ քեզ էլ փնտրում...:

Ստեփան. (շփոթուելով եւ կակագելով) Հա, ևս այստեղ էի... ինչու էլք փնտրում...:

Սօֆիա. Վեր կաց, գնանք, յետոյ կիմանաս...: Մի բարեկամի այցելութիւն պէտք է ատանք միասին: (Ստեփան ոչինչ չի կարողանում պատասխանել:) Անհրաժեշտ պէտք է այցելենք...:

Նուևն (Սօֆիալին՝ խատութեամբ) Խնչ այցելութիւն... նա ոչոքի ոչ մի այցելութեան չի գնայ:

Սօֆիա. (Ստեփանի առաջ թրողթ եւ թանաք տեսնելով) Մի գուցէ, մայրիկ, հիւանդութիւն ունիք և ձեզ համար դեղագիր է պատրաստում Սովորն:

Ալեքսանդր. (մօտենալով Այս, դեղագիր է պատրաստում...) (աշքը ցոյց տալով) այ, աշք լիքն արիւնով... (Սրբուին եւ Ալեքսանդրան ժամանակ շեն ունենում ծիծաղելու մտնում են Սիմեօն եւ Ալեքսանդր:)

Սիմեօն. (զլուի տալով) Բարեկերկայ եղողներին:
Ալեքսանդր:

Զայներ. Բարեկ: (Սիմեօն եւ Ալեքսանդր կարգով սեղմում են ամենքի ծեղը, յետոյ նատում վարի աջ անկիւմի սեղանի մօտ, Ալեքսանդր թաշկինակով երես ու զլուն է սրբում, իսկ Սի-

էօն երկար-երկար նայում է դէպի Ստեփան և տիկինը, երբ Ալքսանդրան և Սրբուհին թեւանցուկ ճնմում են սենեադի մէջ, և երբ Սօֆիան հազիւ շարժում է դէպի հոյ և ապա անշարժ կծնում, և մոտառանց տեսիլին նայում, իրողութիւնը ըմբռնելու ծեւով!)

Նունի. (ցածր ծայնով՝ Ստեփանին) Վերցրէք գրիլը, որպէս պի մեզ զբաղած տեսնեն, գնան: Ահա այդ հանդամանքները նկատի առնելով՝ մենք 7,500 բուրլի կրվճարենք ձեզ պսակադրութիւնից առաջ, և 7,500 բուրլի՝ պսակադրութիւնից յետոյ. վերջին գումարը, իրբու Ալքսանդրայի անձեռնմխելի սեփականութիւն, ուղղակի բանկին պէտք է յանձնուի....

Սիմեօն. (Սունէին) Արշակ տանը չէ, քէռեկին:

Նունի. Ո՛չ, Սիմեօն, թէյ խմեց և շտապով գնաց. երկի, ուշ կը վերադառնայ, շատ անհրաժեշտ գործեր ունի այսօր:

Սիմեօն. Ես իր հետ աւելի անհրաժեշտ գործեր ունէի: (Սիմեօն թղթապանակի միջից դուրս է հանում զանազան վիճակախաղի թղթեր և հաշում, ծալում է: Տիկինը զնում է նրա մօտ և, ոտի վրայ, թղթերին է նայում հետաքրքրութեամբ:)

Սօֆիա. (առանձին) Միթէ կարելի է հաւատալ... մի օր առաջ հաստատուն ուխտերով, սրտի զգացումներով կապել իր բախտ իմ բախտի հետ և այսօր կապել նոյն բախտը ուրիշ հետ... հաւատան, սակայն ինչպէս մեկնել այս երևոյթը... ինչ գործ կարող էր նրան և սրանց համախմբել այս սեղանի շուրջ... սակայն ինչպէս կարող էր մի կը թուած մարդ, իրան ամենքին բարեկամ և ցաւակից ցուցնող մի գոկտոր, ստոր զբարառութիւնների պատճառով, այսպիսի անսագնիւ քայլ անել....: Ա՛հ, մի թուլութիւն, մի դալկացում ևմ զգում... տաքանում և տժգունում է ահա երեսս... ամփոփեմ ուժերս, դարձնեմ դէմքս իրանից, որպէսզի լայտակուեմ... (դարձնում է դէմքը):

Ստեփան. (առանձին, արտաքրելով իր մտածման հետեւեալ հատուածը)... Արդեօք չմեղանէցի, երջանկութիւն արդեօք շփոխեցի դժբաղդութեան հետ... այս անմեղ նայուածք, այս հեղ և ազնիւ կերպարանք, այս վեհ և պարզ ընթացք, որոնք զրաւեցին ինձ, հմայեցին սիրտս, շղթայեցին մեր հոգիները իրար հետ, այս բոլորը չեն հերքում ժառացի և Առաքելի վկայութիւնները, մի ինչ որ նամակի խօսքերը, իմ հոգեբանական եզրակացութիւնները....:

Սիմեօն. (Սունէին) Սյս վիճակախաղի թղթերն ահա Արշակին պէտք յանձնէի. ինչ անելու է հիմա:

Ե Առ Առնեա, Տուեցէք ինձ և ես կըտամ իրան, և եթէ մի բան էլ ասելու էիք, ասացէք ինձ և ես կասեմ իրան:

Սիմեօն. (Ճաղրածակամ դժմթով նայելով նրան և առնապարակ առնենքին) Քեւեկին, դուք կամենում էք չառապով ինձ ճանապարհ գցել, մի գործ ունիք և իմ ներկայութիւնը արգելք է լինում դրան, (Նվազավախ նաև նշան) Առնեա մեջ, մասնաւում ունենալիքի մասին ապա թէ ոչ եթէ ուրիշ գործ չունիք, սպասեցէք մինչև որ դայ:

Սիմեօն. (Այս երեսով) Ոչ ոչ, ամեն ինչ ցոյց է պալիս որ դուք թաքուն-թաքուն մի գործ էք.. կատարում այս բռակիս... սակայն զարմանալին այն է որ դուք մինչև հիմա ոչինչչեք թաքցնում ինձանից, ինչո՞ւ պաօպ...

Նունի, (բարկանով) Ե՞ն, Ամեօն, դուք ձեր կառակներից խելի ետ չեք կենում...:

Սիմեօն. Հօ պարզ երեսում է... խնդրեմ, դուք նեղութիւն, մի կրեք ասելու, թողէք, ես կասեմ, թէ ինչն ինչումն է. մի պարասիօնով էք կամենում ուտել առանց ինձ. (Ալէրսանդրան, Սրբուհին եւ Ալէրսանդր ծիծաղում են, Սօփիան եւ Ստեփան յուզուում են տարբեր զգացումներով, Նունին բարկանում է:) Վախենում էք որ ձեզ խոտ առաջարկեմ... Ոչ, ոչ այս, ոչ այն, մի նշանախօսութիւն էք կատարում., հանեցի, թէ չէ...

Նունի. (Զարդար ծիծաղելով) Ուսմուն ումհետա պէտք է նշանենք: Սիմեօն. (Այս նոմօրով) Օրինակ, (Սրբուհոն ցոյց տալով) այս օրինորդ ին Արշակի հետ, Ալէրսանդրային այս դոկտորի հետ... (բացի Ստեփանից ու Սօփիայից ծիծաղում են ուղիւնք.)

Նունի. (Այնպիսի ժպիտով որ հաստատում է) Արդարիսի մի միտք չենք ունեցել, բայց եթէ լինէր դրանց մէկն ու մէկը, շատ ցանկալի կը լինէու:

Սիմեօն. (դափի նունին) Մրանց մէկն ու մէկը երականանում է աշաւ. (Ճեղ տալով Ալէրսանդրային) մի լաւ ընտրութիւն էք կատարել, Ալէրսանդրա, նշանուում էք մի անձնաւորութեան հետ, որ թէ մեծ արժանաւորութիւն ունի, թէ բարձր արհեատ, որ ահովացնում է ձեր կետնք. ցանկանում եմ սէք, սէք, միայն սէք, ու թիւ ոչինչ: (Ալէրսանդրան ածօթիած ժպիտով շնորհակալութիւն է ընծայում: Ապա Սիմեօն, Սրբուհու ծեռն եւս սեղմելոց ժամոյ, մօւնենում է Ստեփանին) Եւ ձեզ, որ այս ուժնի հերոսն էք,

բայց ինչու այդպէս անզուարթ խորհրդածում էք, գտնուելով երկաւ կեանքի եղուում, գուցէ սարսում էք ամուրիութեան պարզ կեանքից մտնել մէկէն տուամութեան բարդ կեանք, հաւատացնում եմ որ զուր էք վախենում... սգեսրուեցէք, այդ դէմքը ուրիշամանակուան պահեցէք... էլլ սէր, սէր և խաղաղ կեանք...:

Ստեփան. (շատ պաշ կերպով) Շնորհակալութիւն և ձեզ՝ մըշական բական բարօրութիւն...:

Սիմեոն. (Սօֆիային) Իսկ գուր ինչու լուս ու մունջ կեցել էք, տիսուր էք, թէ մտածում էք... բարեմազթութիւններ եմ անսւմ, «Եկերանդ՝ տաճար» ասացէք, խնդակցութիւններ յայտնեցէք,.. գուցէ ձեր մաքումն ասում էք. «Ալէքսանդրան դնում է ահա մարդու, ես երք պէտք է գնում...», Ասուուած ձեզ էլ չեմ մտուանայ... գուք էլ շուտով կըհասնեք նոյն բախտին, այնպիսինք թող հսկ անեն որ ոչինչ արժանիք չունեն, հայ օրիսրդների մէջ քանի հաստ ձեզ նմաններ կան, գուցէ ոչ մի հաստ. (Մտեփան աւելի է մուայլում:) Եթէ Ալէքսանդրան մի բժիշկի է կին լինում, դուք (նայելով դէսի միւսները, ծեւացնելով թէ միհիթարելու համար է անսով) մի բժշկապետի և նրանից աւելի մեծ մարդու կին լինելու արժանի էք. (Սօֆիան բռնկուելով վիճակին է հասում:) Իէ, ես և դուք, ձեռք ձեռք տալով [ձեռն մօտեցնում է Նրա ձեռին] մի ջերմ օրհութիւն կարդանք...:

Սօֆիա. (բռնկուելով) Օրհութիւն... անէծք էլ չեմ կարող տալ այդ ուխտադրութ, անազնիւ, անթափանցելի վատ վիթուային և իր նենդաւոր ու անզգամ հարսին...:

Սունե. Ինչու ես այդ ցեխելը թափում նրանց վրայ, Սօֆիա: Ալէքսանդրա. (մօր եւ Սօֆիայի մէջուն) Թող խօսի, մայրիկ, ինչու ես վշտանում մի ցիդանի խօսքից:

Սօֆիա. (Եռնէին ցուցնելով մի մատանի) Այ, այ, ո՞լ է տուել ինձ այս մատանին...:

Սունե. Մենք չգիտենք... ով է տուել, գու ինքդ ասա՞ւ...:

Սօֆիա. (Մտեփանին վասնանիշ լինելով) Այ, այ, այ, այս մարդն է տուել:

Սունե. Լաւ, ինչու է տուել, ծախել է քեզ վրայ:

Սօֆիա. (Տեղնօրէն) Այս, ծախել է ի՞չ վրայ... (լրջօրէն) տուել է ինձ որպէս «նշան», նշան, նշան, նշան...:

Սունե. Ուրեմն այժմ խնյա է տալիս էր որոշումից, թէ գու ես հրաժարւում իրանից... և այդ ինչից է առաջ եկել, զուարձակի է վիտնալ...:

Ստեփան. (մեկուսի) Այս սխալ քայլը պիտի փշացնէ իմ կեանքը... (նրանց) Վերջացրէք, իսէր Աստուծոյ, բացի զատ հետեւանքներից, ովնչ լաւ բան դուրս չի գայ այդ ազմուկներից:

Սօֆիա. (դէպի տիկին եւ Ստեփան, տիկնոց երգիծանքներից սիրտը տակն ու վրայ լինելով) Անսատուած, անհոգի, անգութ արարածներ... դուք ծաղրում եք ինձ, ինչպէս մի քօծի, մի դռնեհիկ, մի տիսմար էակի... դուք ամենայն հանգստութեամբ իմ զիսին խաղեր եք խաղում, ինչպէս մի թոյլ, տկար աղջկայ զիսին... (ըսնունցրով սպառնալով) բայց այդ տկանը, այդ թոյլ աղջիկը առիւծ է դառնում, երբ նրա պատուի իրաւունքին են դիպում... (արտասուազին) սպասեցէք, սպասեցէք. տեսէք ինչ պատիւների կըհասցնեմ ձեզ... (ուղղուում է դէպի նախասենեակի դուռը:)

Ալեքսանդրա. (կամենալով Կեցնել նրան) Մի անպատուէք մեզ... պատմեցէք յայտնապէս ձեր գանգատները, դուցէ լսողներս երաւունք կրտանք ձեզ:

Սօֆիա. (թոյլ չուալով որ իրան մօտենայ) Պարոն, պարոն, իրաւունք մի ունենաք ինձ արգելելու... (հեռանում է:)

Մրգումի. (դէպի Ալեքսանդր) Թողէք թող գնայ, ինչ կարիք կայ զրուցել տալու...:

Նունե. (Ալեքսանդրին, դառնալով դէպի Ստեփան) Այդ ազմկասէք աղջնից ինչ պէտք է իմանաք, ինքն իսկ զիտէ, ինչ է տառմու: :

Ալեքսանդր. Նեխած սիրտը նախանձից չնին պատճառներ է փնտրում մեզ հետ կռուելու:

Ալեքսանդր. (Սիմէօնին խոլ ծայնով) Կռուի մէկ-երկու կէտեր ինձ մնացին անյայտ, արդեօք ձեզ յալտնի եղաւ նա իր ամեն կողմերով:

Սիմէօն. (կամաց) Գրեթէ, միայն կռուի առարկայի կորիզը մնաց անյայտ, սակայն նրա ճշմարիտ զայրոյթից տեսնուում է որ մի անիրաւութիւն է կատարուած իր նկատմամբ. պէտք է կարեկցութիւն և պաշտպանութիւն ցոյց տալ դէպի այդ անտէր-անտիրական որիորդը: Ես գնալու եմ նրա մօտ: (զնում է նախասենեակի դռնով:)

ՆՐԱՆՔ, ԱԹԵՆՅ ՍՕՖԻԱՅԻ ԵՒ ՄԻՄԻՕՆԻ

(Սունէն եւ Սրբունին նատում են Ստեփանի դէմուլժի սիհնյն սեղանի շորջ: Ալքրանդրան ենց զնում էնրանց ունենալու յիշոյ վերսպանուում դէսի Ալքրանդր: որ նայռաւածուկ է: ձեռքի նշանով նրան կանչում է:)

Սունէ. (Ստեփանին) Սու ել ահա ձեր միամտութեան դիւնք... եթէ ողջ աշխարհում աղջկայ սով լինէք, էլի չէր կարպատ կեգտոտին առնելու զիջում անել... ինչ բարիք կամենում էք որ այս ծաղիկը ձեզ ընծայէք....:

Սրբունի. Անուշահուութիւն...:

Սունէ. (Սրբունուն) Ասոցէք «գարշահուութիւն», էլի շնորհակալ լինինք Աստուծուց, գնանք եկեղեցի մոմ վառենք, որ այսքան չուտ ազատեցիք իր ձեռքից ձեր փողպատր: Դէ, սկսեցէք ձեր դործը, այդ օձը քիչ ժամանակ չկորցրեց մեզ...:

(Ստեփանն շարժում է զրիչը, բայց մի ընդհանուու տենդի եւ սրտի ու մտքի փոթորիկների մէջ, չէ իմանում թէ ինչ է անում...:)

Ալքսանդրա. [Ալքրանդրին, միջին դասն մօտ, երբ Ստեփանն, Սրբունին եւ Սունէն պայմանագրովն են (զբաղած)...] Ինչու ես անրաւական մնում, միթէ դու չես ցանկանում ինձ բաղդաւորութիւն:

Ալքսանդր. Յանկանում եմ ինարկէ, բայց միայն այն դէպքում, երբ նրանից ինձ անրազդութիւն չի դայ:

Ալքսանդրա. (սրտնեղելով) Երեխայ հօ չես, Ալքրանդր, բայ ինչ անեմ, չամուսնանամ... եթէ չես ուզում, արի ես և դու ամուսնանք...:

Ալքսանդր. Արդէն ինչ եմ քեզանից ինքնում... միայն, ինչ պէս միշտ ասեկ եմ, գնամ Ռուսաստան ուաշամն աւարտեմ, յէտ (Ստեփանն, զրիչը ծեռքին, նայում է դէս ու դէն) Ալքսանդրա, Այդ հօ սուտ է ու սուտ... էլ կայ օրիորդ, որին պիսի ձրի խոստումներ չես շոայրած:

Ալքսանդր. Բայց ես կարգեկեմ ձեր ամուսնութիւնը, ես ի՞ոյ չեմ տայ որ մի ուրիշ սիրէ քեզ, քեզ, որին ես (ձեռն տանում է դէսի նրա երեսը եւ Ստեփան տեսնում է:) Սիրել եմ այսքան ժամանակ:

Ալեքսանդրա. (Նայելով սեղանի շուրջ գտնուողներին) Նկատեցին, նկատեցին... ախ, որքան խենթ ես լինում գու երբեմն, այնպէս ես չարժւում, կարծես առանձին լինէինք... Մի անիր ինձ այդ գէշութիւն... մեր բարեկամութիւնը կըշարունակենք և իմ ամուսնութիւնից յետոյ, (Երեսը խաչալինքելով) երդւում եմ, երդւում... թնդ վկայ լինի Աստուած Երկնքում...:

Ալեքսանդր. Թոյլ չեմ տայ..., չեմ փախցնի քեզ ձեռքիցո..., անկարող եմ այդ աներ...:

Ալեքսանդրա. (Ապառնական շեշտով) Եթէ այդ անես, Էլ յափուեան ինձ չես տեսնի... և երեակայիր այն ժամանակ քո վիճակ, երբ այդքան թռյլ սիրու ունես...:

Ալեքսանդր. (Ճեռորով բաշելով նրան) Գնանք դուքս, այնուեղ պատասխանենք մեր սպառնալիքներին...: (Ստեփան տեսնում է: Նունելն զաւարել զաւաթները հաւաքում, զնում և սկզբանաւուն):

Ալեքսանդր. (Հգնալով) Թնդ ինձ... (Նայելով նստողներին) տեսնենք, ինչ է գործւում այնուեղ... Խելքս ու միտս այնաեղն է... (Ալէքսանդրան եւ Սրբունքն, միջադէպի մասին զրուցելու համար, սենեակի մշջտեկում կտրում են միմեանց ճանաւար): Իւնագնք են առնում:)

Ստեփան. (Ժեկուսի) ... Հօ դիցարանական գարերում չենք, որ ոչի առեսիլ» էր... երկու աշբովս տեսայ..., մի սիրականի համարակութեամբ, մի ամեաւնու վասահութեամբ, ձեռը բարձրացրեց ու դէպի այնտեղ տարաւ... բանեց նրա եռուսկայից ու քաշ արտ. ուրեմն Ալեքսանդրան էլ նոյն ախատվ վարակուած է, նա էլ ունի իր նվանիչը... Բայց՝ ոչ, իր սրբիկան, նվանիչը գուցէ անմեղ է.. այս, անմեղ է, անմեղ, անմեղ..... (Ստեփան, այլիս չկարողանալով խօսել, զլուխը խոնարիւմ է սեղանի վրայ և առնամ երկու ձեռքի մէջ: Նունելն, մասուցարանի վրայ 4—5 զաւաթներ ոքած, ներս է զալիս, զնում է Ալէքսանդրի մօտ և մի զաւաթներ նրա համար, զնում է մօտակայ սեղանի վրայ, յնոյ Սրբունքը և Ալէքսանդրայի մօտ կննում և երկու խօսք Փոխանակում, ապա նրանց ներ զաղիս է դէպի Ստեփան:)

Նունի. (Ստեփանին) Խնչ, ուզում եք քննի...: (Ո տեփան զլուխը բարձրացելում է:)

Սրբամի. Տերը ես, Ստեփան...:

Ալեքսանդրա. Յոպնեցիր զրելուց...:

Ստեփան. Վաս եմ զլում ինձ, սիրաս արարում, խոռնում է սաստիկ...:

Արքունիք. (պրտատրով) Վեր կաց, սենեակում մի փաքը մանաբի, մինչև անցկենայ:

Ալեքսանդրա. Զէ, մի քիչ պարկի՞ր, մինչև անց կենայ:

Նունիք. Մի բաժակ, մի բաժակ խմբի, շռատով կանցկենայ: (ոտքի է կանգնում Ստեփան, եւ, զլուխը պտոյտ զալով, նըստում է մօտակայ աթոռներից մինի վրայ... կանայք սրտաթունդ շրջապատում են նրան: Եվ ոտքի է կենում եւ դանդաղ քայլերն ուղղում է դէպի նախասնեակի դուռը:)

Նունիք. (բռնելով նրան) Քա ուր... ննջարանը գնանք, ես իսկոյն կառողջացնեմ ձեզ...: (Ստեփան լսուում է դէպի ննջարանը, ասկայն յանձնարծ, մի երկու քայլսիփոխում, երբ սուզեից զնում է նունիքն եւ նունից զալիս են Սրբունին եւ Ալեքսանդրան, զլուխը պտոյում, երերում եւ, ձեռքով բռնելով մի աթոռ, զիսին է ընկենում աթոռի հետ: Կանայք ճշալով նրա վրայ են բնկենում:)

Արքունիք-

Ա'լի, Աստուած....

Ալեքսանդրա.

Ստեփան, Ստեփան....

Նունիք.

Ի'նչ սրատահեց....

(Ծչում են բառական. Նունիքն ջոր է բերում շտապով եւ նրա երեսի վրայ սրսկում. Սրբունին նրա սրտի կրծակներն է արծակում եւ թիւերը բաշրշում. Ալեքսանդրան մերթ նրա վրայ է իսկարհում, մերթ սենեակի մէջ վազվում:)

Ալեքսանդրա. (զնալով նախասնեակի դուռը եւ դառնալով) Բժիշկ... բժիշկ... (մօտենալով Ալեքսանդրին եւ նրելով նրան զէպի դուռը) Ախ, Ալեքսանդր, մի բժիշկ, հոգնեգ մեռնիմ....: (Ալեքսանդրն ես մերենայական շարժումներ է զրդում: Դոկտորը աչքերու բաց է անում, Գանալը նստեցնում են նրան մի աթոռի վրայ եւ առարենած՝ երեսին են նայում պշած:)

Նունիք. (մի գաւաթ մօտեցնելով նրա բնենին) Խմեցէք, խմեցէք, ջուրը լաւ է ու չաթափութեան... (Ստեփանը չի խմում:)

Արքունիք. Թանձէք, տիկին, էլ վախ չկայ...: Խնքն հիմի կը դարձանէ իրան...:

Ալեքսանդրա. (ձեռնե բժշկի ճակտին դնելով) Համ, էլ ոչ մի ցաւ չեն գցում, թէ գեռ անհանդիս ես:

Ասեփան. (ալաւչելով եւ մէջ ընդ մէջ անելով) Ոչինչ, ոչինչ... քաւ, եմ զգում ինձ... նեարդերս ստանում են ահա իրենց բարեխառն դրութիւնը... մի երիտասարդի թագման էի գնացել... նրա բարքըն էր որ արտադրեց այս էրիլիսի-ն, այս... սակայն պարկելու հ հան-

դասանալու պահանջ եմ պատմ., եթէ կըներէիք, իմ սենեակ կուպէի գնալ.:;

Նունե. (շուապով) Ինչպէս կարեի է թողնել որ այսպէս հիւանդախանդ զնաք... ինչու, մենք չունենք այստեղ ձեզ հսմաք մի մահճակալ.:;

Ալեքսանդրա. (ծեռքերո նրա ուսերի վրայ զցելով) Ո՞չ չեմ թոյ տոյ որ դնառ... մեր ննջարանում համգիստ արա, ինչըսն կամնում ես... գնաս, նարից երիբուես, ընկնխաս.:

Սբբուհի. (Ս տեխանին) Աւզիդ են տառմ... այստեղ մեր սենեակից աւելի յարմարութիւններ կան...:

Սօֆիա. (թօթափելով իրանից իր ծախորդ պրութիւնը) Ֆնւ... բացառիկների բնութեան սանձահարում, սրտի բնական ցանկութիւնների արգելք... մի արդելք որի վրայով մարդկութեան մեծ մասը, մին գաղտնի, միւսն յայտնի կոխելով է անցնում... և անմոլար է իհարկէ այն շաւիզ, որից շատեր են անցկենում... ես՝ բացառութիւններից, այսինքն՝ զարմանալի անձերից, այսինքն՝ տկարամիտներից * չեմ ուզում լինել... ինչո՞ւ էի մաշւում մի Ստեփանի համար, մի տիբապետողի սրտի առարկան լինելու փոխարէն՝ ինչո՞ւ չինեմ բազմաթիւ չիք քծնողների սիրու առարկան,, ինչո՞ւ էի այնքան մեծ ցանկութեամբ զաւակներ ինդրում... որոնք ինդացնելուց աւելի՝ պիտի ցաւ և տանջանք պատճառէին ինձ... ինչու զրանց փոխարէն՝ անսպառ փողով մի ճոխ և փարթամ կեանք շատեղծեմ ինձ համար... (երկար շիշտով) չնորհակալութիւն այս դէպքերին որ ազտուցին ինձ ընտանեկան գերութիւնից... խոստովանում եմ, Նա տալիս, որ ձեր խրատներ հազար բարոյախօսութիւններ արժեն ինձ համար... (Յւ իսկոյն կը գինովութեամբ արծուի պէս սլանում է դէպք Բաղդա՛միշ, երբ միաժամանակ Ստեփան կարմրած երծներով պատշզամբ անկիւնում Ալէքսանդրին է դէմ ու դէմ երեւում:)

Սօֆիա. Պարոն, մենք արդէն սպասում ենք ձեզ... ձեր առաջարկն ընդունուեց... այժմ պէտք կարգադրէք թէ երբ պէտքէ կատարենք ձեր ցանկութիւնը...: (Բաղդա՛միշը ուրախութիւնից վեր

* Հարկաւո՞ր է ասել որ, գոնէ իմ հայեացքով, արսւեստից հասկացողները՝ այսպիսի դատողութիւններ, որոնք զանազան տիպերի դադախարներ և հոգեբանական որոշ դրութիւնների որոշ վճիռներ են,—չպէտք է ամբողջովին իրաւացի ընդունեն կամ նկատեն ըստիր տեսնդենցիական քարոզներ զրողի կողմից:

վեր է թուշում, և զմայլած նրա բարեսրտովթիւն վրայ՝ նրա հետ դէպի Նատալիան է ընթանում։ Ստեփան եւ Ալէքսանդր եւս մօտիկ սկսում են զրուցել։)

Բաղդանիչ, (Սօֆիային, Նատալիայի մօտ) Զափազանց գոհ եմ, գոհ, զաւակս, այս սրտալի վերաբերմունքի համար... սրանով մի աստիճան ևս պարտական էք անում ինձ դէպի ձեզ... ինչ կը վերաբերի մեր մեկնելուն՝ դա կախում ունի գործից. մի կանուրից աս փող պէտք է վերցնեմ... բայց բուխտալտերը Բատում է զնացել... յամենայն դէպս ոչ ուշ քան մի շաբաթ, Բագուայ ճանապարհով ուղղակի Մոսկուա: Օրիորդին, տիկին Նատալիա, ծանօթացրէք մեր հիւրանոցի հետ. ես կենում եմ Լօնդօն գաստինիցայում, № 51, հարկաւոր մեծարանք կը մատուցուի ձեզ...:

Նատալիա. Դա ձեր պարբն արգէն, պլ. Գիլեանց... այսքան յոդնեցանք ձեզ համար...: Բայց ժամի քանիսին:

Բաղդանիչ. 6-ին, 7-ին, 8-ին, 9-ին... ես դուրս չեմ գնայ, մինչև չընդունեմ ձեզ: Յ'տեսութիւն... այս բոպէն շատ թանկ արժէ ինձ համար: (ազօրտմօնէն բանալով) Վերցրէք այս հարիւրանոց ձեր մանր ծախսերի համար, մինչ ձեզ մի գումար վճարեմ... (Սօֆիան փողն զրպանն է դնում. Բաղդանիչ զլիսկ հրաժեշտ տալով՝ մեկնում է. օրիորդին եւ Նատալիան նրան ճանապարհ են դրնում. յետոյ Սօֆիան, թքելով զետին, տիկնոջ հետ իր սենեակն է դառնում:)

ԱՏԵՓԱՆ, ԱԼԷՔՍԱՆԴՐ, ՑԵՑՈՅ ԱՐՃԱԿ, ՆՈՒՆԻ, ԱԼԷՔ- ՍԱՆԴՐԱ, ԵՐԱՆՈՒՀԻ

Ստեփան. (առանձին) ... Տօ այս ինչ վատ ճակատագիր ենք ունեցել... ալս պատուհասներից իսկի ազատուելիք չունինք...: (Նրան բարձրացնելով ձայն, նկատելով որ մենակ են) Գուք կամ հոգեկան հիւանդ էք, կամ ամենալիբր ամենաանալիտան մի տղայ... այլապէս այդ «ուրիշներ»...:

Ալէքսանդր. (կլքի զալով) Գրանց մին ես եմ ահա, որի հետ կիրակի երեկոյ Վերա գնացի... ես եմ, որից (ծոցից մի թուղթ դուրս հանելով) ստացել եմ այս սիրոյ նամակը...: (Ստեփան հազիւ աշքը նամակի վրայ է դարձնում, զալիս են ահա միաները շրտապով աղմուկի ձայն լսելով)

Արշակ. Այս դժուք էք... ես ասացի, տես, ովքե՞ր են կուռում... (Ալէքսանդրին) այստեղ ինչնու էք սպառում... դոկտորին տեսնել էք ցանկանում, ներսումն էլ կարող էք... (զինու ազդեցութեան տակ, ոգեւորուած հիւրափրութեամբ ըսնելով Ալէքտանդրի պենջակից, երբ նա կամենում է հնուանալ) համեմցէք... մեր ուրախութեան խնջոյք դուք էլ վայելեցէք..:

Նունի. Մեր Ալէքսանդր... բարով քո դալը..:

Ալէքսանդրա. (մի անորոշ երկիր սպալով) Բարի տեսութիւն, ո՞նց էք, լաւ էք, Ալէքսանդր..:

Ստեփան. (դէպի Արշակ հրացայտ) Տօ այս մւմն էք հրատիրում, այս սրիկային, որ եկել է ձեր քըոջ պատիւ չօշափելու..:

Արշակ. (սպազելով) Լուրջ էք խօսում..: (աւելի ուժով բոնելով Ալէքսանդրին, որ աշխատում է զնալ) Ո՞ւր ես թողնում, դնում... քեզ բերդն ենք ուղարկելու, բերդ, բերդ..: Այնտեղ այնքան պարկես, մինչև վթիս..:

Ալէքսանդր. (աշխատելով ազատել իրան) Թողէք... ոչինչ գործ չունէք ինձ հետ... թէ չէ..:

Արշակ. (արգելելով նրան) Ի՞նչ կերպով էք չօշափում պատիւը..:

Ստեփան. Ինձ, իրը թէ, ցանկութիւն էր յայտնում չամուսնանալ նրա հետ... իրը թէ նա շատերի չգիտեմ ինչի առարկան է... իրը թէ շատերից մին ինքն է, որի հետ Վերա է գնացել իրը թէ նրանից այս սիրատումն է ստացել..:

Նաւնի. (երկու ծեռով զարկելով թոյլ կերպով նրա դէմքին) Վայ, հողեմ գլուխդ, կինոծկա..:

Արշակ. (երբ Ալէքսանդր ճողովրելու մօտ է) Սյդպէս հանգիստ... վատաբանելուց յետոյ... բացատրութիւն... կըջարդեմ քեզ հիմա..:

Ալէքսանդր. (ծեռ բարձրացնելով) Ա՛յ, կըխփեմ հիմա... ես բացատրութիւն տուեցի պրծայ...:

Արշակ. (աւելի բոնկուելով, Սօֆիային եւ Նատալիային տեսարանի մէջ տեսնելով] Գիտենամ Սիպի կուղարկեն ինձ, պիտի սպանեմ այս բազմօյնիկին..: (ծիծում են իրար.. անազին խառնաշփոթ աղմուկ, թէ ծեծուաներից թէ վանդակապատից զետին ընկած ծաղկի թաղարներից եւ թէ, բացի Սօֆիայից եւ Նատալիայից, միջամտողներից..: Ժիորը զնում, աներեւութա. նում է արեւելքից արեւմուտ ուղղած զծի մէջ, Սօֆիան եւ Նատալիան կենում են իրենց տեղում:)

ՍՈՅԻԱ, ՆԱՏԱԼԻԱ

Սօվիա. (Հարախնդաց կերպարանքով) Այ, այ... այդպէս մարդավարի, օրինաւոր միմեանց գգղեցէք, թակեցէք որ ես ծափահարեմ... հէնց զրան էի ես ամենից շատ պահանջ զգում... ասացէք, Նատալիա, սրանք իրար շատ էին սիրում, ինչու են այժմ միմեանց միան ուտում...:

Նատալիա. (ուշը դէսի կոռուզները) Ի՞նձ ես հարցնում... դու պէտք գիտենայիր...:

Սօվիա. Ա՛յ, ումնից իմանանք... սիրա հովացաւ, հովացաւ... (ձեռները Նատալիայի ուսերի վրայ խփելով) այ, ինչպէս են բըռուունքով խփում... բայց բանը այսպատճ չի վերջանայ, աւելի կը մեծանայ... գիտեն, ինչ անաստուածն է Սլէքսանդրի հայրը... նա որ լսէ սրանց քիթն ու պրունկը կըջարդէ...: (Ստեփան վերապատնում է ջղասարսու վիճակի մէջ. Նատալիան եւ Սօվիան ծածկում են իրանց՝ իրենց քնակարանի դռան միջում):

Ստեփան. (մեղուսի, յուսահատուած)... Ուղղակի ուղղակի խենթացնում են ինձ այս դէսպերը... ահա այսպէս Սլէքսանդրան ես, Սօվիայի պէս, ընկնում է անբարոյականութեան ամենածանր կասկածների ատակ., ահա այսպէս բացւում է առաջս կանանց ներքինի անմենելի գործեր... երգւնում եմ, ոչ մի գիտութիւն այնքան գժուար չէ, որքան կանանց ճանաչելու գիտութիւն... այս, ուս էլ գիտութիւն է, մի մեծ գիտութիւն... ինձ համար աւելի դիւրին է գտնել ե մատնանից անել Փիզիքական ցաւերի տեղեր քան' հոդեբանական ախտավայրեր... անիծուին կանանց ապատագրողներն էլ, ֆէմինիստներն էլ... ինչ հոսնուն էի որ համալրում էի նրանց գնդապարներին... եթէ չտրուէր կանանց սանձարձակ արասութիւն, գոնէ քիչ առիթ կունենային տղամարդկանց հետ շփուելու և գայթակութիւններ առաջացնելու... էլ ում հետ, ինչպէս ամուսնանք, միթէ կարելի է սիրու միամուցնել մէկի վրայ... Աստուած վկայ, մի հատ, մի հատ մաքուր կին չկայ, ում լուցին տաս, իսկոյն կը վառուի... էտ է, կամ ընաւ չպէտք պսակուինք կամ պէտք է հաշուուինք այս մաքերի հետո...: Բայց ինչու եմ մի ռամկի երկիւղածութեամբ նայում բարոյականի վրայ... ինչ է բարոյականը, բարոյականը մի կայուն օրէնք չէ, բարեր միշտ փոխուում

Են և բարոյականի վարդապետութիւնն էլ, վիլիսովայութիւնն էլ փոխուում են նրանց հետ... մօրալը, նայած բարքերի նահապետական աստիճանից մինչև ամենաբարձր աստիճանի վրայ, միմնոյն ուժ չունի ամեն տեղ, նրա էվոլլիցիան գուցէ շուտով կըջնջէ բարոյականի գիտութիւնը. այն կանոնը, ինչ որ նա հաստատում է այսօր, գուցէ վաղը կըժիստէ, և այն՝ ինչ որ այսօր ժխտում է, գուցէ վաղը կը սրբագրծէ... ես ինչ եմ կորցնելու, եթէ ընկերս հետևի իր զգացման շարժման և իր սրտից բաժին տայ ուրիշի, կամ զաւակս իմ սպագերից տարբեր ձև ներկայացնէ, ինչ եմ կորցնելու, եթէ ես ևս հետևեմ նրա օրինակին... որատիւն... բայց պատիւն էլ բարոյականի միմնոյն յեղաշրջման է ենթակայ... այդ փառքը, այդ անձնական յարգանքը, ինչու չփնտը բժշկական հմտութեանս և ճարտարութեանս մէջ, կամ այլ նկատումների մէջ... սակայն հարցը դեռ չէ հասած իր վերջին քայլափոխին... համեմատենք մի անգամ էլ, թէ երկուսից ո՞րն է քիչ անբարպյակտն, այսինքն՝ ո՞րն է մեզ աւելի ձնունտուն... յետոյ, եթէ հարկաւոր է, եզրափակենք խնդրի վախճան...; (Սունէն, Ալքրասանդրան եւ Արշակ զալիս են դէպի Ստեփան, Ստեփանն ես յառաջանում է դէպի նրանք)

6

ՍՏԵՓԱՆ, ԱՐՃԱԿ, ԱԼՔՐԱՍԱՆԴՐԱ, ՆՈՒՆԻ, ԱՊԱ ԼԵՒԱՆ

Նունի. (անուղղակի Ստեփանին) Եւ չը էլ կարելի չսպասել այդ կինտութիւն դրանից... ում որդին է դա... դրա պապը խոզապան էր այս քարտաբում...:

Ալքրասանդրա. (արտասուելու մօտ) Բաս քննիրն, քոյրն իրենց գործակատարի սիմպատիչնաեան էր, որի հետ փախաւ և մի ամիս թաք կեցաւ մի անյայտ տեղում...:

Ստեփան. (առանձին, հիգնօրէն) Ալդպիսի մարդու թոռը, այդպիսի աղջկայ եղբայրը բնականաբար սուտ էր խօսում:

Նունի. Զիգրու, որ աղջիկս մերժեց իրան, ինքն էլ այս կերպով ուզեց վրէժ առնել: (Երեսում է ծառան)

Արշակ. Մեղ իվանիչին է, որ նրան այստեղ սովորեցրեց... թէ չէ ես նրան...

Նունի. Իսկ իվանիչին ով էր այստեղ քարշում, բերում, էլի Սօքիան չէր..

Արշակ, Ուրիսմն այս չարիքի խակական պատճառն էլի՞ այս փշացածն է... այժմ էլ դուան միջում կեցած՝ թամաշա է անում... (Սպասարկին) կը գնաս, կասես դու նրան որ այսօր և եթ դուրս գնայ մեր տանից,.. այստեղ անառականոց չէ, որտեղ ծանօթ և անծանօթ մարդիկ գան ու գնան... այստեղ ընտանիքի բնակարան է... թող գնայ առանց ձայն-ձունի... (զոշելով) մի Սօֆիայի համար ես չեմ ընդունում որ այս տան փառաւոր անուան վրայ արատ գայ... թէ չէ... կը դնամ, կը խեղդեմ տեղն ի տեղ.., կը բոնեմ մազերից այնքան կը խփեմ որ շունչ չմնայ իր մէջ...:

Խեւան. Իմ ինչ բանն է... ես ինչ կարող եմ...:

Արշակ. Օ՛հ, պատասխան է տալիս... ո՞ր տեղից այս համարձակութիւնը... (ասպարակում է) կը գոնանես անմիջապէս, եթէ չկատարես հրամանս... (Սպասարքը լալիս եւ փախչում է...) Արշակ կամենում քոնել եւ ծեծել էլի... բայց յանկարծ լսում է ըրոջ ծայնը]:

Ալեքսանդրա. Ահա մի գորոդօվօյ, օկոլօտօչնիյ և Ալեքսանդր... [Բոլորն էլ վազում են բալքօնի այն մասը որ հանդիսատեսին անտեսանելի է:]

ՍՕՓԻԱ, ՆԱՏԱԼԻԱ

Սօֆիա. (դողալով) Իմ անուն արտասանեցին... իմ անունս, իմ անունս... թէ ինձ պէտք է խեղդեն... բայց ինչ կապ իմ և այս կուռզների մէջ... դբանց կախների պատճառով ինձ ինչո՞ւ պէտք է սպառնան... այս ինչ զարմանալի և անլուծելի դէպքեր և պատահարներ են յաջորդում միմեանց... էլի որոգայթ է լարւում ինձ համար... էլի զրպարտութիւն է պատրաստում ինձ դէմ...:

Նատալիա. Բայց ով է քո անուն արտասանել, ով որ մի բան խօսում է, դու վախից քո անունն ես իմանում... նրանք իրենց հաշիւներ քեզ հետ վերջացրին պրծան, էլ ինչո՞ւ պէտք է քեզ խեղդեն...:

Սօֆիա. Ես խստակ և որոշ լսեցի... Արշակն էր ասողը, Արշակ...:

Նատալիա. Շատ էլ թող խօսի, նա կը համարձակի՞ քեզ վրայ ձեռք բարձրացնել... (Նատալիան կաւաց կաւաց զնում է:]

Սօջիա. Ո՞չ, դուք նրան չեք ճանաչում. նա որ խմում և դայրանում է, ել ոչոքի չի խնայում... կացէք, պաշտպանեցէք ինձ, Նատանլիա...

Նատանլիա. Լաւ... միայն տեսնեմ, երեխաս ուսումնարան դնացել է...: (զնում է)

Սօփիա. (դողալով) Նատանլիա, Նատանլիա...: Գնաց առանց հաւատալու մօտահաս վտանգին... վախչեմ տանից... Վարի կենողներին կանչեմ... (զլուխող կախ է անում ըալքօնից վարը) ոչ ոք էլ չկայ բակում... ահա, ահա ճիւաղն... ինչ եմ արել, Աստուած, որ այսպէս ես անում... Աստուած, դու արդար ես և արդարութիւն պէտք է մեզ ցոյց տաս...: Եկաւ, եկաւ Արշակ... եկաւ ակը դժոխացին դէմքով... արիւնաթաթախ, կիսախեղդ պիտի անէ ինձ...: (Դողի դող ապաստանում է իր ընակարան եւ դուռը ամուր ճայնով փակում է:)

(Վարագոյր)

Հինգերորդ Արքունիած

Երրորդ արարուածի սենեակը։ Ժամանակը աշխաց յիսոյ է։

1

ՍօֆիԱ, ՆԱՏԱԼԻԱ, ՍՏԵՓԱՆ

(Սօֆիան պարկած է մահակալում, եւ ընի մէջ, մերթ ընդ մերթ վեր է թռչում, ձեռները շարժում, հառաչում, զատանցում, եւ առանձին, հատ հատ բառեր եւ կիսկտուր խօսքեր է արտաքիրում։ Նատալիան, նրա մահակալի մօտ կեցած, զարմացմանը եւ հետաքրքրութեամբ մտիկ է տալիս. ապա ներս է զալիս Ստեփան։ Նատալիան ձեռքի նշանով զգուշացնում է նրան որ ծայն չհանէ, մտիկ տայ։)

Սօֆիա. (ընի մէջ) Մի՞րս, սի՞րսո... ծն'կ... ծն'կներս... (ծիծաղում է) հի, հի, հի, հի... լաւ թակեցին... այստեղ, պարոն բըժիչկ... (ձեռները վեր է բարձրացնում) չեմ փսխում... Ստեփան, Ստեփան... ով կը հստատայ..., ես մեղ չունիմ... զբարառութիւն է... (վեր է թռչում, վղջկում եւ լալիս) հաւ, հաւ, հաւ, հաւ... հի, հի, հի, հի... Քաղգանիշի տուն... մի խփիր, ախ, մի խփիր, Արշակ... (նորից լալիս է) հ'ը, հ'ը, հ'ը, հ'ը... զլուխս ծածկեմ ու գնամ։։ (Դրսից լսում են խօսակցութիւններ եւ աղմուկներ... Լեւան միջն դռնից ուզում է ներս մտնել, նունին ետ է քաշում նրան։ Նատալիան ուշիկ ցատկում է դէպի դուռն եւ սպասառորին դուրս է քշում, բայց չի կարողանում։)

2

Նրանք, նունի եւ Լեւան (որ թեմի տակ ունի մի ծրար հազուսոյ)

Լեւան. (Երբ նրան աշխատում ին դորս հանել) Ումն էք արգելում... կասեմ նրան։։

Նատալիա. (Նունեին) Օրիորդը հիւանդ է, տիկին... գնարս տարեք ձեր ծառային, ում հետ պէտք է խօսի, ինչ պէտք առէ. այս ինչ կոստութիւն է:

Լեւան. (խենթի կերպարանով, աշխատելով մօտենալ մահակալին) Կասեմ օրիորդին, կասեմ, կասեմ...:

Նունե. (Նատալիային, ծեռքից չբաց թողնելով ծառային) Ես ինչ անեմ... չնս տեսնում, գժուել է, գժուել... սրանք ցեղով խենթ են... ես ուզեցի գուրս հանել տանից որ չխփէ, մի բան չըկուրէ, յանկարծ այստեղ մտաւ...: (Սօֆիան արթնանալու շարժումներ է անում):

Լեւան. (կատարեալ խենթ, զանազան բացազանչութիւն. ներով) Հէ, հէ... հուա, հուա... (մօտենալով մահակալին եւ ցոյց տպով տիկինց) սրանք էին ինձ ոտեր սովորեցնում, սրանք...:

Նատալիա. Սուս, մի գոռար..., ես քո կողմից կը խօսեմ նրան...: (Լեւան երկու տիկինների հետ կոխ մղելով զոռում է բացականչութիւններ...):

Սօֆիա. (աչքերը կիսաբաց՝ տեղից վար է ծզում իրան եւ փախչում ներկայ զանուողներից) Հայրիկ... մայրիկ... մի խփեք, ախ, մի խփեք...: (Աճազին աղմուկներ Լեւան բղաւում է. Սօֆիան նոյն դրութեան մէջ է լինում... Նատալիան եւ Նունեն բաշրջում են սպասարքին, որ վիպում է պատուհանի ապակիներին եւ փշում. սպասարքը վախցած՝ դրս է փախչում իւղոյն):

Նունե. (վազելով նրա ետևից) Գնաց տան բաներ կոտրաելու...:

ՍՕՖԻԱ, ՆԱՏԱԼԻԱ, ՍՏԵՓԱՆ

Նատալիա. (Բերելով Սօֆիային եւ նստեցնելով կամաց իր մահճի վրայ) Ա'խ, իմ քուրիկը դեռ իր երապումն է... Սթափիք, սթափիք քունդ և ճանաչիք, մենք ենք, մենք, մենք...:

Սօֆիա. (աչքերը սրբելով) Ո՞ր տեղ եմ ես. ովքեր են սրանք. ինչ դարմադալ * էր, ո՞վ կոտրեց այս ապակիները:

Նատալիա. (բերելութեամբ Յետոյ... յետոյ... այժմ դեռ քը-նաթաթախ ես: (Սօֆիան ըիչ ըիչ ճանաչում է իրականութիւնը)

* Դալ մէքալ:

Սօֆիա. Նատալիա, ես քնել էի, լուր, բայց այս տեսարանն ինչ էր...:

Նատալիա. (լինդութեամբ) Տեսարանը մի գեղեցիկ երևոյթ էր քո օգտին. սպասաւորը եկաւ յայտնեց թէ իր խօզէյինների խորհրդով չարախօսել էր քո մասին..., ապակիները նա կոտրեց, երբ ես և տիկինը նրան դուրս էինք քշում... ես ցանկանում էի որ դու շուռ չարթնանայիր... ախ, այդ գիմը ինչպէս իմ ցանկութիւնը ոչնչացրեց... (Սօֆիան հետզհետէ գեղեցկանում է, աչքերը լայն է բաց անում, ականջները սրում. դէմքը պատկերացնում է ցնծութիւն, զարմանք, հետաքրքրութիւն, ուշադրութիւն:) այդ գիմն ինչպէս քո քունը խանգարեց... կարեորն նրա խոստովանանքը չէր, կարեորն քունն էր...:

Ստեփան. (լինդակցութեամբ եւ ընթռութեամբ) Կարեորն, իհարկէ, քունն էր մեզ համար... սպասաւորի խօսքերին սկզբումն էլ ես նշանակութիւն շատուցի...:

Սօֆիա. (Նատալիային) Ա'խ, ինչո՞ւ մէկէն չէք պատմում բոլորը, ինչո՞ւ էիք ցանկանում որ ես շատ քնէի...:

Նատալիա. Քնի մէջ խօսում էիրեն, խօսում բացանում սրտիդ վէրքերը... քնախօսութեան վերջին մասին պարոն բժիշկն էլ ունկնդիր եղաւ...:

Ստեփան. (Սօֆիային) Ինձ յայտնի չէ, թէ ինչ էր լսել տիկինը ինձանից առաջ, միայն այն էլ բաւական էր, ինչ որ լսեցի քո հրեշտակային բերնից քո հոգու խանակութեան մասին... ախ, ինչո՞ւ ես աւելի շուռ չճանաչեցի քո հողին... ներիր ինձ, Սօֆիա, ներիր...:

Սօֆիա. (որպախութիւնից մահճակալից ցած իջնելով եւ ձեռները, ծափահարելու պէս, իրար զարկելով) Ասացէք, ուղղակի հրաշքներ էին կատարում, այն, հրաշքներ, հրաշքներ... երազումք էլ ես չի երեակայում տեսնել որ այն ծանր մեղադրանքները ջախճախուէին յանկարծ այսպիսի փաստերի առաջ... Աստուած պաշտպանեց ինձ...: (Մտեփանին՝ իրոինս կերպով) Բայց ձեզ ինչպէս եմ ինձ մօտ ընդունելու պատիւն ունենում... այն ամօթալի պայմանի առիթով...:

Ստեփին. (ըաղցը ծիծաղով) Առանց այն պայմանի էլ, ես արդէն պէտք գայի հանգամանօրէն իմ հարանացուիս մօտ, անդել մօյի խրանիտել, միթէ մեր լարուած յարարերութիւնները տեսական պէտք է մնային...:

Սօֆիա. (բորբոքած) Դէ, կեղծաւորութէւ թողէք, այդ պայմանի համար էք եկած դուք ինձ մօտ:

Ստեփան. Թող այդ պայմանի համար լինի. փառք Աստուծու,
այլևս կարիք չմնաց նրան..:

Սօֆիա. (առելի յուզուելով) Խսկ եթէ խնդիրն այսպէս չկեր-
պարանափոխուէր, և ես նորից շընդունէի ձեր պայմանը, գուք ի-
հարկէ վերջնականապէս մէկ կողմ կը շըբարէիք ինձ, այսինքն՝ ան-
բուժելի հարուած կը տայիք իմ սրտին և կը ձգէիք, կը գնայիք, չէ..:

Ստեփան. (ընկնուելով) “Ի՞ այլ կերպ էլ չէ կարող անել...
խնդիրն, եթէ գու լինէիք իմ տեղ, կարող էիր անտարբեր կենալ
գէտի այսպիսի նուրբ և փափուկ հարց... միթէ մարդարէ էի որ
գիտենայի թէ հարցը չարասիրտների շինծու մէկ գործն էր... յետոյ,
կարող էի քո խարակտերին վատահել, որովհետև կեանքն և լոգիկան
ցոյց են տալիս որ նա, որ հոդի և մարմին ունի, թէկուզ մարմնա-
ցած խելք և բարսյական լինի, կարող է գայթակղել և մոլորուել. :

Սօֆիա. (ձանձրոյթ ցոյց տալով) Խնչիցէ... երկար գիտ-
լոգներ հարկաւոր չեն.. եթէ իմ կամքն էք հարցնում, ես չեմ ա-
մուսնանայ ձեզ նման վատի հետ:

Ստեփան. (ստրուկի կերպարանքով) Վա... Սօֆիա, ինձ
վատ ես ասում, վատն այն է, որի գէշութիւններ լաւութիւններից
աւելի շտա են.., ես մի դիւրահաւան մարդ եմ, որ հազիւ մի թե-
թէ պակասութիւն համարուի:

Սօֆիա. (շարունակելով) Ես չեմ ամուսնայ մի մարդու հետ,
որի աչքում ամեն մի անձ ընդունակ է հեշտասիրութեան, որի լոգի-
կայով ամենագորաւոր կամքն չի խսկ դիմանում հեշտասիրութեան.., եթէ
ամուսնանամ և երկրորդ, երրորդ... անգամ այսպիսի կասկածներ
ինձ վրայ հրաւիրեմ և արդարացման մէջ ակսրանամ. այն ժամա-
նակը... ոչ, չեմ ամուսնանայ..:

Ստեփան. Միւս անգամ անձամբ մեղսագործութեան մէջ քեզ
բռնեմ խսկ, չեմ հաւատայ..:

Սօֆիա. (վշտահար պրոտով) Եւ վերջապէս պէտք է վրէժխն-
դիր լինեմ գէպի ձեզ, պէտք է ամօթապարտ անեմ իմ թշնամիներին,
պէտք է մերժեմ ձեզ այնպէս, ինչպէս դուք մերժեցիք ինձ..:

Ստեփան. Իրաւունք ունի այսպիս ասելու, տիկին..:

Նատալիա. Իհարկէ ունի, ինչու այնքան աղաչեցինք, պաղա-
տեցինք, ոչ մի կարելիութիւն չցոյց տուեցիք:

Ստեփան. Քս կանացի, ամենափափուկ, ամենաքնքուշ սիրու,
Սօֆիա, չպէտք վրէժխնդիր լինի .. թող այդ կիբը, լոկ կըքի հա-
մար թանկ է զոհել մեր ապագայ սիրոյ և գաղափարի վրայ հիմնուե-
լիք կեանքը... կիբը կը մարի, բայց վնասը անդարմանելի կը մնայ..:

Սօֆիա, (կտրուկ եւ շտապով) Ո՞չ, իմ սիրու աւելի խիստ է և իմ կիբը, հրաբուխի պէս, մարել չգիտէ... կարծում եմ, այս խօսքից յետոյ, ել չեք ստորացնի ձեզ...:

Ստեփան. Բայց գոնէ քո սրաի դգացման լսիր... քնի մէջ, մէջընդմէջ, իմ անունս էիր արտարերում, ո՞հ, այդ ժամանակ հոգին չգիտէ կեղծել, քնի մէջ խոստավանանք՝ հոգու հայելին է... ահա Նապալիան...:

Սօֆիա. (Յաղթահարտում, բայց էլի՛ ճանապարհ գտնում ըստէաբար) Իրաւ է. Նատալիա... (Նատալիան չի պատասխանում) Եթէ ճշմարիտ ել լինի, պարոն, ձեզ անմիտիթար թողնելը, ցաւով ձեր կեանքը մաշեցնելը ինձ աւելի քաղցր են քան այդ սէրը յագեցնելը...: (Միջին դռնից մտնում է Բաղդանիչը, որ ընդուզ եւ կենաւրախ կերպով բարձում է ամենքին, յետոյ զգալի տարիանքով սեղմում է օրիորդի ծեռքը, յետոյ՝ Նատալիայի և Ստեփանի ծեռք):

Սօֆիա. (Ստեփանին) Ահա այսպէս... մեծարտուիւ պարոնը ինձ է սպասում...:

Ստեփան. (առանձին) Էլի միենոյն Բաղդանիչը... ախար ո՞վ է այս ծերը...: (Նատալիային՝ կիսալոր ճայնով եւ ծեռքի նշանով) Միւդա, պաժալույտէ: (զնում են նոյն դռնով):

4

ՍՕՓԻԱ, ԲԱՂԴԱՆԻՉ

Բաղդանիչ. Պատրաստուեցէք շուտով, Սօֆիա, այս երեկուայ դնացքով մեկնելու ենք Թիֆլիսից, իսկ այստեղից ճիշտ հիմա, որովհետեւ վակդարձում ապրանքներ պէտք է յանձնեմ երկաթուղուն..:

Սօֆիա. (դժուար կացութեան մէջ զգալով իրան) Պարոն, չէիր կարող արդեօք մի օրով յետաձգել... ես անպատրաստ եմ դեռ... մէկուն մի բան կը սպասուիրէի, բարեկամներիս «մ՞նաք բարով» կասէի... միւսից վտառ ետ կը վերցնէի...:

Բաղդանիչ. Մի գործ որ աջողւում է, շատ վատ է յետաձգել... Մոսկուայից նամակով այդ բաներ կը կարգադրէք և բարեկամներից նեղողութիւն կը խնդրէք... չնչին բաներ են դրանք. ձեր փողն էլ, բարեկամն էլ... ես եմ այսուհետեւ... շտապենք, զմւակս և մեր ճանապարհից ետ չկենանք: Ահա, թէ ձեզ ինչ զարդեր եմ ըերել... (Թաշկինակի ծայրի կապը արձակում է:)

Սօֆիա. Մատանի և գինու... իսկ որ ձեր խօսք և ձեր գործ համապատասխան են միմևանց... իմ բաղդը, նշանակում է, այս անդամ ինձ չէ խարած որ ինձ ձեր խնամքին, բարեսրութեան յանձնեց... մատանին՝ լաւ, բայց գինու չեմ դնում.:

Բաղդանիչ. Գինուն էլ պետք է դնէք, ձեր հագուստներն էլ պէտք է փոխենք... որպէսզի Մոսկովայում առանձին շքով երեաք և հաճելի ու ակնածելի տպաւորութիւն թողնէք... դուք այնուեղ, մեր շրջանում կը ներկայանաք որպէս մեր մստաւոր ազգականուհիներից մին... (մատանին սկսում է դնել Սօֆիայի մատը) այդպէս եմ ես արժան դատում.:

Սօֆիա. (ուզելով մատանին նրանից առնել) Բայց... ամաչեցնում էք դուք ինձ... հօ ես կարող եմ անցկացնել.:

Բարբանիչ. (մատանին անցկացնելով) Ես արդէն բաւականութիւն եմ զգում այսպիսի յարդանքներ իգական սեռին մատուցանելուց... ես դէլիկատնի, սրբիլինի մի մարդ եմ... ես եղել եմ Պարիսում, Վէնենայում... այսպէս է ներկայ լուսաւոր ժամանակի սովորութիւն... (Բաղդանիչը մատանուց յետոյ գինուն է մտցնում.)

Սօֆիա. (Ժպտալով եւ ծախ այտը կծկեցնելով) Ա՛խ ականջս, ականջս ցաւացնում էք...:

Բաղդանիչ. (մերթ ընդ մերթ, եթր թէ պատահմամբ, ձեռքը զիացնելով նրա այտին) Ահա, ահա, շատ գնաց, քիչ մնաց... (զինտը մտցնում է:) Ա՛յ, Պարիսի սալօնի պրէնսէս դառաք, այժմ կարող են ձեզ վրայ հիանալ կոմսեր, մարկիզներ... (զմայլմամբ զիտելսաց յետոյ ծխ, Բաղդանիչը երկու ձեռքով ընուում է նրա զլուկը եւ համբուրում է ամոր. Սօֆիան այս անականկալի վրա զարմանում եւ ետ է քաշում:) Ա՛խ, ներողութիւն, չկարողացայ բռնել սրտիս եռանդը...: (Նատալիային, որ դուրը բաց է անում եւ ներս մտնում:) Տիկին, օրիորդի բաղդից բուխտական եկաւ, փողերս տուեց, և ահա ճանապարհ ենք ընկնում:

Նատալիա. Աստուած բարի ճանապարհ տայ ձեզ, պարոն:

Բաղդանիչ. Դէ, օգնեցէք օրիորդին... մինչև որ ես մի կառք կանչեմ:

Սօֆիա. Ես միայն մի սնուուկ կը բերեմ հետո, մնացած իրեղէնները նատալիային կը յանձնեմ... (սնդանի վրայից հաւաքում է զանազան բաները) հազուստեղէններս բերեցէք միւս սենեակից, Նատալիան...:

Նատալիա. շատ բան չկայ անելու, դոյքերը ես յետոյ կը տանեմ...:

Բաղդանիչ. (Ծրճուելով որ նրանք գործի են սկսում.) Ահա
այդպէս գործ կատարելով կը վերջանայ. (Բաղդանիչ գնում է կառը
բերելու:)

Սօֆիա (վագելով նրա հտեհից մինչեւ դուռը.) Պարսն, պա-
րսն, կառքը փողոցի այս կողմի դռան առաջ բերել տուեցեք....

5

ՍՕՓԻԱ, ՆԱՏԱԼԻԱ

(Սօֆիան մնառուկը բաց է անում եւ սեղանի վրայի առար-
կաներից մի քանի բաներ նրա մէջ դնում. Նատալիան եւս միւս
սենեակից հագրաններ բերելով՝ թափ է տալիս եւ ծալում.
Սօֆիան հետզհետէ դանդաղեցնում է իր շարժումները:)

Նատալիա. (արագօրէն իր գործ կատարելով) Քա ինչո՞ւ ես
թոյ շարժում..., տեսնում ես ահա, երկու բոտէ ունիս միայն....

Սօֆիա. (սարսկղով) Եւ խկապէս ինչո՞ւ եմ ես գնում այս
մարդու հետ, այժմ, երբ ես պատուաւար եմ..., ինչ նպատակի հա-
մար... ախ, ինչո՞ւ ես նրան մերժողական պատասխան չտուեցի...
ասենք ես իմ դատողութիւն կորցրել եմ, իսկ դո՞ւք ինչո՞ւ չէք զգու-
շացնում ինձ այդ ծերուկ սարդից, այդ մարդագալից..., այժմ, երբ
դեռ մեր տանն ենք, ինձ ուզում է ուտել, իր տանը լինիմ ինչ
պէտք է անէ...:

Նատալիա. (կանոն առնելով) Էհէ... մի ժամում հազար կերպ
փոփոխում ես... ես պատճառ չեմ լինում, լաւ որ դուսացիր. ահա
մէկ կողմից Ստեփանն է ոտք համբուրում, միւս կողմից Բաղդանիչն
է ձեռդ պազնում, կամենում ես, գնա Ստեփանի ետևից, նա՝ քո
այս յաղթական արդարացումից յետոյ քո ստրուկ կըդառնայ այլիս...
նա դիմեց մինչև անգամ իմ օգնութեան.., կամենում ես, գնա Բաղ-
դանիչի յետևից, ահա վճռական բոտէն է... ինձանից այլես խորհուրդ
մի հարցնիր... թէս իմ կարծիքը ինպատ Բաղդանիչին է...:

Սօֆիա. Ոչ, ոչ այն աղուէսի ետևից կը գնամ, որին, ինչպէս
ասացի, յաւիտեան պիտի ատեմ..., ոչ էլ Բաղդանիչին ինձ կըծախեմ,
որ դէպի անկման խորխորասն ինձ առաջնորդէ... ես չըմտածեցի,
շմանածեցի նրա խստացած զեղիս և շուայտ կեանքի հակտուակ կող-
մի մասին, այն կեանքը որի մէջ նա ինձ պիտի գնէ, զուարձալի
հաճելի և ճոխ կը լինի ինձ համար, քանի երիտասարդ եմ... բայց
երբ հետզհետէ կը կորցնեմ երիտասարդութիւնս, կայտառութիւնս,
հետզհետէ ինձ գգուողներ պիտի փոփոխուեն և իջնեն մինչև

ստորին դասակարգեր, մինչև ստորին բարքի տէր մարդիկ... ու եթէ մի օր այն ողորմելի, ստորաքարչ էակներից մինի պէս էլ զինեմ, անպատճառ, մենակ պիտի տեսնեմ ինձ... և իմ անցած անառակութիւնները յիշելով՝ հոգեկան խաղաղութիւնից պիտի զրկեմ ինձ... ոչ, ոչ, մինջև այսօր վարած կեանքից դուրս չեմ գայ, այս կեանքն նախընտրելի, այս կեանքն է անզղալի և բարեխառն իր ամրող տեականութեան մէջ... վերջին վճիռս է ահա, և ոչինչ փոփոխամտութիւն չեմ ունենայ թէ մէկի և թէ միւսի մասին այլես. օգնեցէք ինձ խնդրեմ, այս առարկաները նորից իրենց տեղերը գնելու.

(Սկսում առարկաները եռանդով մնտուկից հանել եւ նորից սեղանի վրայ դարսել: Նատալիան շուարածի պէս՝ անզործ կենում է: Մտնում է Մտեփան երկչուն դէմքով:)

Սօֆիա. (կամաց նատալիային) Հեռացըէք գրան և պատուիրեցէք որ միւս անգամ չգայ այստեղ: (Սօֆիան զնում է կողմնակի սենեակը. Նատալիան սիրու չանելով Սօֆիայի պատը ուերը բժշկին հաղորդելով՝ ինքն եւս զնում է Սօֆիայի մօտ. Մտեփան, խորապէս խոցուած, սենեակի մէջտեղուած սպասում է. Ալէքսանդրան դիտ մ' է նրան մէջտեղի դռնից եւ ապա ներս է յառաջանում:)

6

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ, ՄՏԵՓԱՆ

Ալեքսանդրա. (փշրած ապակիները տեսնելով) Սա էլ գեր. նատուն դատարկի գործ... (Մտեփանին ցաւու եւ ցաւկու) Ինչ տխուը տեսիլ բացւում է առաջն... լաւ էր ինձ մեռնել քան խարուած տեսել... այս ինչ չնորհ է, որ ցոյց ես տալիս, Մտեփան:

Մտեփան. (ցամեալից) Եյս ինչ կատակերգութիւն էր, Ալեքսանդրա... չէ որ ես Սօփիային անպակեշտ, անհաւատարիմ, ցոփացած ճանաչելով՝ ձգեցի և նշանուեցի ձեզ հետ, ձեզ պարկեշտ և առաքինի կարծելով, ինչո՞ւ այժմ ձեր կեանքի վարագոյրները հակառակ տեսարաններ են խենա բերում: (Հանդիսատեսը տեսնում է Սօփիայի զլուխը կողմնակի սենեակի դռան միջում, որ ականջ է դնում:)

Ալեքսանդրա. (զիջելով ըիչ) Ինչ վարագոյր... ամօթ չէ քո վեհանձնութեան որ մի Ալեքսանդրի և մի խենթի խօսքով ինձ ան-

պարկեցու ես անուանում... էլի անպարկեցու նա է, և պարկեցոք
ես, ես...:

Ստեփան. Ուրեմն դուք Վերա չեք դնացած,, Սօվիային, իմ
աշքից զցելու համար, ճեր ծառայի միջոցով չեք արատաւորած, և,
որպէս թէ մի անծանօթ անձի կողմից, նրա դէմ ինձ նամակ չեք
ուղարկած, (մի նամակ նրա աշքին մօտեցնելով) և այս սիլա-
տումն էլ դուք չեք գրած... (կըքոտ) այն, սա ձեր գիրը չէ, ձեր
գիրը չէ... ու եթէ սա ձեր գիրն է, համեմատենք ձեր այն գրերի
հետ որ ինձ մօտ են, եթէ ձեր գիրն է, նշանակում է մնացած բա-
ները ճիշտ են... և գեռ շատ բաներ...:

Ալեքսանդրա. (տարսկուտում եւ կամաց լաց է լինում)
Պէտք խոստովանեմ, խոստովանութիւն միայն կը քառէ յանցանք...
այն, իմն է այդ գիրը, և իմ հասակակիցներից ով չէ արած այդպի-
սի երեխայամութիւն... միւս նամակն էլ իմ ձեռքով էր ուղար-
կուած, դա էլ քո սիրու համար եմ արած, ահ, սէրը կուրացնում է
մարդու... Աստուած, Երկինք, Աւետարան, եղածն այս է, մնացած
քաները շինծու են... ես Ալեքսանդրի հետ քաղաքի մօտաւոր տեղերն
եմ ման եկած, օր ցերեկով. հեռու տեղ երեկոյ կամ գիշեր ոչ
մի ժամարակ...:

ՆՐԱՆՔ ԵՒ ՆՈՒՆՔ

Նունի. Ինչու ես լաց լինում, Ալեքսանդրա, ով է քեզ լացացը-
րել, գոկառը... տես, դնկառը, ամենու հետ չէ կարելի մէկ տեսակ
վարուել. դուք մէկու հետ նշանուեցիք և բաց թողեցիք, այժմ իմ
աղջկան էլ ուղում էք այնպէս անել... հազար սուզիա, կօնսիստո-
րիս կըքաշեմ, տանիմ ձեզ. պաշտչուել, նշանուել և ապա խար-
դախի թղթերի և վայրահաջութիւնների պատճառով թողնել, հեռա-
նալ՝ թանկ կը նստի ձեզ... պէտք է իմանաք թէ նունէն ինչ ծա-
զիկն է...:

Ստեփան. Ամօթէ, և ձեր զաւակի պատուին համար անվայել՝
մէջտեղ բերել այդ կարգի ներքին խնդիրներ...:

Նունի. (աւելի բոցավառուելով) Բայ մուֆտա * է... ձեր
հաճոյքի առարկան է (մասով ցուցնելով աղջկան) սա... նրա
մայը ձեզ ւառ կը խելօքացնի:

Ստեփան. (իսրտելով) «Դուք հին հայեացըով եք այդ հարցին նայում և ոչ կուլտուրական սովորութեամբ»:

Նունի. (երեսը ծամածուելով) Կուլտուրական, կուլտուրական... տիկինը ձեզ մի լու «կուլտուրական» կը սովորացնի:

Ալեքսանդրա. (մօղը) Այս ամօթ է, ամօթ, գոկտորը էլի քո փեսան է. նրա անորոշ վարմունքը դեռ չի նշանակում թէ նա հրաժարուել է ինձանից. (Նունին, սրտում յոյսի մի սիւն զգալով, ապակիների կտորներն է հաւաքում: Ալէքսանդրան դէսի Ստեփանն է դառնում:) միթէ կարող ես ուրանու այն ջերմ գրոշմներ, դաւաճանել այն խոսառուներ, թէ սիրտգ, բացի ինձանից, չպիտի բարախսէր ուրիշ կանացի էալի...

Ստեփան. (ինքն իրան) Արդէն բարախում է:

Ալեքսանդրա. Կարո՞ղ ես մի այդպիսի էակի արտաքսել քո սրտից, առանց դժալու, թէ նրան կերանքի դժոխին կը մատնես ուղղակի, սիրակակիծ ամուսինների ամենաարգահատելին կըդարձնես...

Ստեփան. (առանձին) «Իրանից յուզիչ ցաւերից եմ սիրտը չէ զգածուած:

Ալեքսանդրա. Սակայն ինչ պարզամտութիւնն. . . կը գայ այժմ նա, Սօֆիան, և դու ինձ «գնա բարով» կասես անպատճառ... ինձ մի ճանապարհ կը մնայ միայն, դիմել անպատկառ միջացների.

Ստեփան. (ինքն իրեն) Կարծես, շարժւում է սիրտ, թէ անմեղադրելի է և բնութեան այս զաւակը. . .

Ալեքսանդրա. Կախուել քո վզով և շթոյլ տալ որ նա սիրանայ քեզ, իմ փեսացուիս, որի գրկում միայն կը լինեմ ես... (կախուում է նրա վզով, նունին նայում է լրամատիզմին սրտայոյզ երեւյթով:)

Ստեփան. (ըսնելով նրա ձեռքից եւ հանգստացնելով) Այս, ես ձերն կը լինեմ և դուք իմ գրկում կը լինիք. . .

Ալեքսանդրա. (նոյն դրութեան մէջ) Կամ՝ զիմել ծայրայեղ միջոցների... և իմ անձն էլ արդէն ծայրայեղ դրութեան մէջ. . .

Ստեփան. (նոյն դրութեան մէջ դողալով) Այս, այս, իմ. կը լինէք. . . տեղիք չեմ տայ ծայրայեղութեան յուսահատ փորձերի...:

Ալեքսանդրա. «Իէ, եթէ ուղիղ է, թեանցուկ դուրս առաջնորդիր ինձ և առաջն առ թէ չէ, կը թունաւորեն ինձ, կըպատեմ սիրտս դաշոյնով... մատանին նրան ընծայիր, եթէ... մի խորտակիր սիրտս, մի մորթիր ինձ. . . (Վրայ է հասնում Բաղդանիչը:)

Բաղդանիչ. (հեղաքարոյ դէմքով) Պատրաստի կառք չկար. ստիպուեցայ մինչև նըսանեան հրապարակ գնալ: (Կողմնակի սեն-

հանկից երևում է Սօֆիան. Ստեփան Ալեքսանդրայի եւ Նուռնելի ուղեկցութեամբ լուր է զնում:)

ՍՕՓԻԱ, ԲԱՂԴԱՆԻՀ

Բաղդանիշ. (Չտապով) Այս արկոն է որ մեզ հետ պէտք է տանենք... (վերցնում է տանելու) օհօ, ինչ ծանր է, որ կողմից պէտք է անցնենք...

Սօֆիա. Մի՛ տանիք... ես Բաքու եմ գնալու, հայրս հիւանդ է... տելեգրամ ստացայ...: (Բաղդանիշի ձեռ թուլանալով՝ արկողը զետին է ընկնում ամուր:)

Բաղդանիշ. Բաս իմ գործը... ես առանց դաստիարակչուհու գնամ... ոչ օրէնք, ոչ ազնիւ խօսք չեն ների ձեզ այսպիսի զանցառութիւն... ինչո՞ւ պայմանաւորուեցիք, եթէ գիտէիք...:

Սօֆիա. Ես ո՞ր տեղից գիտէի...:

Բաղդանիշ. Ես չեմ կարող թոյլ տալ այդ... ձեր սեփականի հետ իմ անձնականն էլ հաշուի բերեցէք, և արդարութեամբ դատեցէք, գուցէ նա աւելի է կարեոր...:

Սօֆիա. Բայց ձեզ ինչ վնաս կըլինի... ինչո՞ւ էք անպատճառ ինձ կամենում. ես հօ դաստիարակչուհի չեմ... գնացէք խմբագիրներին, իսկոյն կը տան ձեզ մի հասցէ... հօ դօրով ինձ տանելու չէք... (Չեռքը տանում է ականջ, զինուն հանելու:)

Բաղդանիշ. Պնասն այնչափ կըլինի որ ես մի ժամշեմ կարող ուշանալ և առաջին հանդիպողին հետս տռնել, տանել... եթէ զուք յանձնառու չինէիք, ես մի ուրիշ գործին յարմար անձնաւորութիւն կը վարձէի... ահա այսպիսի նեզ վիճակի մէջ էք դնում ինձ... թողէք, ձեր Աստուած սիրէք այդ Բաքու գնալու միոք, մենք միասին կազօթենք ձեր հօր համար... թողէք, ձեր հոգին սիրէք...:

Սօֆիա. (Չիշխըցնում է կողմնակի սենեակի դուռիւ Նատալիան զալիս է:) Այս պարոնի փողը, Նատալիա, սրանց հետ (յանձնում է մատունին եւ զինտ) իրան վերադարձէք և խնդրեցէք որ ոչինչ վէճ չսկսէ մեզ հետ... (Սօֆիան կամաց փախչում է միւս սենեակը եւ դուռը ծածկում:)

ՆԱՏԱԼԻԱ, ԲԱՂԴԱՆԻՀ

Բաղդանիչ. (ցաւում է եւ զլուխը շարժում) Անհասկանալի անտառնելիք բան է ինձ նման մի մարդու համար որ իմ խօսքերին հաւատարիմ է եղած, որ իր փողը, մինչև անգամ իր կեանքը վրտանդի մէջ է դրած ու իր թքածը չէ լգած... մի ուամիկ անձի էլ մարդը...:

Նատալիա. Ոչինչ, նա ջանէլ է, նա ինչ է իմանում խօսքի յարդը, (Պօրտմօնէն դուրս է հանում զրալանից) հաւատացէք, իմ սիրու ձեզանից աւելի կոտրուեց... ամօթից չեի ուզում ձեզ ներկայանալ...:

Բաղդանիչ. (ամուր) Եւ հարկաւոր է որ այդպիշու էլ լինիք, դուք ինքներդ երաշխաւորեցիք համարեա, և երաշխաւորը իրաւունք ունի ճնշում բանեցնելու նրա վրա, ում երաշխաւորել է. զնացէք, պարտաւորեցրէք իրան իր յանձն առած պաշտօնին, ես ձեզանից եմ պահանջում նրան, դա իմ իրաւունքն է, և ես իմ իրաւունքը չեմ կորցնի...:

Նատալիա. (աշօը քիչ ծոելով) Է՞ս, պարոն, ես ե՞րբ եմ երաշխաւորել, ես ձեզ մի գործ ուզեցի տեսնել, գլուխ չեկաւ... իս ինչ ճնշում կարող եմ բանեցնել...:

Բաղդանիչ. (ցած ծայնով եւ ողոքանքի ձեւերով) Լաւ, եթէ ոչ իրրե պարտք, գոնէ իրրե բարիք, Փափկացրէք նրա սիրտ, Փափկացրէք փոխեցէք իր դիտաւորութիւնը...:

Նատալիա, (պատրաստուելով փողն եւ իրերը վերադարձնել) Բարիք... բայց չի համոզուի... (կատակելով) ուզում էք, ինձ տարէք, ես նրանից սիրուն եմ... այ, այդ կըլինի ահա... (փողն եւ իրերը մօտեցնում նրան):

Բաղդանիչ. (ձեռքով նրա առաջ բռնիլով) Պահեցէք..., ես իմ տուած բան ետ չեմ վերցնի... ես նրա տարեկան ոռնիկը կանխիկ կը տամ.., այդ փողը ձեզ համար գործածեցէք. մի դարեացու, կամ մի լաւ բան առէք ձեզ... (Նատալիան երկմտած եւ թոյլ կերպով փողն եւ իրերը դէպի նա է քշում. Բաղդանիչը նկատում է նրա կամքի թուլացում:) միայն ինձ, իմ զաւակի դաստիարակութեան համար, մի ազնւութիւն արէք. ձեր հօր ու մօր

հոգու համար, խրանտեցէք նրան... նդավուած լինիմ ես, եթէ ձեր երախտիք մոռանամ:

Նատալիա. (զշտանալով) “Եէ նրան էլ հերն անիծած, ձեր գործին էլ, մեռելներին ինչու էք խառնում այս կեղաստ խնդրի մէջ... ձեր գիրքին վայելուչ լեզուով ինչու չք խօսում...”

Բաղդանիչ. Թողեցիք որ, սղորմած հոգի, ես վայելուչ լեզու բանեցնէի... իմ օրում այսպիսի գործ ես տեսել էի... մնում ենք հարցը, գնում եմ, գործերս տեսնում եմ, գալիս եմ այսակղ, ինձ ուղարկում էք կառքի, յետոյ տառւմ էք «չեղաւ...», կարծես մի զուարձալի ֆարս էք խաղում Բաղդանիչի նետ... այդչափ բան էլ չեն անի... (Ստեփան պատշգամում կեցած՝ դրուը կիսարաց է անում եւ ներս նայում. Նրա զլուխը տեսնում է Նատալիան և ցատկում է ծածկելու. Ստեփան, դեռ դրուը չծածկած, արդէն ներս է լինում, Նատալիան, առանց սպասելու, ննջարանն է ծլկում, ետեւիցն էլ Բաղդանիչը):

10

ՍՏԵՓԱՆ, ՅԵՑՈՅ, ՍՕԳԻԸ

Ստեփան. Վնասակար մի գործողութիւն է կատարւում այս տեղ, բայց չգիտեմ ինչ է... թոշւնը, երեխ, կը փախցնենք շուտով, եթէ վերջին զիջում և նուասառութիւն չոյց տանք նրան... (Ապանական երեւոյթով հանդէս եկող Սօգիան ընթշանում է, հանդիպելով միրոյ բռցերի մէջ՝ այրուող Ստեփանին. այս վիճակը տեսում է 2-3 ըոտէ. ապա Ստեփան համարձակուում է խօսել:) Սյա անգամ, իմ միակ թաղուհի, խօսելու չեմ եկած քեզ մօտ, այլ պարզապէս իմ մեղայականը տալու... դռւ գիտես...:

Սօգիա. (վեհօրէն) Ես ոչինչ մեղայակական չունիմ ընդունելու, ընդունելով ձեր մեղայականը՝ միթէ ձեր բնաւորութիւնը պէտք է դուք փոխէք:

Ստեփան. Դու, դռւ պէտք է փոխես և ոչ ես... քո խարակտերը կը բարձրացնէ, կազնուացնէ ինձ, քո անձնաւորութիւնն կը լինի իմ կեանքի փարոսը, իմ կեանքի դեկալիարը. այն, այն...:

Սօգիա. Բնաւորութիւնը չի փոփուի, եթէ բնաւորութիւնն փոխուիլու ընդունակ լինէք, ամուսինների մէջ անհամաձայննութիւններ չեն լինի...:

Ստեփան. (սիրտ առնելով) Սյդ հօ իմ գիտցած բանն է, Սօգիա, մենք բժիշկներս միաժամանակ հոգեբան ենք... ոչ միայն ան-

համաների՝ այլ նոյն խոկ ազգերի բնաւորութիւններ ազգում են միամեանց զբայց, այն ամսւսիններ, որտնք անհաշու են ապրում, թէ կը թութեամբ և թէ ամեն կողմից հեռու են լինում իրարից, նրանք մեղ չափ մօտ չեն իրար, թէև նրանց բնաւորութիւններն ել մասսամբ ներգործում են իրար վրայ... երբ լաւ և վաս բնաւորութիւններ համազօր են լինում, հակազդում են փոխադարձաբար, երբ մին զօրեղ և միւսն թող է լինում, թողն միշտ ենթարկում է զօրեղին, ինչպէս այժմ խմ քո բնաւորութեան է ենթարկուում:

Սօֆիա. Դրանք քարոզներ են, զրանք փաստեր չեն, և այդ քարոզներ ձեզ հարգաւոր են այժմ, և աւելի նրա համար՝ որ դէպի Ալեքսանդրան ես լրսւած էք...:

Ստեփան. (Ճի հարուած ստանալով.) Այս, նրանից էլ ես լրսւած եմ, կամ նու է ինձանից լրսւած, արդէն պէտք է խմանայիր և ահա խմացած ես... և սակայն ես փաստերով եմ խօսում, ևս սիրում եմ քեզ, հաւանում եմ քեզ, ես աշխատում եմ ուրեմն քեզ պէս լինել... ես ընկճռում եմ այս վայրկենիս ոչ թէ քո գեղեցկութիւնից, այլ աւելի՝ քո բնաւորութիւնից...

Սօֆիա. Այժմ կորցրել էք դուք ձեղ... այժմեան հաւասարիս ցուումները չեն սակաւ ասկազայ արամագրութիւններին... հողեկան մի խաղաղ ժամանակ եկեք ինձ հաւատք ներշնչելու...:

Ստեփան. Սօֆիա, իմ խօսքը այս է այժմ էվ, յետոյ՝ էլ... մի տանջիր ինձ... ծնկաչոք երկրպագնում եմ.. (Ճի ոտով չորում է) իմ սիրար, իմ սիրոյ կաթսան պայթելու մօտ է... մի «այս» ասան, մի կաթիլ ջուր ձգիր իմ սրտի կրակի վրայ և փրկիր ինձ...:

Սօֆիա. (Համարկ վսեմութիւն հոգի դառնալով) Ա'իս, այդ աստիճանին է հասել քո սէրը, այդ չափ սիրում ես դու ինձ, այդ չափ պապակնում, այլումում ես դու ինձ դէմ..:

(Երկուստեր զգացման ցնցումով մղուում, կպչամ, զրբկախտնուու և ընկճռում են մահճակալի վրայ, երեսում է Ալեքսանդրան՝ կանացի ամենաբարձր կատաղութեան ստած, և յասում է աշըը նրանց թմրած վիճակի վրայ:)

ՆՐԱՆՔ ԵՒ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ

Ալեքսանդրա. Այս կերպով վերջացրիք հարցը, ձեղ համար՝ այս, ինձ համար՝ խաւար, ձեղ համար՝ պատիւ, ինձ համար՝ ամօթ...

(Սօֆիան եւ Ստեփան վեր են կենում, բայց մէկ-մէկոց չեն հեռանում):

Սօֆիա. Հաբը վերջացած էր արգէն, բայց դուք կամեցաք փշացնել մեր փարզագոյն իրէալն և հասցնել ինձ այն փառքին, որին ահա դուք արժանացաք....

Ստեփան. (ղէպի Սօֆիան) Համամիտ չեմ, քեզ, նա իր տեմպերիմենտով գործում էր իր անձի համար այն, ինչ որ ամենք իրենց տեմպերմենտներով անում են իրենց համար... առելի խմասութիւն այն կրլինի որ թշնամութիւնը չսուցանենք մեր սրտի մէջ, և այդ վայրենի ու վնասաբեր գգացումը՝ փոխարինենք խաղաղասիրաթեան մարդավայել գգացումով... (իրկուսին) համբուրեցէք ուրեմն, և ծիծաղեցէք այս անցուծ-դարձածների վրայ, որպէս մարդկացին բնական ակարութիւնների վրայ... ձեզանից մին ինձ կի՞ ոլէտք է լիլինէր, և այդպէս էլ եղաւ ահա...:

Ալեքսանդրա. (ոճրագործի երեւոյթով) Ձեր իմաստուն խրատները, հագուագիւտ պարսն, չեն կարի սրտից կաթկվող արխմներ... մի այլ դեղ է նրան հարկաւոր. վրէժ, վրէժ... Թող այս անցքը մի այն ինձ համար չինի գրամա...: (Ալեքսանդրան, մի ծեռնածուի սրագութեամբ, ծեռն ծոցն է տանում, մի շիշ դուրս բերում եւ թափում Սօֆիայի ղէմքի վրայ, որից մի երկու կաթիլ ես ընկնում է Ստեփանի երեսի վրայ. Սօֆիան աղիողորմ աղաղակ է արձակում. Ալեքսանդրան հալում է սոտերի աէս. Ստեփան մէկ կողմից իր երեսն է զնուում, միւս կողմից Սօֆիային իր զիրկն է առնում, ցաւազին բացականչութիւններով...) Նատալիան եւ Բաղդամիշչն ննջարանից, Մոնէն, Սրբուհին եւ Երանուհին պատզամքից ներս են խուժում սրտապատառ. նախ ընդհանուր խառնաշփոթութիւններ եւ զոռում զոշումներ... Մոնէն յետոյ կտրում է ծայնը... իսկ մնացածները սկսում են լալ, մղկտալ եւ շօշափել վիրատրուածների վէրքերը, Սրբուհին՝ իր եղքօր վէրքերը, Երանուհին՝ իր եղքօր եւ Սօֆիայի վէրքերը, Նատալիան եւ Բաղդամիշչ Սօֆիայի վէրքերը...)

Ստեփան. (նուաղած) Այրիշ հեղուկ, հեղուկ... իւղ, իւղ, իւղ հասցըք...: (Երանուհին սրտմաշ իրենց ընակարանն է վազում. Նատալիան ննջարանն է մտնում շիփոթուած. Բաղդամիշչ, մի ինչ որ անորոշ յիշոցներով, մերթ սենեակի մէջ իր է փնտրում մերթ շուարած կանգ է առնում, մերթ ղէպի Սօֆիան է դառնում զորովայի տեսրով):

(Վարագոյր)

ՎԵՐ ԶԱԲԱՆ

Գրքիս յառաջաբանի մէջ ես յոյս էի յայտնել ապա-
տել իմ երկերը... սնոտի յնիս, այս դրաման ես ձեռք
բերեցին. ոչ մի խօսք, ոչ մի միջոց չի զսպում այն դրա-
կան որսորդներին, այս գրական կօշկակարներին, ինձ
նկատմամբ անփոփոխ գործադրում են այն ծրագիրը որ
կազմել են 6—7 տարի առաջ. այն է՝ տեսնել անպատ-
ճառ իմ հեղինակութիւններ տպագրութիւնից առաջ,
արտադրել, ընդմիշտ օգտուելու համար, կամ՝ այնպէս
կարդալ, վերցնել նրանից բոլոր նորութիւններ, թարմու-
ախններ, օրիգինալ մտքեր, գաղափարներ, լեզուական
և գեղարուեստական գեղեցկեցիններ... և, օգտուելով
իրենց դիւրութիւններից, հրատարակել այդ բոլորը ին-
ձանից առաջ և կարելին անել, որպէսզի ես չկարողա-
նամ հրատարակել իմ աշխատութիւնները:

Ովքե՞ր են այս սոսկալի արարք կատարողներ.—Ժո-
ղովրդեան մոլեզին բարեկամները, ամենաթեթև յան-
ցանքներից վրդովուղները, հասարակութեան կրթու-
թեան աշխատողները և ուրիշ շատ շատեր:

Բողոքում եմ իլուր ընդհանրութեան այս բարբարո-
սական գործերի դէմ: *)

Զետեղելով այստեղ այս վերջաբանը՝ ես գիտաւորու-
թիւն չունիմ ոչոքի անձնականը շօշափել յայտնապէս,

*) Այս վերջաբանը, 8 նոյեմ. 1903 թուակիր շրջաբերականով, հաղորդեցի
Թիֆլիսի, Ելազորի և Պոլսի խմբագրութիւններին, և ինդրեցի Հրատարակել:

և զրան ոչ ախորժակ և ոչ ժամանակ ունիմ, սրանով հս ստիպուած եմ առաջն առնել զրական այս զգուելի զեղծումին և հաւանական խիստ ու վնասակար ծայրացեղութիւններին, եթէ երբէք մի ուրիշ անդամ ես դժբաղրազզութիւն կունենամ իմ կարինէտից զուրս հանել որևէ զրուած:

Ժամանակ է որ այդ պարոնները զիտենան թէ՝ եթէ, իբրև զրոգներ, քննադատներ, խմբագիրներ, ովկորուելու, ախորժակ զրգուելու, կարեոր կէտերը սեփականացնելու, նիւթերի զանազան աղրիւըներ, ուղղութիւններ նշմարելու... ամբողջովին վերցնելու համար, անհրաժեշտ են համարում հաւաքուել մի տան մէջ և կարդալ ուրիշների անտիպ գործեր,*) ապա և պարտաւոր են հասկանալ որ դրանք նրանց երկունքների ծնունդն են, որոնց համար հազարների կորուստից աւելի թանկ արժեն զուցէ սաղմային վիճակի մէջ յափշտակութիւններ.... Եթէ զրելու ընդունակ են զգում իրենց և անբաւական են համարում իրենց զրական, զեղարուեստական ծանօթութիւններ, ու աշք ունին մէկու զրուածների վրայ, թող սպասեն մինչև որ տպագրուեն նրանք կամ թող կարդան ուրիշ տպագրուածներ, եթէ թեմափ կարիք ունին, թող կեանքը պըպտեն որ անսպառ նիւթեր կարող է ընծայել իրենց, կեանքը ինքնին նիւթ է ամբողջովին, և մարդը կարող է տաս բոպէում բազմաթիւ խնդիրներ և գործեր վերցնել նրանից, օրինակ, «Հարուստների թղէալ», «Հրզեն ձզողը», «Հայրենիք», «Պարտը» «Ենտրիգանտ», «Կամք և իղէալ» «Թափառական օրիորդ», «Համքեարների դատաստան», Հողային վէճ», «Հարուստի խնջոյք», «Աղքատ հիւանդ», «Հիւանդի բարոյական դեղ»,

*) Այս բանազողութիւնների, կաղապաւուների մի մասն, ինչ որ ես զգացած եմ, ինչ որ ափաշկարայ տեսած եմ, իմ յուշատերի մէջ արձանագրած եմ սկզբից մինչև վերջ:

«Մաղմի սպանութիւն», «Զգուած երեխան», «Կուսակցական հերոսը», «Վաշխառուի բողոք», «Որդենութեան թշնամին» «Արդար դատաւոր» «Օրինազանց դատաւոր» «Դործարանի աղմկարարը», «Լըջամիտ պարոնը», «Հոսոսն և հէնցէնցը», «Մըցողներ», «Ճանչուող կինը», «Գրական խենթը», «Հազարներ զետերի մէջ» «Ոճրագործութեան արհաւիլը», «Մեր քաղաքադէտ խմբագիր»...: Այս, մարդը, եթէ ինքնուրոյն միտք ունի, կարող է քիչ ժամանակում այսպիսի շատ նիւթեր գտնել, ձեակերպել և մի իմաստ ներշնչել նրանց:

Այս մերկացումներից յետոյ սա ևս նորից ասեմ այդ ճարպիկ *intrigant*-ներին և առհասարակ ընթերթողներին որ իմ աշխատանքները չեն կատարում յատկապէս այս կամ այն հասարակութեան համար, այլ՝ ամբողջ ազգի համար, կամ ինձ համար:

Այստեղ այդ աշխատանքների պատրաստութեան առթիւ յիշատակելու պարտաւոր եմ շուետացի Mr. Larson-ի, անունը, որի հետ հայերէնից պարապում էի, մանաւանդ Prag-ի *décorateur* Florian Körka-ի անունը, որի հետ ֆրանսերէնից պարապում էի, առանց որի ազնւութեան ես անկարող կը լինէի այս գիրք գրել, նու կամենում էր որ ես վերջացնէի:


ԻՄ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԵՐԻՑ ՏՊԱԳՐՈՒԽԸԾ ԵՆ՝

1. «Փառանձեմ» կոմեդիա 4 արարուածով եւ 6 պատկերով, սպառած (ձրի ոչնչացրած) 1 րուր.

Մամուլի ժակ է «Բանասեղծական մօդէլներ» № 1 20 կ.

3. 1900, Դեկ. 11-ին դրաքննիշից դուրս է եկած և գեռ չէ տպագրուած «Փանոսի դատը», դատարանական մեծ պատկերը, զեղարուեստա-դիտական, օրէնսդիտահրաւագիտական երկ, նոր իր տեսակին մէջ մեզանում, թերես և եւրոպայում, մի գիբը՝ որ ոչ միայն բազմադիմի օգուտներ կարող է ընծայել զանազան դասակարգի ահճանց, այլև կարող է մի փոքր ձեռնարկ լինել ընդհ. օրէնսդիտութիւններ ուսուցաննողների ձեռքում. (սա այն գիրքն է, որի վրայ երեք բարեկամ խմբագրութիւնները կատարեցին միասին այն նշանաւոր շահատակութիւնը:)

Սօֆիայի գինն է $\left\{ \begin{array}{l} 1\frac{1}{2} \text{ ր.} \\ 4 \text{ ֆր.} \\ 1 \text{ արծ.} \end{array} \right.$



Գիւն է թ. 50 դ.

1787-1792

3-47

2013

